



Աճի-սանսկրիտ մայր
լեզվից է բխել, և կրակ,
հուր կնշանակե, կրակի
դիցունի: Եվ թող նա,
պանծայի Աճին, լինի
անշեջ հուր՝ հայության
սրտում վառելու և
բորբոքելու ազատության
սեր, և լինի մեր
վերածնության ֆենիքսը,
թող այրվի, վառվի
հայության սիրտը, իսկ ինչ
որ այրվում է՝ նաև լույս
ունի՝ հավատամք, որ
լուսավոր են լինելու մեր
գալիք օրերը, մեր նոր
կյանքը...

Ա.Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

1962 թ.
4 նոյիսի
Աճի

Fonds BAREYAN Karnig et Nouné
1er Juin 2007


Association A.R.A.M.
3, bd Ararat 13013 MARSEILLE
Tél. 04 91 70 98 93

ARCHIVES A.R.A.M.

3/28
2/12/88
Chiffre papier
2/12/88
supplément

Supplément
27/01/1988
D. Zbure

Association A.R.A.M.
3, bd Ararat 13013 MARSEILLE
Tél. 04 91 70 98 93



ԱՐՏԱՇԵՍ ՎՐՈՒՅՐ
ԱՆԻՈՒՄ



«Ա. Ալեքսանյանի պատկերասրահային հրատարակչական ընկերություն»

ԵՐԵՎԱՆ . 1979

Վրույր, Ա.
 վ 964 **Ա.ճիում.—Եր.: Սովետական գրող, 1979.— 117 էջ, 27
 Գկ.**

Հեղինակը իր մանկության և պատանեկության տարիներին եղել է Ա.ճիում, որտեղ նրա հայրը՝ ճշանակոր դերասան Արամ Վրույրը, Մատի գիտական արշավախմբի հետ տարիներ շարունակ մասնակցել է հնավանդ քաղաքի պեղումներին: Նա վառ տպավորություններով ու չթուլացող հետաքրքրությամբ է պատմում միջնադարյան Հայաստանի այդ հույակերտ քաղաքի և պեղումներ կատարող արշավախմբի մասին:

80100 (246)
 վ 705 (01) 79

79 «Տ»

4902020000

902.6 (C 48)

ԳՄԴ 63.4 (22)

Արտաշես Վրույրը իր մանկության և պատանեկության տարիներին (1901—1917 թթ.) եղել է Ա.Նիում, որտեղ նրա հայրը՝ Աշանավոր դերասան Արամ Վրույրը, Մառի գիտարշավի հետ տարիներ շարունակ մասնակցել է հնավանդ քաղաքի պեղումներին:

Հետագայում ինքը՝ Արտաշես Վրույրը, արդեն երիտասարդ, դառնում է էքսպեդիցիայի խանդավառ աշխատակիցներից մեկը և ակտիվ մասնակցում է Ա.Նիի և շրջապատի վանքերի ու հուշարձանների ուսումնասիրության և նկարահանման գործին:

Պատմական Ա.Նին իր հոյակապ հուշարձաններով, վանքերով ու եկեղեցիներով, բերդերով ու պարիսպներով խորը, անջնջելի տպավորություն է թողել մանուկ Արտաշեսի վրա: Եվ նա իր մանկա-պատանեկան վառ տպավորություններով ու հուշերով, չթուլացող հետաքրքրությամբ, այնպես է պատմում, որ ընթերցողի առաջ ուրվագծվում են հնադարյան քաղաքի կիսակործան շենքերը, բերդերը, պարիսպները, ընդհատակյա ուղիներն ու լաբիրինթոսները, շրջակա ձորերն ու բլուրները և Ա.Նիի ոտքերի տակ հավիտյան թավալվող Ախուրյանը:

Արտաշես Վրույրն իր հուշերում սիրով ու երախտագիտությամբ է նկարագրում գիտարշավի անձնագոհն ու նվիրական աշխատանքը Ա.Նիում, ուր Մառի գլխավորությամբ մասնակցում էին՝ Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարը, Հովսեփ Թրբելին, Թ. Թորամանյանը, Ն. Բունիաթյանը, Տարագրոսը,

Ն. Տոկարսկին, Առն Քալանթարը, Արամ Վրուրը, Գ. Չուբինովը և ուրիշներ:

Հեղինակը թեև չի մտադրվել տալ գիտարշավի մասնակիցների բնութագիրը, բայց պեղումների, նկարահանումների, հավաքույթների և զանազան դեպքերի սեղմ և պատկերավոր նկարագրությունը հնարավորություն է տալիս ընթերցողին պատկերացնել գիտարշավի շատ մասնակիցներին:

Արտաշես Վրուրը ժլատ, բայց այնպիսի բնորոշ գծերով է բնութագրել հատկապես մի քանի շարքային աշխատողների, որոնք ընդմիջտ մնում են ընթերցողի հիշողության մեջ:

Անիում եղել են համարյա ամեն ամսս՝ սկսած 1901 թվականից մինչև 1917-ը, մանկական հասակից մինչև պատանեկություն:

Երբ առիթ է լինում հիշել կամ խոսել Անի քաղաքի մասին, մեկիկ-մեկիկ արթնանում են հիշողությանս մեջ մանկական ու պատանեկան այն քաղցր օրերը, որոնք կապված են եղել ավերակների քաղաքի հետ, որը սնուցել է իմ մեջ ճաշակ, գեղեցիկի զգացողություն:

Անիի գիտարշավի աշխատակիցներն ու մշտաբնակները, որոնք այսպես թե այնպես կապված էին Անիի աշխատանքների, համարվում էին անեցիներ: Ինձ ևս վիճակվեց կրել կրտսեր անեցու պատվավոր անունը: Եվ ահա կյանքի վերջին տարիներին կրտսեր անեցին գրում է իր վտիտ հուշերը ավերակների քաղաքի մասին, որը նվիրական է ամեն մի հայի համար:

Ապրեցի ավերակների քաղաքում, տեսա մեր անցյալի մեծ վարպետների ու հմուտ քարագործների կերտած հազարամյա կյանք ունեցող ծանրահատ պարիսպներն իրենց խրոխտ բուրգերով ու հզոր դարպասներով, կիսակործան տաճարներն ու պալատները, իջևաններն ու կամուրջները և խորհրդավոր այրերը: Տեսա մեր նախնիների մամուսպատ գերեզմանները, գոռնակատամարտերի դաշտերն ու խոր ձորերը: Անցա ստորերկրյա Անիի հավիտենական մթության մեջ խորասուզված նեղ ու լայն անցքերով, տեսա խորախորհուրդ վիշապակիր բուրգերը: Տեսա բլրորը, բլրորը, որոնք դարերի խորքից եկել, հասել են մեզ իրենց բազմալեզու և բազմագիր հիշատակա-

բաններով, որոնք ինչե՛ր տեսան ու լսեցին, ինչե՛ր ապրեցին խաղաղ սրբ-
նուորտի, փոթորիկների և բռնությունների ներքո:


Տեսա գիտուն մարդկանց, որոնք բազմահմուտ գիտնականի ղեկավա-
րությամբ, արևի կիզիչ ճառագայթների տակ, պրպտում ու պեղում էին
պատմական քաղաքի հողաթմբերն ու փլատակների շրջակայքը և դարավոր
հողի շերտերի տակից դուրս հանում մեր նյութական մշակույթի մնացորդ-
ները. վերծանում հիշատակարանների արձանագրություններն ու պատմու-
թյան էջերին հանձնում իրենց աշխատանքի արդյունքները: Տեսա մեծ ճար-
տարապետին իր խորաթափանց ու զննող աչքերով. նա չափագրում, զծա-
գրում էր իր հմուտ ձեռքերով և պրպտումների ու որոնումների աշխարհն
ընկած իր սուր մտքով վերլուծումներ անում և եզրակացություններ հանում
հայ ճարտարապետության հույակապ հուշարձանների մասին: Տեսա ավե-
րակների մեջ օրնիբուն քայլող խանդավառ արվեստագետին իր լուսանկար-
չական գործիքով և անխոնջ նկարչին՝ իր ներկերով ու վրձիկներով: Տեսա
արևակեզ դեմքերով բանվորների, որոնք բահերով ու բրիչներով զինված՝
զգուշորեն աշխատում էին պեղումների վայրերում:

Տարիների ընթացքում ապրեցի այս գեղեցիկ շրջափակում, որն իբրև մի
մեծ դպրոց պատվաստեց իմ մեջ ազնիվ զգացումներ ու վսեմ գաղափարներ:

ԴԵՊԻ ԱՆԻ


Աճի կարելի է գնալ հիմնականում երեք ճանապարհով. առաջին ուղին՝ Լենինական—Աճի, Արգինայի վրայով մոտ 40—45 կիլոմետր. շնայած երկար, բայց ամենահարմար և միակ ճանապարհն է կառքերի համար: Երկրորդ և ամենաքանուկ ուղին՝ Աճի կայարան—Աճի, Խարկով գյուղի վրայով, մոտ 7 կիլոմետր: Դա Աճի այցելողների ամենաքանուկ ճանապարհն է: Աճի կայարանից մինչև Խարկով գյուղը սալի ճամփա կա, սակայն, այնուհետև պետք է իջնել Ախուրյանի խոր ձորը, նավակով անցնել գետի աջ ափը, և ահա այդտեղից ձորի միջով նեղ շավիղը ձգվում է մոտ երեք կիլոմետր մինչև Գլիձոր և սպա փոքրիկ գտիվերը անցնելով՝ Տիգրանի դռնով մըտնում եք Աճի, և ձեր առաջ՝ մի բարձունքի վրա, հանդիպում եք նրբագեղ փոքր տաճարի. դա Տիգրան Հոնենցի սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Երրորդ ուղին՝ Աղին կայարան—Աճի, մոտ 14—15 կիլոմետր, Ղեղան գյուղի վրայով: Այդ ճամփան հարմար է սալի համար, և մեր ընտանիքը, շատ քիչ բացառությամբ, միշտ այդ ճանապարհով էր գնում Աճի: Մոտ կեսօրին հասնելով Աղին կայարանը, գիշերում էինք Աղին գյուղում, և առավոտ կանուխ սալով ճամփա ընկնում դեպի Աճի: Ղեղան գյուղի մոտ կտրելով Ախուրյան գետը՝ անցնում էինք աջ ափը: Ղեղանի մոտ Ախուրյանի հունը բավականին լայն է, սալը ազատ կարողանում է անցնել: Սպա մի փոքր հանգիստ տալով եզներին, շարունակում էինք ճանապարհը... Անցնելով

Արագ գյուղի միջով, մի փոքր հետո մեր առաջ ուրվագծվում էին Աճի քաղաքի հյուսիսային տուֆակերտ պարիսպներն իրենց բազմաթիվ բուրգերով: Ցնծում էր իմ հոգին. այնպիսի ջերմ և մեծ կարոտով նայում էի այդ հզոր ամրություններին, որոնք, քանի մոտենում էինք, այնքան խոշոր և պայծառ տեսք էին ընդունում: Չգիտեմ ինչու, ինձ թվում էր, որ երկար, շատ երկար տարիներ են անցել նախորդ բաժանման օրից և պապակ սրտով նորից տեսնում եմ հոգուս մեջ խմորված այդ նվիրական ավերակ քաղաքը, որի յուրաքանչյուր բեկորը, ասես լեզու առած, խոսում է ինձ հետ: Քաղաքը նամփա էր տալիս մեր սայլին իր հզոր կենտրոնական դարպասից՝ Ավագ դռնից: Եվ սայլի անիվները աղմկելով, Ավագ մուտքի առաջին դարպասով մտնում էին երկշարք պարիսպների նեղ արանքը: Արձագանքում էին պարիսպներն ու բուրգերը խոլ ու խորհրդավոր ձայներով, ասես ողջունում էին մեր մուտքը Աճի:



ԱՆԻԻ

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ



Աճի քաղաքի հյուսիսային ամրությունների հյուսիս-արևմտյան անկյունը ծունկ է տալիս, և պարիսպները այդտեղից ձգվում են մոտ 80 մետր դեպի արևմուտք՝ փակելով Իգաձորի արևելյան կողմը:

Այս պարիսպները Աճին կապում են Իգաձորի հետ մի փոքրիկ դռնով, որը հետագայում շարել են քարե ամուր պատով: Այժմ մուտքը փակող այդ պատը կիսով չափ բանդված է և գոչացած անցքով մի շավիղ տանում է դեպի Իգաձոր:

Աճին շրջապատող չորս ձորերից, այն է՝ Գլիձոր, Ախուրյանի ձոր, Ծաղկոցաձոր և Իգաձոր, ամենափոքրը Իգաձորն է, որը պատկած է քաղաքի հյուսիսային կողմում: Նա ձգվում է արևելքից արևմուտք և զառիվայր իջնում մոտ 400—500 մետր մինչև Ծաղկոցաձոր և միանում նրան:

Իգաձորը գուրկ է բուսականությունից: Թե ինչու է Իգաձոր կոչվում, չգիտեմ: Այնտեղ կան բազմաթիվ մեծ ու փոքր այրեր, որոնց ժամանակին մարդկային ձեռքն է կերտել:

Առնակազմ Ագոն ծանրաբարո մի մարդ էր, ավագը այն երեք եղբայր-

Անրի, որոնք թուրքական վայրագություններից հալածական, լքելով Ալաշ-կերտի գեղատեսիլ հովտի արգավանդ հողերը, տուն, տեղ, գաղթել, եկել էին արևելյան Հայաստան, բնակություն հաստատելով Անի քաղաքի Իգաձորի պատմական այրերում:

Իգաձորի այրերի բնակիչները միայն այդ երեք եղբայրները չէին: Այնտեղ բնակվում էին նաև ատաղձագործ Արամը և Յհանը իրենց ընտանիքներով, նույնպես Ալաշկերտից գաղթած:

Ազոն ամառվա ամիսներին աշխատում էր Անիի պեղումներում որպես բանվոր, իսկ մնացած ամիսներին զբաղվում էր իր տնտեսությամբ:

Կարապետը՝ միջնակ եղբայրը, ծառայում էր ճարտարապետ Թորոս Թորամանյանի մոտ: Իսկ Եսային՝ կրտսերը, Անի քաղաքի սուրհանդակն էր: Նա զգեստավորված էր չերքեզի տարագով, գլխին կրում էր մորթե գլխարկ, ոտքերին բարձրավիզ կոշիկներ, որոնք մինչև սրունքներն էին հասնում: Զախ կողմը, չուխայի վրա, ամրացված էր պղնձաձույլ, բոլորածև, փայլուն մի մետաղ, որի վրա ոռուերեն և հայերեն փորագրված էր՝ «**Անիի սուրհանդակ**»:

Այս մետաղյա նշանը, որ ցույց էր տալիս նրա պաշտոնական դրությունը, մեծ ազդեցություն էր գործում շրջակա գյուղերի ազգաբնակչության վրա, որոնք հարգանքով ու ակնածությամբ էին մոտենում Անիի սուրհանդակին:

Պաշտոնական երթի ժամանակ Անիի սուրհանդակը դուրս էր գալիս ձի հեծած՝ խաչմերուկ փամփշտակալները, հրացանը և երկապոլի թուրը կողքից կախված ու տարագին համաձայն դաշույնը առջևից ամրացված: Այս ամենը այդ երիտասարդ սուրհանդակին տալիս էին իր կոչմանն արժանի պատկանելի տեսք:

Զննան ամիսներին նա երբեմն այցի էր գնում շրջակա գյուղերը: Հատկապես եզդիները մեծ երկյուղածություն էին տածում դեպի Անիի սուրհանդակը: Նրան հրավիրում էին իրենց հավաքատեղին, հարգանքով բազմեցնում օդայի գլուխը և երկար ու բարակ գրուցում աշխարհի խեղ ու շտից, հյուրասիրում, և ապա սկսվում էր բողոքավորների այցը իրենց անլուծելի վեճերը լուծելու համար:

Անիի սուրհանդակի խոսքն օրենք էր:

Նա վիճող կողմերին լսելուց հետո մի բանի խրատական խոսքեր էր ասում և տալիս իր վճիռը: Նրա վճիռը երկու կողմերից էլ ընդունվում էր առանց առարկության:

Արամը՝ Անիի հնադարանի հյուսնն էր:

Յհանը՝ Միքայել վարդապետի մոտ սպասավոր էր: Նա նմանապես սպասավորում էր Անիի գիտարշավին:

Օհանի ընտանիքը բազմամարդ էր: Նա բաղկացած էր 7 հոգուց—Օհանը, կինը՝ Զմոն, և զավակները՝ Վահրիճ, Հեղինե, Արեգնազ, հետագայում Այծեանիկ և Գուրգեն: Զմոն ծրաշան մի կին էր, իր ընտանեկան հոգսերի մեջ թաղված: Նա միաժամանակ հայր Միքայելի կովկիթն էր ու հացթուխը: Այդ ընտանիքը բնակվում էր Իգաձորի մի խոշոր ու ընդարձակ այրում, որի վերևը, ճիշտ ձորի շուրթին, բազմած էին Պարոնի պալատի ավերակները:

Կարապետը ուներ երկու զավակ:

Եսային հետագայում ամուսնացավ և ունեցավ մեկ աղջիկ, որի կնքահայրը եղավ պրոֆեսոր Ն. Մառը:

Դա մի կիրակի օր էր:

Պրոֆեսոր Մառի բնակարանից (այն ժամանակ Անիի գիտարշավը իր առանձին բնակելի շենքը չուներ, բնակվում էին հայր Միքայելի սենյակներում) քավոր, քավորկին, սանահներ, սանամեր, փոքրիկ սանիկը գիտնականի ձեռքերում և մի խումբ ներկաներ Միքայել վարդապետի առաջնորդությամբ ուղևորվեցին Մայր տաճար:

Վարդապետը մենակ էր, տիրացու չուներ: Այդ պարտականությունը վիճակվեց Արամ Վրույրին: Նա հագավ նեղ ու կարճ ներմակ շապիկ, ձեռքին բռնած բուրվատով խնկարկում էր և բթի տակ մոթմոթալով կատարում տիրացուի պարտականությունը:

Նրա արտահայտիչ քիթը, կոմիկական դիմագծերը, նեղ ու կարճ շապիկը, դեմքի լրջությունը, այդ ամենը մի ծիծաղաշարժ տեսարան էր ներկայացնում: Բայց ո՞վ կհամարձակվեր ծիծաղել, այն էլ սուրբ տաճարի կամարների տակ: Այն, ինչ ուրիշների համար տարօրինակ էր ու ծիծաղաշարժ, Արամ Վրույրի համար սովորական էր ու ռեալ: Եվ եթե ոմանք այդ կոմիկական պատկերի վրա համարձակվեին ժպտալ կամ ծիծաղել, շատ տարօրինակ կթվար այդ ի ծնե կատակերգակին: Նա ծայր աստիճան կվրդովվեր, կարծես թե ասելու լիներ. «Ի՞նչ կա այստեղ ծիծաղաշարժ»: Եվ այդ դրությունը կկրկնապատկեր, կեռապատկեր նրա կոմիկական վիճակը, շարժումն ու կերպարանքը: Այդ պահին հանդիսականի մեջ ավելի բուռն ծիծաղի գրգիռ կառաջանար և անհնարին կլիներ զսպել այն: Հանդիսականի այդ արտահայտությունը կբազմապատկեր Արամ Վրույրի զսպված վրդովմունքն ու հուզումը և որքան որ հուզվեր ու վրդովվեր, այնքան ավելի ծիծաղաշարժ արտահայտություն կընդուներ: Գրիչս տկար է նկարագրելու այդ զարմանալի կատակերգակին: Նրա բոլոր կոմիկական դրություններն ու արտահայտությունները երևան էին գալիս միանգամայն ինքնաբերուի: Եվ այդ է պատճառը, որ հետագայում, երբ բախտ ունեցա բեմահարթակի վրա իբրև կրտսեր կոլեգա բախվելու նրա հետ, միշտ խուսափում էի նրա դեմքին նայելուց. հայացքս ուղ-

դում էի դեպի նա առանց նրան նայելու: Չնայած խաղարկման մեջ այդ ձևը միանգամայն պարսավելի է և անընդունելի, սակայն ուրիշ կերպ վարվել հնարավոր չէր:

Հարգելի պրոֆեսորը հոգնած էր, չէ՞ որ նա ամեն օր արևածագին գնում էր աշխատանքի և զբաղված էր մինչ ուշ գիշեր: Հաճախ առավոտյան թեյելու չէր գալիս տուն, Օհանն էր թեյը տանում պեղման վայրը: Նրա միակ հանգիստը կիրակի օրն էր, այն էլ կնքահոր պարտականությունն ուներ կատարելու: Երեխան գրկին երկի մտածում էր, թե ե՞րբ պիտի ավարտվի կնունքի արարողությունը:

Որոշ եկեղեցական ծիսակատարությունից հետո, Միքայել վարդապետը հարց տվեց:

— Պարոն պրոֆեսոր, ի՞նչ դնենք երեխայի անունը:

Նախապես որոշված չէր երեխայի անունը: Անիի սուրհանդակը համարձակություն չուներ այդ մասին խոսելու քավորի հետ:

— Գևորգ, — պատասխանեց մեծարգո գիտնականը:

Հանդիսականների մեջ զարմանք առաջացավ:

— Հարգելի պրոֆեսոր, սանիկո աղջիկ է, — առարկեց վարդապետը:

Առաջացավ զայված ծիծաղ: Գիտնականը ժպտաց ու ասաց.

— Այդ դեպքում Մարիամ թող լինի:

Եվ Անիի Աստվածամոր տանարի երկնապաց սյուների և վեհ կամարների տակ մկրտվեց Մարիամը՝ տիրացուի հետաքրքիր խնկարկվող բուրվառի ներքո:

Հետևյալ օրերին Անի քաղաքի շրջակա գյուղերի բնակիչների մեջ զարմանք և հիացմունք առաջացավ, երբ հայտնի դարձավ, որ պրոֆեսոր Մառը իր սուրհանդակի երեխայի կնքահայրն է դարձել:

Թե առաղձագործ Արամը և թե Ագոն, թեև ամուսնացած, բայց զավակ չունեին:

Անիում կար նաև եզդի ջրկիր Կյաստոն—Բագնայրցի (այժմ Դոզլիջա), որը Միքայել վարդապետին պատկանող 4—5 ավանակներով ջուր էր կրում Ծաղկոցաձորի սառնորակ աղբյուրներից:

Գիտարշավի սննդի հոգսը ընկած էր Միքայել վարդապետի վրա: Նա ամեն ամառ խոհարար էր հրավիրում Ալեքսանդրապոլից: Հացը թխվում էր երկու օրը մեկ անգամ: Նմանապես հայր սուրբի շորս կովերը լիովի ապահովում էին կաթը, մածունը, կարագը:

Միքայել վարդապետի խոհանոցը օրական երեք անգամ սնունդ էր մատակարարում Անիի գիտարշավին. առավոտյան ժամը 8-ին հաց, ոչխարի պանիր, հավկիթ և կարագ: Թեյը և շաքարը արշավախումբը բերում էր իր

հետ: Ժամը 12-ին՝ ճաշ երեք տեսակից— ա) արգանակ, բ) մսեղեն որևէ կերակուր և գ) մածուն ու երբեմն կոմպոտ: Ծաշասեղանին մեկ-մեկ երևում էր նաև գինի: Երեկոյան ընթրիք (մսեղեն):

Այս սպասարկման համար հայր Միքայելը վարձատրվում էր արշավախմբի կողմից: Սննդին վերաբերող ծախսերը չէին գանձվում աշխատակիցներից, դա արշավախմբի՝ հաշվին էր:

Անիում կային հուժկու գայլխեղդ երկու գամին՝ Վելոքս և Ֆինդո: Ֆինդոյի մեջքին ես երբեմն նստում էի, նա չէր առարկում:

Կար նաև մի փոքրիկ շնիկ Բոչկա անունով, որի փոխարեն հայր Միքայելը տիրոջը տվել էր որպես վարձատրություն մի ավանակ:

Փոքրիկ Բոչկան տաքարյուն էր ու համարձակ, ամեն դատարկ բանի համար մեծ աղմուկ էր բարձրացնում, ասես ահագանգում էր գամիոներին գալիք վտանգը:

Գամիոները պահպանում էին կովերին ու ավանակներին գայլերի հարձակումներից, իսկ փոքրիկ Բոչկան առանց պարսպուրդի անշեղորեն կատարում էր իր պարտականությունը:

Մոռացության չի կարելի տալ Ախուրյանի ձորում, փոքրիկ մատուռի մեջ բնակվող ծերունի ձկնորս Իվանին, որի կյանքը, սակայն, կարճ տևեց Անիում...

Այնուհետև գալիս է Անի քաղաքի վերնախավը. ավագագույնը՝ պրոֆեսոր Ն. Յա. Մառը, կինը՝ Ալեքսանդրա Ալեքսեննա, Յուրի՝ Մառի ավագ որդին, Վոլոդյա՝ կրտսեր որդին, Արամ Վրույր, կինը՝ Նունե, զավակները՝ Արա, Արտաշես, հետագայում Արաքսի և Ծաղիկ, Միքայել վարդապետը, ճարտարապետ Թորոս Թորամանյանը, նկարիչ Արշակ Ֆեֆվանյանը, Հովսեփ Թրբելին, Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարը, նկարիչ Պոլտարացկին:

Հնագիտական արշավախմբին մասնակցել են նաև Ղափանցյանը, Լևոն Քալանթարը, ճարտարապետ Նիկողայոս Բունիայանը, Տարագրուր, տղերիս գրողը, Գ. Չուբինովը, ճարտարապետ Ն. Տոկարսկին և ուրիշներ: Ահա սրանք էին առասպելական հոշակ ստացած երբեմնի բազմամարդ Անի քաղաքի սակավաթիվ բնակիչները, որոնք ապրելով դարերի շրջափակում, փոխադարձ հարգանքով ու սիրով կապված միմյանց, շունչ ու հոգի էին տալիս այդ ավերակ քաղաքին:

Դա շնչող նոր Անին էր:

¹ Յուրաբանչյուր անձի համար պրոֆ. Մառը վճարում էր հայր Միքայելին 50 կոպեկ—ամիսը 15 ուրբի:

Ճարտարապետ Թորոս Թորամանյանը բնակվում էր Միքայել վարդապետի խցիկում:

Դա մի փոքր սենյակ էր տախտակե հատակով, որտեղ զետեղված էին հին ձևի երկու փայտյա մահճակալ, սեղան՝ վրան լամպ, մոխրաման և ճարտարապետի գծագրական տախտակը, ապա մի պահարան, պահարանի կողքին գտնվում էր փոքրիկ բոլորածև սեղան, վրան դրված մի մեծ մատյան, որը այցելուների հիշատակությունների մատյանն էր: Այդ մատյանի մեջ կային բազմազգ լեզուներով ջերմ ու հուզիչ գրված տպավորություններ ու ստորագրություններ:

Պահարանի մոտ, անկյունում, հեռված էր վարդապետի հրացանը. նա անվրեպ նշանաձիգ էր:

Ճարտարապետը հազնվում էր պարզ ու համեստ, ամբողջ օրը խորասուզված իր չափագրական և գծագրական աշխատանքների մեջ: Բժախնդիք էր ու մաքրասեր, մտածկոտ էր նա ու լուրջ: Չափից ավելի համեստությունը պսակում էր նրա վեհ ճակատը, որը սակայն բացասական հետքեր թողեց իր կյանքի ու գործունեության ճանապարհին... Օրջակա գյուղերի բնակիչները կարծում էին, թե ճարտարապետը նրա անունն է և այդպես էլ անվանում էին նրան:

Այդ քանքարավոր մեծ հայը կարողացավ մխրճվել իր ստեղծագործ նախնիների գեղեցիկ շենքերի և վեհ ու ծանրանիստ կոթողների ճարտարապետական կառուցվածքների էության մեջ և ի հայտ հանել հայկական պատմական ճարտարապետության առկայությունը, որը մինչ այդ լուրջ ու սխտեմատիկ ուսումնասիրության ենթակա չէր եղած:



Արամ Վրույր՝ Անի քաղաքի պատվավոր քաղաքացին: Նա աշխատել է նախ ինքնուրույն և ապա Անիի հնագիտական էքսպեդիցիաներում որպես հնագետ-լուսանկարիչ: Պետերբուրգի հնախոսական ընկերության անդամ էր: Նա Անիում իր աշխատանքները սկսել է տակալին 1886 թվից:

Ահա թե ինչ է գրում 1903 թվին պատմաբան Լեոն իր «Անի» աշխատության մեջ:

«...Բայց հանգուցյալ Քյուրքչյանից հետո, ոչ ոք այնքան շատ բան չի արել Անին լուսանկարելու կողմից, որքան արել է դերասան պ. Վրույրը: Նա սիրող լուսանկարիչ է. և անձնապես սիրում է հնություններ, իսկ ամենից շատ, իհարկե, Անին: Մի քանի ամստ պ. Վրույրն ապրել է Անիում, ծանո-

թացել նրա յուրաքանչյուր քարին, նրա դիրքերի բոլոր մանրամասնությունների հետ և ցույց է տվել մի մեծ, տոկուն աշխատություն: Բյուրքչյանը հրատարակեց հիսունից ոչ ավել լուսանկարներ, իսկ պ. Վրույրը մեկնակ, առանց օգնականի և մանավանդ առանց նյութական աջակցության, որ գործի ամենակարևոր կողմն է, հանել է երկու հարյուր տեսարան, որոնցից հարյուրը արդեն հրատարակել է: Հայ բեմի այդ հասնետ և, ինչ ասել կուզի, չքավոր գործիչը, կարելի է ասել, Անիի մեջ և Անիի շուրջը ոչինչ անձանոթ բան չի թողել, այնպես որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի լիակատար, ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա»¹:

Արամ Վրույրի սերը, ջերմորեն կապվելը Անիին և ընդհանրապես մեր անցյալի պատմությանն ու արվեստին, այդ նվիրական ուխտի՝ էությունը պատկերելու համար խոսքը տանք իրեն.

— «Արժե սովորել այն ամենը, ինչ որ մեզ մոտեցնում է անցյալին, վերակենդանացնել այն, և պատմական անունները ներկայացնել մեզ ոչ իբրև մեռյալ անուններ, այլ իբրև կենդանի մարդիկ: Արժե սովորել այն ամենը, ինչ հնարավորություն է տալիս մեզ տեսնել այդ պատմության կենդանացած անձանց հոգու խորքը: Արժե գիտենալ այն բոլորը, ինչ օգնում է մեզ ավելի մոտիկից ըմբռնել, որ մենք երբեք կտրված չենք միևնչև իսկ ամենահեռավոր անցյալից, որ մենք՝ նրանց ուղղակի ժառանգներս, չվճարած պարտքեր ունինք վճարելու, և մենք պարտական ենք մեր շնորհակալության պարտականությունը նրանց, որոնց համար երկրային վարձատրություն այլևս գոյություն չունի: Մենք նրա համար ենք ապրում, որպեսզի շարունակենք հազար տարիներ առաջ սկսված աշխատանքը, և որպեսզի մեր այդ աշխատանքը գիտակցաբար և արժանավոր կերպով կատարվի: Պետք է, որ մենք գիտենանք, թե իսկապես ինչ բան է, որի շարունակողները մենք պետք է լինենք»:

Ահա այսպես էր մտածում ու նվիրաբերում իր ուժերը ավերակների քաղաքի հին բնակիչը:

1878 թվին Անին ռուսական բանակի կողմից գրավվելուց հետո, Միքայել վարդապետ Տեր-Մինասյանը Անի քաղաքի երկրորդ և վերջին վանահայրն էր: Նա գործունյա մի մարդ էր: Փոքրիկ նորոգություններ էր կատարել, ինչպես Մայր տաճարի արևելյան պատի երկու քաջվածքները սրբատաշ քարերով ամրացնելով, նմանապես Տիգրան Հոնեկցի եկեղեցու հարավ-արևմտյան անկյունը նորոգելով:

Դյուրություն տալու համար հետաքրքրասեր այցելուներին, նա մի քա-

¹ Լեո — «Անի», էջ 63, Երևան, Հարպետհրատ, 1963 թ.:

նի շավիղներ էր բացել իր բնակարանից դեպի Տ. Հոնենց, Ապուղամբենց, Պարոնի պալատ, Առաքելոց եկեղեցին, Միջնաքերո, Ծաղկոցաձոր և այլն...

Ուներ փոքրիկ տնտեսություն՝ բաղկացած շորս կովից և մի քանի ցեղական ավանակներից: Իգաձորի և Ծաղկոցաձորի հանգույցում մշակում էր մի փարթամ բանջարանոց:

Ըստ հնարավորության, նա լայն աջակցություն էր ցուցաբերում Անիի գիտարշավին տնտեսական և կենցաղային խնդիրներում, աչքաթող չանելով նաև ճարտարապետ Թ. Թորամանյանին, Արամ Վրույրին և նկարիչ Արշակ Ֆեթվանյանին, որոնցից Ա. Ֆեթվանյանը մասնակի, իսկ Արամ Վրույրը և ճարտարապետ Թ. Թորամանյանը Անի քաղաքի պատվավոր և մնայուն բնակիչներն էին համարվում:

Անիում ցարական կառավարության կողմից ճանաչված և հաստատված պաշտոնական եկեղեցին համարվում էր Տ. Հոնենցի սուրբ Գրիգոր Լուսավորիչը: Սակայն եկեղեցական արարողությունները կատարվում էին Անիի հռչակավոր Մայր տաճարում, որովհետև գտնվում էր վանահոր բնակարանի մոտ:

Սպասավորները երբեմն ջղայնացնում էին հայր Միքայելին՝ ճշտորեն չկատարելով նրա կարգադրությունները: Նա հաճախ ասում էր, «երբ ես մեռնեմ, իմ մարմինը ամփոփեցեք Մայր տաճարի հյուսիսային պատի մոտ և տապանաքարիս վրա գրեցեք. «Աստ հանգչի մարմին բազմաչարչար Միքայել վարդապետի՝ Վանահայր Անվո: Նա տասը տարի ավելի կապրեք, եթե իր ծառաները չջղայնացնեին»:

Հայր Միքայելը մեծ հարգանք ու սեր էր վայելում շրջակա գյուղերի բազմազգ բնակիչների կողմից: Մուսուլման գյուղացիները նրան մոտրախասս էին կոչում և հաճախ դիմում էին նրա արդարադատությանը, իրենց կնոռոտ վեճերը լուծելու համար:

Չնայած այդ բոլորին, 1920 թվին մի խումբ թուրքեր մտնում են Անի, հայր սուրբի կյանքին վերջ տալու համար: Հայր Միքայելին հաջողվում է խույս տալ այդ չարանենգ մարդկանց որոգայթից և փախուստ տալով թաքնվել Ախուրյանի ձորի եղեգնուտում ու մեծ դժվարությամբ, երեք օրվա ընթացքում, կտրել երեք վերստ տարածություն և ապա անցնել Ախուրյանի աջ ափը ու բարձրանալ Խարկով հայաբնակ գյուղը:

Միքայել վարդապետը, այդ առնակազմ դարաբաղցին, ծանր հիվանդությամբ, բոլորովին հյուծված, Էջմիածնում մահին ընկավ առանց որևէ խնամքի և կարճ ժամանակից հետո վախճանվեց սուլի ու թշվառության մեջ:

Հիշատակության արժանի է պրոֆեսոր Ն. Մսոի աշակերտներից Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարի մի ինքնուրույն նախաձեռնությունը, որը հավերժացնում է այդ եռանդուն հնագետի հիշատակը:

1918 թվին Աշխարհբեկը լոռեցիներից կազմում է մի բրիգադ և մեկնում Անի՝ կորստից փրկելու Անիի հնադարանի էքսպոնատները, որոնց տեղափոխման համար նախօրոք ապահովում է մի բեռնատար վագոն Անի կայարանում:

Լոռեցիների զինված այդ խումբը Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարի գլխավորությամբ մտնում է Անի, որտեղից ուսերի վրա, մոտ երեք վերստ, Անիի հնադարանի էքսպոնատներն ու այլ իրեր Ախուրյանի ձորով սկսում են կրել դեպի Խարկով գյուղը և ապա սայլով տեղափոխում Անի կայարան:

Սակայն այդ անձնագրի խմբին չհաջողվեց լրիվ ավարտել աշխատանքը: Թշնամին անակնկալի բերեց և նրանք գեղակների տարափի տակ, հալածական հեռացան Անիից:

Միայն հայրենիքի հանդեպ ունեցած վառ սերն ու անձնվիրությունը կարող էր այդ խանդավառ խմբի անդամներին տալ ուժ ու կարողություն իրենց երկրի պատմական մշակույթի արժեքները Ախուրյանի ձորի նեղ կածաններով, ուսերի վրա տեղափոխելու դժվարին գործը կատարել:

Գովելի է Աշխարհբեկ Քալանթարի այդ նախաձեռնությունը: Եվ այժմ, երբ մենք տեսնում ենք մեր պատմական թանգարանում Անի քաղաքին վերաբերյալ հնագիտական իրեր, այդ ամենի համար պարտական ենք նրան:

Նա կորստից փրկեց իր ուսուցչի բազում տարիների վաստակի մի մասը միայն, որի մեջ ինքը ևս բաժին ուներ: Բայց այդ նվիրական նախաձեռնության մեջ, անկախ իր կամքից ու ցանկությունից, աններելի մի սխալ գործեց: Բացի հնագիտական արժեքներից, նա տեղափոխել տվեց իր ուսուցչի գրքերի հսկա պահարանը, գրադարանը, Անիի հնադարանի կողմից հրատարակված հարյուրավոր գրքեր, դանակներ, պատառաքաղներ, գդալներ, պնակներ, միս աղալու մեքենա, բահեր, բրիչներ և նման այլ իրեր, որոնց տեղափոխելու կարիքը բնավ չկար: Դա միայն ժամանակի անիմատ վատնում էր: Այդ բոլորի փոխարեն, նա կարող էր կորստից փրկել ևս շատ արժեքներ: Նա ժամանակ չունեցավ տեղափոխելու Գագիկ Ա. թագավորի արձանը, որը մի արժեքավոր նմուշ է 10-րդ դարու հայ արձանագործության: Նա կարողացավ անջատել մարմնից թագավորի գլուխը և ձախ թևը միայն,

և թաքցնել այն մեզ անհայտ մի տեղ՝ Գագիկի մարմինը և աջ թևը թողնելով
հնադարանի շենքում, բախտի քմահաճույքին:

Հետագայում, կարծես 1922 թվին, Աշխարհբեկին հաջողվեց կրկին այ-
ցելել Անի: Այնտեղ նա լուսանկարեց թանգարանների շենքերի ներքին ան-
մխիթար վիճակը:

Ահա թե ինչ է ասում լուսանկարը:

Զարեդարանի տանիքը, լուսամուտները, դռներն ու հատակի տախտակ-
ները և բազմաթիվ դարակներ չկան... Անողորքաբար հափշտակված են հա-
րևան գյուղերի թուրք բնակիչների կողմից, որի հետևանքով խառնիխուռն
թափված են երբեմնի մեծ խնամքով հավաքված և դարակների վրա դարաված
քանդակագարդ բեկորներ և արձանագրված քարեր: Նույն վիճակին էր դա-
տապարտված նաև հնադարանը:

ԶՐԿԻՐ

ԿՅԱՍՍՈՆ

Արևածագին ջրկիր Կյասսոն ախոռից հանում էր իր խնամքին ապա-
վինած չորս-հինգ ավանակները և պատրաստություն էր տեսնում ջրի գնալու
դեպի Ծաղկոցաձոր: Նա թամբում էր ավանակները և թամբերին ամրացնում
փայտյա փոքրիկ տակառներ:

Փոքրիկ Բոչկան ուրախությունից իրար էր անցնում, մերթ վազում էր
դեպի ջրկիրը, մերթ արագ պտույտներ գործում ավանակների շուրջը, նա
նախազգում էր, որ նամփա են կտրելու:

Ավանակների քարավանը փայտե կժերով քարձած բռնում էր իր նամ-
փան դեպի Ծաղկոցաձոր: Առջևից ընթանում էր սանձարձակ Բոչկան՝ թավ
պոչը տնկած, որպես առաջապահ: Ապա մեկը մյուսի ետևից ժապավենի
նման ձգվում էին ավանակները: Նրանց ետևից գնում էր ջրկիր Կյասսոն ճի-
պտոք ուսած և մի ձեռքով բռնած իր անբաժան ծխամորճը, որի մեջ մխում
էր ծիկան (մախորկա): Այդ հանդիսավոր «շքերթի» ետևից ծանրաբայլ ըն-
թանում էր գամփո Ֆինդոն. նա արդեն ծերացել էր:

Եվ այս հանդիսավոր երթը դեպի Ծաղկոցաձոր ու ետ, կրկնվում էր
ամեն օր մի քանի անգամ և ոչ ոք չէր զլանում իր պարտականությունների
մեջ:

ՓՈՍՏԱՍՏԱՐ
ՏԻԳՈՆ

Տիգոն էր Անիի փոստատարը:

Խարկովցի էր նա: Դա մի փոքրիկ, հայաբնակ գյուղ է՝ նստած Ախուրյան
գետի խոր ձորի ձախ շուրթին, Անի քաղաքից երեք կիլոմետր դեպի արևելք:

Համագյուղացիները նրան անվանում էին Կոլոտ Տիգո: Բավականին
կարճ հասակին ներդաշնակում էր նրա նիհար մարմինը, սակայն գլուխը մի
փոքր անհամաչափություն էր մտցնում նրա ընդհանուր կառուցվածքի մեջ:

Խորամանկ էր փոստատար Տիգոն. նա պահում էր մի արտահայտիչ
մորուք և ստեպ-ստեպ կարգի էր գցում այն, հատուկ ուշադրություն դարձնե-
լով նրա վրա, որը բավականին տեսք էր տալիս փոստատարի կարճ ու նի-
հար մարմնին: Ոտքերին պրկած ուներ կաշվե լայն օղակներ, թեթև և հան-
գիստ քայլելու համար: Կողքից կախված էր փոստատարի փոկավոր սև
պայուսակը: Ջեռքին կրում էր գավազան, յուրօրինակ էր ու արտահայտիչ:

Ամեն օր Անի կայարանից Անի քաղաքի փոստն էր բերում:

Անիի փոստատարը մեծ կարևորություն էր տալիս իր պաշտոնին, միայն
դժգոհ էր, որ Անիի սուրհանդակի նման փայլուն մետաղաձույլ մի նշան չու-
նի իր կրծքին, մոռանալով, որ ինքը տարվա մեջ երեք ամիս է միայն աշխա-
տում (հունիս, հուլիս, օգոստոս), իսկ Անիի սուրհանդակը՝ միշտ:

Փոստատար Տիգոն դանդաղաշարժ էր ու ծույլ, սակայն փոստը բերելիս,
երբ «Տիգրանի» դռնով մտնում էր Անի, Տիգրան Հոնեհեցի եկեղեցու կարճ զա-
նիվերը անցնելուց հետո՝ ուժ էր տալիս իր ոտներին և ծիր ու արագաքայլ
ընթանում էր դեպի գիտնականի բնակարանը, ամբողջապես քրտինքի մեջ
կորած, ապացուցելու համար, որ իր «կարևորագույն» պաշտոնի մեջ անթերի է
ու զգոն: Նա հանձնում էր իր փոստը և ստանում ուղարկվելիք թղթակցու-
թյունները:

Նա միշտ աննկատելի տհաճությամբ դարձնում էր իր դեմքը, երբ պա-

տահմանք հանդիպում էր Արամ Վրույրին: Չէր ուզում հաշտվել այն մտքի հետ, թե՛ «Անբեխ, անմորուս մարդը մի՞թե կարող է տղամարդկանց դասին հաշվվել»: Եվ մտածում էր, առանց կարողանալու լուծել այն խնդիրը, թե՛ ինչո՞ւ նա, առանց ամաչելու, խուսափում է իր բեղերից, քանի որ տղամարդու պատիվը բեղ ու մորուսի մեջ է: Գոնե օրինակ վերցնի աղայից (պրոֆեսոր Մառին գյուղացիները «աղա» էին կոչում), հայր Միքայելից կամ թե՛ անտարապետի փառահեղ բեղերից.— «Թու, այդպիսի մարդու նամուսին ու ղեյրաթին»: Իսկ մյուս կողմից էլ մտածում էր. «Գուցե Վրույրը ֆրանգ է» և շատ տարօրինակ էր թվում, որ այդ «ֆրանգը» լուսավորչական սուրբ եկեղեցու մեջ տիրացուի պարտականություն է կատարել և հայր սուրբը ինչպե՞ս է հանդուրժել այդ: Ահա անլուծելի խոհեր, որոնք պտտվում էին փոստատարի ուղեղում:

Երկար ու բարակ մտածելուց հետո նա դառնում էր այսպես՝ եթե ուղղափառ եկեղեցուն պատկանող աղան (Ն. Մառ) կարող է լուսավորչական եկեղեցու դավանանքին պատկանող Եսայիի աղջկա քալորը լինել, ապա ինչո՞ւ «ֆրանգ Վրույրը» չի կարող տիրացու լինել. չէ՞ որ այդ բոլորը կատարվել է հայր սուրբի թույլտվությամբ: Ածելիի անողոք հարվածներին ենթարկված Ա. Վրույրի բեղն ու մորուսը զբաղեցնում էին փոստատար Տիգրի միտքն ու ուղեղը:

Խարկով գյուղացի Մուքայելը, որը պեղող բանվորների մեջ համարվում էր լավագույններից մեկը, պատմում էր, որ Կոլոտ Տիգոն երազում տեսնում է այդ անիծյալ «ֆրանգին», որը խիստ և հանդիմանական հայացքով նայում է իրեն և ձեռքին բռնած մի մեծ մկրատ՝ հարձակվում է Կոլոտ Տիգոյի վրա՝ նրա փառահեղ մորուքը կտրելու: Փոստատար Տիգոն ահաբեկված չոքում է այդ «դաժան ֆրանգի» առջև և սուկումով աղերսում՝ «հանուն սրբերի, հանուն սուրբ խաչի ու ավետարանի խնայիր ինձ»: Այդ դաժան մարդը անողոքաբար առնելով նրա մորուսը իր ափի մեջ՝ ասում է. «Փաշտալյուն Տիգո, պետք է կտրեմ քո այդ անիծյալ մորուսը»: Տիգոն դողդոջուն և սարսափահար նայում է քերանը բացված այդ անգութ մկրատին: Եվ երբ «ֆրանգը» մոտեցնում է ահռելի մկրատը գունաթափ փոստատարի մորուսին՝ այդ սուկալի պատկերից մի ուժեղ ճիչ է արձակում և արթնանում...

Կապարի ծանրությամբ այդ ճնշող, մղձավանջային երազը փոստատարի բունը փախցնում է: Սուկումով նստած անկողնում իրեն թվում է, որ տանիքի անցքից, որտեղից թափանցում էին լիալուսնի պաղ շողերը, կախված էր սարսուռ ազդող մի մեծ, փայլուն մկրատ, որը մերթ ընդ մերթ բացվում ու փակվում էր...

ԱԼԵՔՍԱՆԴՐԱ
ԱԼԵՔՍԵԵՎՆԱ

Հարգելի գիտնականի կողակիցը՝ Ալեքսանդրա Ալեքսենևան, մի փոքր գաղափար ունեք բժշկական արվեստից: Նա ամեն տարի բերում էր իր հետ բավականաչափ զանազան դեղորայք: Երջակա գյուղերի բազմազգ բնակիչները գուրկ էին բուժօգնությունից և երբ իմանում էին հարգելի տիկնոջ ծամանման մասին, ամեն օր չէր դադարում հիվանդների այցելությունը, որոնք թարգմանի միջոցով բացատրելով իրենց ցավը, ստանում էին անհրաժեշտ դեղորայք՝ գլխացավի, ջերմի, աչքացավի և այլն: Այդ բոլորը կատարվում էր ամենայն հոգատարությամբ ու խնամքով, առանց վարձատրության:

Իր հիվանդ այցելուներին հասկանալու համար, հարգելի Ալեքսենևան հատուկ թարգմանիչ չունեք: Թարգմանի դեր էր կատարում նա, ով այդ պահին ներկա լինեք՝ հարգելի գիտնականը, Հ. Օրբելին, Նունե Վրույրը և ուրիշներ: Նմանապես վիճակվել է և ինձ— չնայած իմ գիտցած ռուսերենը խիստ սահմանափակ էր: Սակայն, ես իբրև թարգմանիչ տանելի էի: Երբեմն պատահում էր, որ ոչ ոք չէր լինում շենքում և այդ դեպքում վիճակվում էր ալաշկերտցի Օհանին կամ սուրհանդակ Եսայիին թարգմանչի դերում հանդես գալ, որոնք, բացի կցկտոր մի քանի ռուսերեն բառերից, ոչինչ չգիտեին. ոչ կարողանում էին կարգին թարգմանել հիվանդի ասածը և ոչ էլ լրիվ հասկանալ Ալեքսանդրա Ալեքսենևային: Ինչքան որ դժվար էր այդ վիճակը հարգելի բուժակուհու և տաժանելի շարչարանք «թարգմանչի» համար, այնուամենայնիվ, հետվից դիտողի համար մեծ հաճույք էր, որը մի գեղեցիկ կատակերգությունից այնքան առողջ ծիծաղ չէր կարող կորզել, քան այս «բաբելոնյան աշտարակաշինությունից»: Եվ այս դրությունը իր վախճանը կգտներ, երբ փրկարար հրեշտակի նման մեկը կհայտնվեր և վերջ կտար Եսայիի, Օհանի ու տիկնոջ շարչարանքներին:

Մի օր ականատես եղա, թե ինչպես մի հիվանդ գեղջկուհի «խանութից» դարման էր խնդրում: Բոլորից աննկատելի անկյունում կանգնած, հետաքրքրությամբ լսում էի:

Հարգելի բուժակուհին չկուսեղով հիվանդի խնդիրը, կանչեց մոտեցող Օհանին:

— Охан, Охан, что у нее болит?

— Աղջի, ո՞ր տեղդ կցավի,— հարցրեց հիվանդին «թարգմանիչը»:

— Եղբայր Օհան, խանութին ըսե, որ շատ գեշ կդողում:

«Թարգմանիչը» մտածմունքի մեջ ընկավ, չգիտեր ինչպես հասկացնի:

— Ну, расскажи, Охан, что она говорит?

Տարակուսած Օհանի քրտինքը տվեց ճակատին. չգիտեր այդ անիծյալ «դողոցք» բառը ուսերեն... «Այդ անիծված դողոցքը որտեղի՞ց բռնեց Փանոսի աղջկան, գոնե մի ուրիշ հիվանդություն լիներ», որի ուսերենը ժամանակի ընթացքում ինքը յուրացրել էր... Վրդովված մտածում էր Օհանը: Խեղճ պաշկերտցին տքնում էր ու ճգնում, սակայն «դողոցքը» մնում էր «դողոցք»...

Հիվանդը աղերասկան հայացքով նայում էր մեկ խանութին, մեկ անճարակ «թարգմանիչին»...

Վերջապես Օհանը գտավ բացատրելու եղանակը:

— Ну... Ханум.... др-др, др-др... делает... — Սաաց պաշկերտցին՝ ճակատի քրտինքը թևով սրբելով, և մի խոր շունչ քաշելով:

— Охан, что за др-др, что за др-др?... ասաց հուսահատված Ալեքսենյան:

— Դու լե խիվանդութեն գտար, Փանոսի աղջիկ,— ասաց գեղջկուհուն վրդովված Օհանը:

— Что, что... Панос, ну так говори, что ты мучаешь меня?

Այդ պահին Օհանը նկատեց ինձ. կարծես թե երկնքից իջած հրեշտակ լինեի նրա համար:

— Արտաշես, եկուր, խանութին հասկացրու սա Փանոսի աղջկա ցավը:

— Арташес, нука спроси, чем она больна.

— Александра Алексеевна. лихорадка— հազիվ մտաբերելով այդ անիծյալ բառը, արտասանեցի ես:

— А, лихорадка...— դառնալով Օհանին ասաց,— Охан, лихорадка, так и скажи.

— Да, ханум, лихорадка— բավականության ժպիտը դեմքին կրկնեց «թարգմանիչը»:

Հիվանդը ստանալով խիստ և բուժակուհու ցուցմունքները, շնորհակալությամբ հեռացավ՝ ազատելով պաշկերտցուն տաժանակրությունից և Ալեքսանդրա Ալեքսենյային՝ «հոշակավոր թարգմանից»:

Իհարկե այդպիսի դեպքեր շատ սակավ էին պատահում:

ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՕՐԵՐ

Անիի սակավաթիվ բնակիչները խաղաղ ու համերաշխ կյանք էին վարում: Ամեն ոք լծված էր իր առօրյա աշխատանքին, սկսած մեծ գիտնականից մինչև Իգաձորի այրերի բնակիչները: Միայն փոքրահասակների մեջ մենք՝ Վոլոդյա, Վահրին, Արա և Արտաշես թափառում էինք Անիի ավերակներում, ձորերում ու այրերում՝ զբաղմունք ընտրելով զանազան մանկական խաղեր: Երբեմն խաղում էինք հնարված մի խաղ, որ իբր թե «պեղում» ենք կատարում: Վոլոդյան «պեղման» ղեկավարն էր լինում, իսկ մենք երեքս—բանվորները: Վոլոդյան իր հորից թույլտվություն էր խնդրում և նա նշում էր, թե Անիի որ վայրում կարող ենք զբաղվել «պեղումով»: Մենք սկսում էինք քափված քարերից մաքրել այդ վայրը և երբ գտնում էինք քանդակազարդ որևէ բեկոր կամ կարնիզի կտոր, անմիջապես ցույց էին տալիս «փոքրիկ գիտնականին», որն իր հերթին որևէ «եզրակացություն կամ դիտողություն» անելուց հետո՝ կարգադրում էր զգուշությամբ տեղավորել մի ապահով տեղ, թղթի կտորի վրա նշելով այդ քարը: Երբեմն վրդովվում էր և նկատողություն անում անզգույշ «բանվորին»:

Հաճախ կազմակերպում էինք շրջագայություններ՝ Ծաղկոցաձոր, Հոնենցի տոհմային դամբարան-այրերը, Միջնաքերդ, Գլիձոր, Ախուրյանի ձորը, Հովվի եկեղեցին, նույնիսկ ստորերկրյա Անին (գեղան-գյալմազ), Աղվեսի ձորը, որը Անի-Խոշավանք տանող ճանապարհի վրա էր և որտեղ կանգնած էր մի փոքրիկ խաչքար:

Միշտ չէ, որ Վոլոդյան մեզ ընկերանում էր, սակայն մենք երեքս միշտ անբաժան էինք:

Կային վայրեր, որտեղ լինում էինք երբեմն և ոմանց տեղանունները մենք էինք հնարել: Օրինակի համար. Ծաղկոցաձորում գտնվում է մի փոքրիկ քարայր, որտեղից դանդաղ դուրս էր հոսում հանքային ջուր: Քարայրի պատերից կաթիլ-կաթիլ հոսող ջուրը լցրել էր քարայրի ամբողջ հատակը, արևի շողերը բազմերանգ ցուլերով խաղում էին հաչելու փայլ ստացած ջրի հարթ մակերեսի վրա: Նմանապես քարայրի հատակից փոքրիկ պղպջակներով ցայտում էր հանքային ջուրը և լցվում հավաքված ջրի մեջ: Այդ բնական քարայրի առաստաղը բավական ցածր է: Նա կազմված է լերկ քարից և բնավ նման չէ Անիի ձորերում պեմզայի զանգվածների մեջ փորված հարյու-

րավոր արհեստական այրերին: Այդ քարայրը իմ անունով անվանեցինք՝ «Արտաշեսի մաղարա»:

«Արտաշեսի մաղարայից» դեպի Ախուրյան, Ծաղկոցաձորը գնալով սեղմվում է և վերածվում մի փոքր կիրճի ու ապա Աղջկաքերդի մոտ լայնանում է և ընդհատվում Ախուրյանի ձորում: Այդ փոքրիկ կիրճի ապառաժոտ ստորոտում Անի վտակի ջրերը հանդիպում են խոշոր ժայռերի բեկորների, որոնք կտրում են վտակի նորմալ ընթացքը, ջուրը լճանում է և լողանալու համար հարմարություն ստեղծում: Հաճախ գնում էինք այնտեղ լողանալու: Արան իր համար ընտրել էր մի լերկ ժայռի խոշոր բեկոր, որը ահռելի ապառաժներից պոկվելով՝ գահավիժել ու նստել էր վտակի եզրին, գագաթին ունենալով տափարակ տարածություն և այնտեղից դեպի վտակն իջնելու հարմարություն: Արան ոչ ոքի չէր զիջում այդ տեղը: Այդ ժայռի բեկորը անվանեցինք «Արայի քար»:

Ծաղկոցաձորում, Անի վտակի աջ ափին, մի սառնորակ աղբյուր կա, նրա անունը դրինք «Հայր սուրբի աղբյուր», որը վերանորոգել ու կարգի էր գցել Հայր Միքայելը:

Ապուղամբենց եկեղեցու մոտակայքում, որտեղ Ծաղկոցաձորի ձախ լանջը համարյա ուղղահայաց է և այդ լանջով բարձրանալը անհնար է, ձորի ստորոտից մոտ 50—60 մետր բարձրության վրա իր լայն բերանով դեպի արևմուտք է նայում պեմզայի զանգվածի մեջ փորված մի քարայր՝ անմատչելի ու խորհրդավոր: Սակայն որտեղի՞ց էր այդ խորհրդավոր այրի մուտքը՝ մեզ անհայտ էր:

Ծաղկոցաձորի ստորոտում, այդ այրից ոչ հեռու, սկսվեց մեր հետախուզությունը և այրից մի հարյուր մետր հեռու մեր առջև երևաց մի լայն բացվածք, որը գնալով դեպի վեր խորանում էր և քանի առաջ էինք շարժվում, այնքան հետզհետե կորչում էինք խավարի մեջ: Չնայած այդ խավար և խորհրդավոր անցքը սարսափեցնում էր մեզ, բայց իրար սիրտ տալով, որոշեցինք շարունակել մեր ճանապարհը: Օդի թեթև հոսանքը, որ անցնում էր թունելի միջով, մեզ հուսադրում էր, որ ճանապարհը պետք է մեզ դուրս բերի լույս աշխարհ: Խավար ճամփան, պտույտ գործելով՝ գնում էր միշտ վեր, և մենք անընդհատ առաջ էինք շարժվում: Անցքը սկսեց աստիճանաբար լուսավորվել, և կարճ ժամանակից հետո մենք մեզ գտանք մի լայն այրի մեջ, որի բերանը նայում էր դեպի Ծաղկոցաձոր: Դա մեր տեսած անմատչելի այրն էր, որն անվանեցինք «Վահրիճի տուն»:

ՄԻՐԱՆՈՒՅԵԸ

1904 թվականին Անիին այցի եկավ հայ բեմի ոգին՝ տիկին Սիրանուշը:

Նա եկավ զվարթ և վերադարձավ դառնացած: Թե ինչո՞ւ էր դառնացած, չգիտեի, ես այն ժամանակ յոթ տարեկան էի միայն:

Իմ մանկական հոգու վրա նա թողեց մի անջնջելի հետք. ես լսեցի նրա սրտանմիկ ձայնը, որը հորդում էր նրա զգայուն սրտի խորքից. նա խոսում էր մորս հետ և տեսա մի գույգ արտասուքի դառը կաթիլ՝ քամված նրա բոցաշունչ աչքերից:

Տարիներ հետո, երբ ես հաճախ նայում էի Սիրանուշի նկարին, մտախոհ ու թախծոտ նստած, որպես սգակիր մի մայր, Անիի Առաքելոց եկեղեցու գավթի առջև (լուսանկարված 1904 թ.), իմ առջև, ինչպես մի տապալակագիր, միշտ արձանանում էին մեծ գիտնականի հետևյալ տողերը:

«Արձանագրության վիճակը ցույց է տալիս ոչ միայն այն, թե ինչպես շենքի փլուզման հետևանքով փշրված ու ալյանդակված են արձանագրությունները՝ ...մշակութային կյանքի թանկարժեք փաստերը, նմանապես և այն, թե ինչպես կործանիչ ուժերի շնորհիվ փշրված ու ալյանդակված է Հին Հայաստանի պատմական իրականությունը»:

...Նա հրաժեշտ տվեց սգավոր քաղաքին տխուր ու վշտակիր...

ՊԵՂՈՒՄՆԵՐ

Անիի արևելքը շտապում է:

Վանահոր աքաղաղը իր երրորդ գիլ կանչով ողջունեց արթնացող բնությանը:

Արշալույսի վառ գույների տակ, մեկը մյուսի ետևից սկսեցին ուրվագծվել մեր պատմական մշակույթի լուռ վկաները:

Մոտակա գյուղերից՝ Անի, Արագ, Ճալա, Խոշավանք, Խարկով, Անի քա-

դաքի պեղումներում աշխատող շինականները, հայ, քուրդ, թուրք ուղևորվում են Անի՝ պեղման վայրը:

Պեղումների աշխատանքները սկսվում էին առավոտյան ժամը 6-ին:

Ժամը 8-ին հնչում էր ընդմիջման զանգը. դա նախանաշի մեկ ժամյա դադարն էր: Բանվորներին տալիս էին թեյ և յուրաքանչյուրին երկու կտոր շաքար: Ժամը 12-ին մեծ ընդմիջումն էր՝ երկու ժամ (ճաշ): Ժամը 5-ին աշխատանքն ավարտվում էր:

Պեղմանը, բացի բանվորներից, աշխատում էին գույգ եզով սայլեր և ձի լծած սայլակներ: Ժաքաթ օրերը աշխատանքն ավարտվում էր սովորականից շուտ: Բանվորները շաքաթը մեկ անգամ ստանում էին իրենց աշխատավարձը: Բանվորի օրական վարձը 50 կոպեկ էր, իսկ իրենց սայլերն ու սայլակները բանեցնողները ստանում էին օրական վարձ մեկ ռուբլի 50 կոպեկ:

Պեղումները տևում էին երեք ամիս՝ հունիս, հուլիս և օգոստոս:

Բանվորներն աշխատում էին դանդաղ, զգույշ, պեղման հատուկ վարպետությամբ, որովհետև նրանք կոչված էին աշխատանքի պեղելու համար և ոչ թե քանդելու... Տեղ-տեղ, ըստ պահանջի, պեղված կամ պեղվելիք հողը մաղվում էր ցանցի միջոցով: Որոշ տեղեր էլ բահը և բրնձը կանգ էին առնում և հողն սկսում էին զգուշությամբ քերել հատուկ մետաղե ճանկերով: Պեղման ընթացքում նորություններ ի հայտ գալու դեպքում բանվորը կանգնում և բարձրացնում էր իր ձեռքը. դա պայմանական նշան էր, որ անմիջապես հասնում էր հարգելի գիտնականը: Որոշ տարիներ, երբ միևնույն ժամանակ պեղումներ էր կատարվում երկու տարբեր վայրերում, այդ դեպքում պրոֆեսորը պեղման վայրերը շրջում էր ձիով:

Անի քաղաքի պեղումների աշխատանքների ընթացքում մարզվել և հրմտություն էին ձեռք բերել մի շարք բանվորներ, որոնք իրենց աշակուրջ և հմուտ աշխատանքի շնորհիվ համարվում էին վարպետ պեղողներ. դրանցից հիշում եմ Խարկով գյուղից Մուքայելին, Գաբրիելին, Տիգրանին:

Հաշվապահ, գանձապահ և գրասենյակային այլ աշխատողներ գիտարշավը չունեն, այդ բոլորի պարտականությունները կատարում էր ինքը՝ պրոֆ. Մառը:

Բանվորները պատկառանք և սեր էին տածում դեպի հարգելի գիտնականը: Նրանք գտնում էին նրա մեջ մարդկային ջերմ ու անաչառ վերաբերմունք, որը սովորական չէր, այդ շինականները տեսել ու զգացել էին միայն պրիստավների, յասաուլների, ստրաժնիկների ու քյոխվանների դաժանություններն ու կոպտությունները և շոյվում էր նրանց սրտերը, երբ հանձինս մեծ գիտնականի տեսնում էին նաև մեծ մարդուն:

«ԽԵԼԱՌԸ»
ՔԱՎՈՐ

Իգաձորի այրերում բնակվող երեխաները Արային «խելառ» էին անվանում նրա տարօրինակ բնավորության համար: Արան խելացի տղա էր, սակայն ուներ վերին աստիճանի արտասովոր ու կատակասեր բնավորություն: Նրա տարօրինակություններն ու կատակները հասնում էին ծայր աստիճանի, երբեմն վրդովեցուցիչ, սակայն մեծ մասամբ ծիծաղաշարժ վիճակի:

Համառ էր «խելառը». չնայած մորս հորդորներին ու վրդովմունքին, նա երբեմն մերկանում էր Ադամա մերկությանը, ունենալով միայն կոշիկներն իր ոտքերին, գլխին կրում էր լրագրից ոլորած երկար, սրածայր, ձագարաձև մի գլխարկ, ծայրին կապելով գունավոր փալասի մի կտոր, որի ծուպերը կախված էին թղթե այդ արտասովոր գլխարկի ծայրից: Առնում էր ձեռքին մի ճիպոտ՝ որպես գավազան, Ֆինդոյի վզից կապում էր պարանը և իր ետևից քարշ տալով գամփոին՝ թափառում քարակույտերի և ավերակների մեջ: Նրանց ընկերանում էր փոքրիկ Բոչկան: Երբեմն ես և Վահրիճը հետևում էինք «խելառին» և ծիծաղից թուլանում նրա կատակների և ծիծաղաշարժ տեսքի վրա:

Մի օր «խելառը» իր շքախմբով գնացել էր փլված աշտարակը: Դա Անի քաղաքի ամենաբարձր աշտարակն է եղել. նա իր բարձրությամբ գերազանցում էր Մանուչեին: Այդ բարձր աշտարակը փլվելուց հետո՝ քարակույտների մեջ մնացել էր վայր ընկած մի խոշոր զանգված, որը ցույց էր տալիս աշտարակի բազմանկյուն, բոլորաձև մարմինը և այդ զանգվածի մեջ երևում էին ոլորապտույտ քարե աստիճանները: Փլված աշտարակի այդ խոշոր բեկորը ընկած էր մի փոքր թեք վիճակում, այնպես որ հնարավոր էր մի ծայրից մտնել և մյուսից դուրս գալ: «Խելառը» մտավ աշտարակի բեկորի մեջ, Ֆինդոն ու Բոչկան հետևեցին նրան: Եվ երբ բեկորի մյուս անցքից ծաղրածուի թղթե սրածայր գլխարկը գլխին երևաց Արան, մի խումբ գեղջկուհիներ, որոնք եկել էին մոտակա գյուղից ավել հավաքելու, տեսան աշտարակի միջից դուրս եկող այդ տարօրինակ կերայարանքը, սարսափահար ձգեցին իրենց հավաքած ավելի խորձերը և փախան դեպի հայր սուրբի բնակարանը: Նրանք վազում էին խելակորույս և մերթ ընդ մերթ ետ նայելով աղաղակում. «Խելառը... Խելառը...»: Մեզ համար անշափ զվարճալի էր այդ տեսարանը: «Խելառը», ինքնագոհ ծայիտը դեմքին, արագ մագլցեց փլված աշտարակի խոշոր

բեկորի գլխին. ձեռքերով ու ոտքերով անորոշ շարժումներ էր անում, սարսափ ազդելու համար անաբեկված հարսներին: Այսպես էր «Խելաղը»:

Օհանի կինը՝ Չմոն, Իգաձորի պատմական այրերում երկունքի մեջ մտավ և լույս աշխարհի բերեց մի աղջիկ: Եվ ահա մի օր, մայրս ինձ ու Արային վերցրեց ու գնացինք Իգաձոր՝ Չմոյին այցի: Մերթ ընդ մերթ ճշում էր բարոտի մեջ փաթաթված նորածինը: Հինավուրց այրը արձագանքում էր նրան, ստես ուրախանալով, որ մի շունչ էլ ավելացավ Իգաձորում: Այնտեղ էին Իգաձորի համարչա բոլոր կանայք. մեկը հաց էր թխում, մյուսը երեխային խնամում, իսկ Օհանի մեծ աղջիկը՝ Հեղինեն, նորածին քրոջ լաթերն էր լվանում:

Դեռ պտկած էր ուժասպառ Չմոն: Մի փոքր գրույցից հետո, Չմոն խնդրեց մորս, որ ես կամ Արան նորածնի կնքահայրը դառնանք: Մայրս առաջնությունը տվեց իր ավագ տղային՝ Արային: Երեխաները ուրախացան, իմանալով, որ «խելաղը» քավոր է լինելու: Այդ օրվանից մայրս կոչվեց քավորամայր, Չմոն՝ սանամեր, «Խելաղը»՝ քավոր:

Ի՞նչ դնել երեխայի անունը:

Մայրս առաջարկեց նորածնին կապել պատմական քաղաքի անցյալի հետ և անունը դնել Այծեմնիկ: Չմոն սկզբում առարկեց, սակայն, երբ մայրս պատմեց հերոսուհի Այծեմնիկի սխրագործությունների մասին, թե ինչպես մի օր Անին շրջապատվեց թշնամիներով: Հնչում էին ուղեգրեր և փողեր և թմբուկների զարկերի ու վայրենամունչ աղաղակների ներքո վայրագ ցեղերի ահուկի հորդաները հարձակման դիմեցին: Գործում էին բաբանները տենդային թափով: Անվեհեր անեցիները խիզախորեն ետ էին շարտում անողոր թշնամու գրոհները: Թշնամուն հաջողվեց գտնել քաղաքի թույլ պաշտպանված կետը և վայրենի աղաղակներով, ուժեղ հորձանքով հարձակման դիմեց: Նրանք պարիսպներն ի վեր մագլցում էին ելարաններով... Այդ պահին երեվաց Անիի անձնվեր հերոսուհին՝ Այծեմնիկը: Նա մարտնչում էր կատաղի վագրի նման, խրախուսելով ու ոգեշնչելով զինվորներին և լայնալիճ աղեղը ձեռքին, շեշտակի հարվածներով մահ էր սփռում թշնամու շարքերում: Անեցիները ոգևորված, ուժեղ թափով ետ շարտեցին թշնամու կատաղի գրոհը:

Մարտը գնալով սաստկանում էր:

Թշնամու, մի հմուտ նետաձգի աչքից չվրիպեց խիզախ հայ օրիորդը: Նա զայրացած լաթեց աղեղը և անողոր նետը ուժեղ թափով խրվեց հերոսուհու լանջի մեջ: Այծեմնիկը չկորցրեց իրեն: Նա ջղաձգորեն դուրս քաշեց կրծքից նետը և առանց հավասարակշռությունը կորցնելու՝ լաթեց լայնալիճը և միևնույն նետը ետ ուղարկեց անարգ թշնամուն... Նետը մահագույժ սուլոցով ճեղքեց օդը և մխրճվեց նույն նետաձգի կոկորդը: Նետի սլաքը թափ առ-

նելով դուրս ելալ հակառակորդի ծոծրակից, տապալեց նրան և գամեց գետնին:

Հերոս օրիորդը արյունաքամ էր լինում: Հարվածը մահացու էր:

Զինվորները վրեժխնդրությամբ լցված, որպես քաջապատիվ արծիվներ, սուտերամերկ դուրս նետվեցին քաղաքի պարիսպներից և մխրճվեցին թշնամու խիտ շարքերի մեջ: Նրանք անխնա հոշոտում էին թշնամուն... Այդ հատվածում թշնամին անաբեկված, խուճապահար փախուստի դիմեց:

Վիրավոր Այծեմնիկը մարտնչում էր մինչ իր վերջին կաթիլ արյունը... Նա ընկալ պատնեշի վրա, պատմությունից խլելով հերոսի դափնին:

Բոլորն էլ մեծ հետաքրքրությամբ և հիացմունքով ընդարձակ քարանձավում ունկնդրում էին քավորամայր Նունեի այս պատմությունը՝ կապված Անի քաղաքի հայրենասեր Այծեմնիկի ավանդության հետ, որը դարեր շարունակ, սերնդե-սերունդ անցնելով, հասել է մեզ, որպես թանկագին ավանդ հաղորդակից դարձնելու մեր հետագա սերունդներին հայրենասեր հայ օրիորդի նվիրական կերպարին:

Զմոռն տվեց իր համաձայնությունը:

Եվ ահա մի օր, Վահրիճի ուղեկցությամբ, գնացինք Իգաձոր՝ Այծեմնիկի կնունքը կատարելու: Քավորմայր Նունեն գնել էր Անի գյուղի խանութից գանազան կտորներ, Ալեքսանդրասյուլից բերել էր տվել մի փոքրիկ ոսկե խաչ՝ կնքվող երեխայի համար:

Քավորը ձեռքին բռնած ուներ մի խոշոր աքաղաղ: Հայր Միքայելի բնակարանից մինչև Իգաձոր ես և Վահրիճը անընդհատ ծիծաղում ու զվարճանում էինք «խելառ» քավորի կատակների վրա: Նա մի բույե հանգիստ չէր տալիս խելճ աքաղաղին և հարկատրում նրան տարբեր ձայներ հանելու, որին ինքն էլ ձայնակցում էր: Մայրս թե վրդովվում և թե ակամայից ծիծաղում էր:

Ուրախ ժամանցով հասանք Իգաձոր:

Իգաձորի բնակիչները հավաքվել էին Օհանենց քարայրը: Այնտեղ էր Իգաձորի նահապետը՝ Ագոն: Նա իր առօրյա գավազանը ձեռքին, կարգադրություններ էր անում: Բացի Ագոյից, բոլոր տղամարդիկ բացակայում էին. նրանք գրադված էին Անիում իրենց աշխատանքներով:

Եկել էր Արագ գյուղի քահանան կնունքի արարողությունը կատարելու: Նա գիտեր, որ Արամ Վրույրի տղաներից մեկը քավոր պիտի լինի, և երբ պետք է սկսեր կնունքի արարողությունը, նայելով ինձ՝ հարցրեց Զմոռին. «Քավորը սա՞ է...»: Այդ պահին, մանկական պարզությամբ և անմեղությամբ, Օհանի մեծ աղջիկը՝ Հեղինեն, կտրելով քահանայի խոսքը, գոչեց բարձրաձայն.

— Չէ, չէ, ադիկա չէ... Բալորը «խելաուն» է, «խելաոր»...

Կնունքը կատարվեց: «Խելաոր» դարձավ քալոր:

Կնունքի առթիվ երեք աքաղաղ զոհվեց՝ Ագոյի, Օհանի և «խելաուն» քալորի կողմից:

Իգաձորում ուրախություն էր:

Այժեմնիկը մկրտվեց:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԸ

Թորամանյանը առանց որևէ նյութական ակնկալության, հազար ու մի զրկանքներով աշխատում էր հաճուն մի մեծ ու սուրբ գաղափարի: Նա իր աշխատանքների ընթացքում հանդիպեց մի տհաճ միջադեպի, որը թողեց բացասական ու ցավալի հետևանք:

Ծարտարապետը զգայուն սրտի տեր մարդ էր. ամեն մի փոքր բանից անգամ ազդվում և յուրաքանչյուր անախորժություն շատ ծանր էր ընդունում: Նրա այդ կարևոր ու մեծ աշխատանքի համար հաճախ հարկ էր զգացվում փորփրումներ անել հուշարձանների շուրջը, բայց նա իրեն թույլ չէր տալիս օրինականության սահմաններից դուրս գալու և ոչ էլ կամենում էր ամեն անգամ թույլտվություն խնդրելու:


Անիի տերն ու տնօրենը Մառն էր: Նա խստիվ արգելել էր Անիից մի քար անգամ դուրս տանել: Նույնիսկ կայսերական օրենքին հակառակ, Անիում գտնված իրերը թողնում էր իր տեղում և գտնում էր, որ պեղումներից հանված իրը պետք է մնա Անիում՝ այն վայրում, որին նա պատկանում է: Միևնույն կայսերական օրենքը հրահանգում էր՝ երկրի սահմաններում ի հայտ եկած բոլոր արժեքավոր հնությունները կենտրոնացնել կայսրության մայրաքաղաքում:

Ծարտարապետը ձեռնամուխ էր եղել Անիի պարիսպների չափագրությանը և մի տեղ պարսպի իսկական բարձրությունը ճշտելու համար հարկ էր եղել մի քանի բահ հող ետ տալ: Այդ քանը չափագրանցված գույներով տեղեկացնում են Մառին, ասելով՝ իբր թե Թորամանյանը պեղումներ է կատարում:


Մառի բնավորության մեջ ընդգծելի էր կորեկտությունն ու զսպվածու-

թյունը. նա հազվադեպ էր արտահայտում իր վրդովմունքը, բայց երբ պոռթկում էր՝ թող ու փախիր:

Այդ ոչ ճիշտ տեղեկությունը առիթ տվեց գիտնականին խիստ զայրանալու: Թորամանյանն էլ, Մատի այդ անտեղի զայրույթից վշտացած՝ թողեց պարիսպների չափագրությունն ընդմիջտ: Եվ այդպիսով մենք կորցրինք Անիի քաղաքաշինական չափագրությունների այդ կարևոր մասը:



**ԵՐԿԱԹԵ
ՊԱՏՐԻԱՐՔԸ
ԱՆԻՈՒՄ**



Ավերակների քաղաքի պատմությանն նշանակալից էջերից մեկը կարելի է համարել ազգընտիր կաթողիկոս Ամենայն Հայոց Մատթեոս Բ-ի այցը Անի:

Կարմիր սուլթանի գահընկեցությունից հետո, երբ Երկաթե պատրիարքը ազատագրվելով արքայի դաժան ճիրաններից, հանդիսավոր մուտք գործեց Կ. Պոլիս, արդեն ընտրված հայ ազգի կողմից Ամենայն Հայոց կաթողիկոս: Նա Ա. Պետերբուրգում այցելեց ռուսաց կայսեր և ապա ճանապարհ ընկավ դեպի Էջմիածին՝ Լուսավորչի աթոռը ընդունելու: Սակայն, Ամենայն Հայոց քահանայապետը, ըստ նախնիների սովորության, իր սրբազան պարտքը համարեց նախ այցի գնալ հայ իշխանության մայրաքաղաքը՝ Անի, չնայած նրա թափուր վիճակին և ապա՝ ս. Էջմիածին:

Անին ապաստմ էր իր պատվավոր հյուրին:

Հեռավոր և մոտակա գյուղերից ու ավաններից Անիի հյուսիսային պարիսպների առջև հավաքվել էր հոծ բազմություն:

Պարիսպների վրա ամրացված էր մի մեծ տախտակ, որի վրա կարմիր տատերով գրված էր «բարի գալուստ»: Պարիսպների առջև սեղանի վրա դրված էր աղ ու հաց: Այնտեղ էր պրոֆեսոր Մառը իր աշխատակիցներով ու բանվորներով:

Մոտ ժամը 1-ին (1909 թ. հունիսի 25-ին) Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանեց Անի: Նրան հետևում էր հսկա մի բազմություն, որ հավաքվել էր ճանապարհին, այնպես գյուղերից ու միացել Վեհի շքերթին:

Հյուսիսային պարիսպների մոտ Վեհը իջավ կառքից և մոտեցավ սեղանին, որտեղ պրոֆեսոր Մառը մատուցեց Վեհափառ Հայրապետին աղ ու հաց և պատմական քաղաքի հյուսիսային ամրությունների առջև արտասանեց հետևյալ ճառը.

Վեհափառ Տէր.

«Բարեհաճեաց և ընկալ սիրով զոր մատուցանեմ պատկանաւօր առաջի Քո զաղ և հաց տեղոյս այսորիկ:

Ի վսեմէ և թանկագնոյ, զկնի գրեա թէ ինն դարուց, յեղերոյ յառաջնոյ Հայրապետական այցելութենէդ վայրիս, յակամայս հրաւիրիմ համարձակ խօսիլ ի դիմաց ատերեալ և թափուր շինիս:

Բարեօք եկեացէ կամօքն Աստուծոյ, ընտրեալ յազգէն հայոց, հաստատեալ ի Կայսերեն համայն Ռուսիոյ օժանելիդ վաղորդյան, և ի բարիս եղիցի ի սոռացոնս եկելոց յիշատակարանացս՝ քաղցր գալուստդ, որ մխիթարէ և յորդորէ և խրատէ: Ահաասիկ տեղի իմն, յորում յաւետ անկ իցէ ի միտս ածել, ի զգաստութիւն մեծամեծաց աշխարհիս, զառակն զայն թէ «աւաղ փառաց անցաւորի», սակայն նիւթեղէն կենացն անտի, ընդ միշտ անցելոց, յար կան և մնան նոցին շինարար հոգոյ պերճ իրեղէն վկայութիւնքն, որք ի ձեռն պեղմանց ի լոյս հանեալ և իմաստասիրութեամբ կենդանացուցեալ մշտնջենաւոր ճշմարտութեան ակամբք պատուականօք լցցեն զգանձարանն ընդհանուր մարդկային գիտութեան, ուստի և զիմացական շտեմարանսն զաւակաց Քոց հոգևորաց որդոցն Հայկայ:

Չայստսիկ ոչ եթէ վարդապետեմ, քաւ լիցի, այլ խոստովանիմ և վկայեմ: Աստ հմտալից իմաստութեանդ չէ պիտոյ թարգմանիչ կամ մեկնիչ:

Գեղեցկագոյն քան զայլ ոք ի շնչատրաց վարդապետից են, զորս վաղվաղակի տեսչիք աչօք ձերովքդ զքարինսն անշունչս Անտոյ, բազմամարդս, բազմագիրս և բազմալեզուս:

Եւ արդեամբ Անտոյ նիւթականի մեռելոյ՝ կեայ վերին Անի, Անի տեսականն, Անի դիտականն:

Եւ զի հաճոյ եղև Քեզ փոյթ առնել զկանխեալ ընթանալոյ ընդ դժուարինս ի հանգուցեալ մայրաքաղաքս երբեմն, արդ անպատս, այդոքիկ զլոյս մեր ամրացուցանեն թէ ոչ միայն կեայ Անի գիտականն այլ և կեցցէ:

Բարի լիցի գալուստդ.

Կեցցէ Վեհափառն»:

Մայրաքաղաքի պարիսպների առջև հնչում էր Հայոց աշխարհի հին դասական լեզուն, որի գեղեցիկ հնչյունները միաձուլվում էին քաղաքի ամրությունների վիթխարի կառուցվածքների հետ՝ տալով նրանց ավելի վեհ ու սիգապանձ կեցվածք:

Վեհափառը պրոֆեսոր Մառին պատասխանեց այսպես.

«Այո, հարգելի պրոֆեսոր, այս ավերակները, որ լուռ կանգնած են այստեղ, կհիշատակեն հայուն իր անցյալը. անցյալ փառավոր, անցյալ երջանիկ... կհիշեցնեն այն ժամանակները, երբ հայ կյանքը ևս կպայծառանար հաղթ ու հոյակապ:


Դուք, հարգարժան պրոֆեսոր, որ Ձեր ամբողջ եռանդը և սերը նվիրած եք այս ավերակներուն, Ձեր պեղումներով հսկայական ծառայություն կմատուցանեք գիտության: Դուք ձեր պեղումներով ի լույս աշխարհի կհայտնեք մի ժողովրդի, տարաբախտ և տարագիր, անցյալ պանծալի կյանքի պատկերը ամբողջովին: Յույց կտաք հայ ազգին իր նախնիներուն վսեմ անցյալը...

Ես իմ ամբողջ կյանքիս մեջ կբաղձայի տեսնել այս ավերակները և տեսա ու այս րոպեիս ես ուրախ եմ: Ծարունակեցեք Ձեր բազմարդյուն և բեղմնավոր աշխատանքը, ազնիվ Մառ»:


Հուզված էր Վեհը, նա կանգնած էր թափուր մայրաքաղաքի ավերակների առջև...

Այնուհետև պրոֆեսոր Մառի ողեկցությամբ Վեհը այցելեց Անիի հնադարանն ու քարեդարանը և ապա Մայր տաճարը, Փրկիչ, Գրիգոր Լուսավորիչ, Առաքելոց, Գագկաշեն և այլ հուշարձաններ...


Հետևյալ օրը Վեհը հրաժեշտ տվեց անեցիներին ու մեկնեց Խոշավանք:



ԵՐԵՎԱՆԻՅԹՆԵՐ



Մեծ գիտնականի օրինակելի և սիրելի աշակերտներից էր Հովսեփ Օրբելին: Նա անխոնջ ու ժրաջան աշխատում էր Անի քաղաքում իր հարգելի ուսուցչի ղեկավարության ներքո, և դարբնում էր իր միտքն ու գիտելիքները



Անի.— պրոֆեսոր Ն. Յա. Մառ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1908 թ.



Անի.— Թ. Թորամանյանը Տիգրան Հոնենցի եկեղեցու գալիթի ավերակներում:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1904 թ.

ուսումնասիրությունների ու հետազոտությունների այդ լայն ասպարեզում: Նրա մտքի ու հոգու մեջ դրոշմվում էին անիրական քաղաքի պատմության մագաղաթյա էջերը և նյութական մշակույթի բազմալեզու մնացորդների գունագեղ պատկերները:

Ամբողջ էությանը կլանված աշխատում էր ապագա մեծ գիտնականը Անիի մառյան հնադարանում: Հնադարանի շենքը արդեն մի հնությունն է՝ կառուցված Աշոտ Ողորմածի կողմից: Նա ծանրանիստ հանգչում է Ախուրյան ձորի աջ շորթին և իր բարձր ու լայն լուսամուտներով վերից նայում խոր ու ոլորապտույտ ձորի մեջ օձի պես գալարվող գետի պղտոր ջրերին:

Իրիկնամուտ է: Ամենուրեք սիրտ ճնկող լռություն, միայն անդնդախոր ձորի միջից լսվում է խուլ ձայնը գետի ընթացքի: Իսկ այնտեղ, հնադարանի սյունազարդ սրահի ծայրում, քրիստոնեական նշանը կրծքին, ձեռքերը պարզած հորիզոնական դիրքով, հագած արքայական երկար վերարկուն, որի փեշերը ծածկում են ոտքերը, վեհապանձ կեցվածքով կանգնած է Բագրատունյաց մեծ գահակալը. դա Գագիկ Ա-ի արձանն է, որը 1906 թվին գտնվեց Գագկաշեն սուրբ Գրիգոր հրաշակերտ եկեղեցու պեղումներից:

Այս պատմական ոլորտում, երբ մարդ տարվում է խոր մտքերով ու վառ երևակայություններով, և իրիկնամուտը, որ մշուշապատում է իր շրջապատը, առարկաները դառնում են ավելի խորհրդավոր: Պատահում են բուպեներ, երբ մարդու աչքերին խորախորհուրդ ու պայծառ պատկերներ են երևույթանում՝ կապված միջավայրի կյանքի, դեմքերի ու առարկաների հետ:

Եվ ահա, խորը մտքերի մեջ թափանցած՝ մտքեր, որ նրան տանում են դարերի խորքերը, մտքեր, ուր ծնվում ու ետում են բոց հույզերը... երիտասարդ գիտնականը բարձրացրեց իր գլուխը... Կիսախավարի մեջ մշուշով պարուրված հայոց աշխարհի իմաստուն վեհապետի՝ Գագիկի արձանը գամվեց նրա հայացքի մեջ... Որպես խորհրդավոր երեկոյի լռության մեջ ծնված կախարդական մի ցնորք, շունչ ու հոգի առավ 10-րդ դարի այդ հրաշակերտ արձանը... Գագիկը շարժվեց... Եվ վեհապետին վայել, վսեմ ու ծանր քայլերով նա ընթանում է առաջ... Փշաքաղվեց երիտասարդ Օրբելին...

Ո՞վ կարող է չափել այդ խորհրդավոր լռության մեջ ծնվող մտքերի ու հույզերի խորախորհուրդ պատկերների անհունությունը... նրա մարմնի միջով անցնում էին մահասարսուռ շանթեր... Սիրտը բաբախում էր ուժգնորեն... Ու սառը քրտինքը պատել էր ճակատը... Այդ դաժան մղձավանջը, որպես իրական պատկեր, իր ճնշող ծանրությամբ կանգնեց նրա առջև...

...Աչքերը մթագնեցին... Եվ նա նվաղած ընկավ հատակին...

Ավերակների այդ կախարդական քաղաքում, ուր կուտակված են դարերի խորհուրդները, նման երևույթներ պատահել են և ուրիշների հետ:

Գիշեր է:

Լուսնի շողերը ողողել են քնի մեջ ընկղմված մայրաքաղաքի փողոցներն ու ավերակ շենքերը, որոնք պատմության ձախորդ նակատագրի ծանրության տակ կուացած՝ տարածված են կախարդական քաղաքի քարակույտերի մեջ:

Ոչ մի շրշյուն:

Լուռ է քաղաքը՝ ծանրաբեռնված մութ խորհուրդներով, միայն խոր ձորի միջից լսվում է խուլ մրմունջը Ախուրյան գետի, որն ասես մի վշտակիր ակա-նատես ողբում է դժբախտ քաղաքի անցավոր փառքն ու հզորությունը...

Հինավուրց քաղաքի հարավ-արևմտյան կողմում, բարձրադիտակ բլրի վրա, այս ու այն կողմ կանգնած են միջնաբերդի փլատակները: Գիշերվա խորհրդավոր լռության մեջ, լուսնի արծաթափայլ շողերի տակ, երևում են նրանց աղոտ ուրվագծերը:

Ահա մի մատուռ կանգուն գմբեթով նստած է բլրի հարավային լանջին: Իսկ այնտեղ, բլրի կենտրոնում, Միջնաբերդի պալատի մեջ դահլիճի ավե-րակներն են, որոնք իրենց տիրապետող դիրքով իշխում են քաղաքի վրա: Ահա և Կամսարականների օրերից մնացած 6-րդ դարու եկեղեցին:

Հեռվում, ավերակներից մեկի գլխին թառած, որպես մի գուժկան, կորն-չում է բուն և մահագուժ ձայնով, ասես գալիք արհավիրքների սարսափն է ահագանգում մեռած քաղաքին:

Եվ գերեզմանական այս լռության մեջ, այդ խորհրդավոր գիշերվա պա-հին, դեպի Միջնաբերդ ձգվող «Մատի» փողոցով, ծանր մտքերի մեջ խորա-սուզված, համրաքայլ ընթանում է մի երիտասարդ: Նա ինքնամոռացության գիրկն ընկած, տարված պատմական անցյալի անեղծվածային դրվագների հետ կապված այլևայլ հարցերով, քայլում էր... Այդ մտքերի մեջ կենդանի պատկերների նման պտտվում էին դեպքերն ու դեմքերը հեռավոր անցյալի...

Եվ հանկարծ... կախարդական քաղաքի խորհրդավոր գիշերվա ծանր լռությունը խանգարվեց... Ասես հինավուրց քաղաքի փլատակների, անդրն-դախոր ձորերի և մթին այրերի մեջ ապրում են դեռ գերբնական զորություն-ներ... Նրա ականջին աղմկեցին դոփյունները ձիերի սմբակների, որոնք թըն-դացնում էին փողոցի սալերը անգուսպ հարվածներով... Ետ դարձրեց գլուխը երիտասարդը և շանթահար եղած արձանացավ տեղում... Յն՝րք... թե՛ իրականություն...

Սանձարձակ մրրիկի նման մի խումբ զինվորներ, երախները փրփրակա-լած ամենի երիվարներին հեծած՝ սրարշավ անցան սալշանքի ու սարսափի

մեջ քարացած երիտասարդի առջևից... Նրանք հագած էին զինվորական պատմական տարագ: Լուսնի շողերի տակ կայծկլտում էին մետաղաձուլ վահանները, հիզակների ծայրերը, սրերի երախակալները, ամրակոտ զրահներն ու սաղավարտները... Նրանց ընթացքից ծածանվում էին ծիրանիները հեծյալների...

Ցնցվեց երիտասարդը... Ծանր մտքերի ու վառ երևակայությունների ծնունդ էր դա...

Եվ մինչև որ կտթափվեր, այդ դյուրական ցնորքը մի սկևթարթում անհետացավ ու ձուլվեց մոռյլ խավարի մեջ...

Դա, պրոֆեսոր Մառի աշակերտ՝ հարգելի Լևոն Քալանթարն էր:

ՏԱՐԻՆԵՐ

ԱՆՑ

Անցան տարիներ...

Արդեն պատանի էի և անհասկանալին աստիճանաբար պարզվում և հասկանալի էր դառնում ինձ համար այնքանով, որքանով որ կարող էր ընկալել պատմական այդ շրջափակում մեծացած մի մանուկ:

1913—14 թվականներին ես արդեն բավականին ծանոթ էի Անիի պատմությանը՝ հաճախ կլանված ունկնդրում էի պրոֆեսոր Մառի, ճարտարապետ Թորամանյանի, Հ. Օրբելու և հորս բացատրությունները Անիի այս կամ այն հուշարձանի և հնադարանում գետեղված բազմաթիվ իրերի մասին, երբ նրանք բացատրում էին այցելուներին: Եվ այդ գիտելիքներով զինված՝ հաճախ առիթ եմ ունեցել Անիի այցելուներին առաջնորդելու դեպի հուշարձանները և բացատրական փոքրիկ տեղեկություններ տալ նրանց:

Թե պրոֆեսոր Մառը, թե Թ. Թորամանյանը, թե Հ. Օրբելին և հայրս հատուկ մարդկանց էին միայն առաջնորդում ու բացատրում, այնպես որ այցելուների մեծ մասի հոգսը ընկնում էր մնացյալ անեցիների վրա, որոնց թվում և ինձ:

Ավերակ քաղաքի քարակույտերի, փոսերի և թմբերի մեջ շրջագայելիս՝ օտարականը առանց առաջնորդի կոճվարանար:

Ինձ ծանոթ էին Անիի բոլոր շատավիղներն ու կածանները, որոնց վրայով դեռ փոքր հասակից շատ անցողւարձ էի արել: Եվ հաճույքով ուղեկցում

Էի բազում այցելուների և մեծ բավականություն էի ստանում, երբ մեծահասակ կանայք և տղամարդիկ ուշադիր ունկնդրում էին ինձ ու զանազան հարցեր տալիս:

Ես պատմում էի Անի քաղաքի հիմնադիր Մեծ իշխանի՝ Աշոտ Բագրատունու մասին: Բացատրում էի, թե ինչպես հնում Անին եղել է ամրոց Կամսարական իշխանների, թե ինչո՞ւ Գագիկ Ա. հայոց թագավորը կրում էր գլխին փաթոց (չալմա), ժամանակին որտեղից են բերել Անի խմելու ջուր, ցույց էի տալիս ջրատար կավե խողովակները, թե երբ են կառուցվել Աշոտյան և Սմբատյան պարիսպները, թե ինչպես Արշակունիների ժամանակ Բագրատունիները եղել են թագադիր ասպետներ, թե ինչպես արտագաղթի ժամանակ անեցիները, որոնց մի հոսանքը գնացել է Ղրիմ, հիշատակի համար իրենց հետ տարել են Անիի Մայր եղեկեցու դուռը, որը գտնվում է Ղրիմի Թեոդոսիա քաղաքի հայոց եկեղեցում, որը ես տեսել եմ 1905 թվին, սպարապետ Վահրամ Պահլավունու, Կատրանիդե թագուհու, Տրդատ ճարտարապետի, Բագրատունի թագավորների և նշանավոր այլ մարդկանց մասին: Պատմում էի ժողովրդական սվանդույթներ Հովվի եկեղեցու, Այծեմնիկի սխրագործության և շատ ու շատ բաների մասին, որոնք կապված էին Ավերակների քաղաքի հետ:

Առաջնորդում ու ցույց էի տալիս Անիի նշանավոր կոթողները՝ Մայր տաճարն իր հույակապ կեցվածքով, Գագիաշեն սուրբ Գրիգոր բոլորակ եկեղեցին, Առաքելոցը իր գավթի խաչաձևող կամարներով, Մանուչեն, Տիգրան Հոնենցի եկեղեցին իր բազմաթիվ գեղեցիկ որմնանկարներով և արտաքուստ բուսական ցանցի մեջ քանդակված զանազան կենդանիներով, Ապուղամբենց, Փրկիչ, Կուսանաց գողտրիկ եկեղեցին թառած Ախուրյանի ձորի լանջերին՝ հսկա քարածայրերի վրա, Միջնաբերդի փլատակները, Կամսարականների 6-րդ դարու եկեղեցին, Կատրանիդե թագուհու դամբարանի փլատակները, Ախուրյանի վրա կամուրջի ավերակները...

Առանց զլանալու ես տանում էի հետաքրքրասեր այցելուներին Իգաձորի և Ծաղկոցաձորի պեմզայի ահռելի զանգվածների մեջ փորված գեղեցիկ այրերը, Տիգրան Հոնենցի տոհմային դամբարանները այրերի մեջ գետնեղված, ուր մի փոքր գերեզմանից գտնվեց մի փոքրիկ աղջկա զգեստ, կուսության գոտին և ոսկերթել ասեղնագործ կրծքակալը: Ցույց էի տալիս քաղաքի հյուսիսային պարիսպները իրենց հսկա բուրգերով ու հզոր դարպասներով և պարիսպների առաջ կոփածո քարերով կառուցված մեծ խրամատը, որտեղ վտանգի դեպքում ջուր էին լցնում անեցիները: Ցանկացողներին առաջնորդում էի ստորերկրյա Անիի նեղ ու լայն անցքերով, որոնց մեջ իշխում էր հավիտենական թանձր խավարը, ուր անցքերը լաբիրինթոսի նման ճյուղավոր-

վում ու խճողվում են: Եվ այդ շրջագայությունների և բացատրությունների ժամանակ հոգիս լցվում էր հպարտության զգացումով՝ ցույց տալով մեր շինարար ու հանճարեղ նախնիների գեղեցիկ գործերը:

ԾԱՆՐ

ԳԻՇԵՐՆԵՐ

Թափառող աներևույթ ոգին Անիի ավերակներում...

Գիշերը իջել, պառկել էր ավերակ քաղաքի վրա ու ծածկել այն մութ իմաստությամբ... Սակայն ինչե՛ր չեն կարող ծնել խորհրդավոր գիշերները մարդու երևակայության մեջ... Ամեն մի խուլ շարժում, ամեն մի շշուկ վեր են ածվում ահասարսուռ տեսարանների այդ կախարդական, մեծ խորհուրդների մեջ թաղված փլատակներում...

Ծերունի Կյասսոն սուսկումով պատմում էր, թե ինչպես վերջերս գիշերները, ավերակ քաղաքում թափառում է մի աներևույթ Ոգի, թե ինչպես երկրներից լույս է իջած շրջող Ոգու վրա: Նա հավատացնում էր, որ տեսել է երկու անգամ, թե ինչպես փլված աշտարակից դեպի Առաքելոց շարժվում էր լույսը աներևույթ Ոգու հետ միասին... Պատմում էր նա խոհանոցում նրստած, իր անբաժան ծխամորճը ձեռքին: Նրան շրջապատել էին վանահոր սպասավորները և սուսկումով լսում էին խորհրդավոր պատմությունը՝ աներևույթ Ոգու հետ կապված...

Մի ծանր գիշեր էր...

Ամեն մարդ քաշվել էր իր օթևանը: Ես դեռ նստած էի մեր դռան շենքին, երբ լսեցի ծերունի ջրկիրի դողդոջուն ձայնը.

— Փիրը... Փիրը...

Եվ նա լուռ թևիցս քաշեց և մենք բարձրացանք գոմի տանիքը ու նայում էինք մութի մեջ Առաքելոցի ուղղությամբ:

Եվ իրավ, խավարի մեջ դանդաղ տատանվում էր խորհրդավոր լույսը ու շարժվում առաջ...

Ես շփոթվեցի... Սարսուռ անցավ մարմնովս... Մղձավանջային այս ծանր տեսիլքը ճնշում էր ինձ, սառը քրտիկները պատել էր մարմինս... Վախից ընդհուպ մոտեցա ծերունուն և զգացի, թե ինչպես նա դողում էր:

Ահաբեկված ջրկիրի դողդոջուն շուրթերը մրմնջում էին մի ինչ-որ աղոթք, ինձ անհասկանալի բառերով...

Ավերակների քաղաքում շրջում է Անիի Ոգին...

Սարսափը տիրել էր թե վանահոր սպասավորներին և թե Իգաձորի բնակիչներին...

Մի քանի ծանր գիշերներից հետո առեղծվածը լուծվեց: «Անիի Ոգին» դա երիտասարդ գիտնական Օրբելին էր:

Նա վերժանում ու հավաքում էր Անի քաղաքի վիմական արձանագրությունները: Հերթը հասել էր Առաքելոց եկեղեցու գավթի ներսի արձանագրություններին և միակ հարմար միջոցը դյուրին և ճիշտ վերժանելու համար, դա գիշերը լամպարի լույսով աշխատելն էր: Գիշերը լամպարի լույսը թեք սահում է վիմագրված պատի վրա և արձանագրված տառերը կենդանի ցցվում են աչքիդ առջև:

Աշխատանքը ավարտված էր ամենայն խնամքով և պատրաստ հրատարակության: Նույնիսկ հատուկ տառատեսակներ էին ձևավորված ու ձուլված, որոնց վրա հարգելի գիտնականը անբուն գիշերներ էր լուսացրել:

Հարգելի Օրբելին անձամբ, ակադեմիայի տպարանում, խնամքով շարել էր այդ նոր տառատեսակով, Անիի արձանագրությունների բովանդակությունը իրենց բացատրական մասով:

Արդեն կապված էին տպագրական երեսները, որոնցից արտատպված էր մի օրինակ սրբագրության համար:

Բայց... Ավա՛ղ...

Դեռ նոր էր սկսել սրբագրության աշխատանքը, երբ բնության արհավիրքին զոհ գնաց Հովսեփ Օրբելու արյուն քրտինքով ձեռք բերած վաստակը:

Մի չարաքաստիկ գիշեր ջրհեղեղը սրբեց ու տարավ ակադեմիայի տպարանը, ոչնչացավ ամեն ինչ...

Ու մնաց վշտաբեկ գիտնականը, կսկիծը սրտում, Անիի քարե մատյանի չսրբագրված միակ օրինակը ձեռքին...

Դժբախտ քաղաքի անողորմ ճակատագիրը անխնա հարվածելով, կորցնում, ոչնչացնում էր քրտնաջան վաստակը այն բոլոր անձնվեր մարդկանց, որոնք աշխատել էին Ավերակների քաղաքի պատմության ու մշակույթի ուսումնասիրությանը:

Վերհիշված ցավալի աղետը բացառություն չէ կազմում:

Ճարտարապետ Թորոս Թորամանյանը մինչև իր կյանքի վերջին վայրկյանը ծանր վիշտ ապրեց...

1913 թվին նա գնաց Վիեննա և Վիեննայի համալսարանին կից արվեստի պատմության ինստիտուտին հանձնեց առ ի հրատարակություն հայկական

պատմական ճարտարապետության վերաբերյալ իր ուսումնասիրած չափագրություններն ու գծագրությունները, հուշարձանների վերակազմությունները: Դա մի մեծածավալ ու կարևոր աշխատանք էր, որ նա գլուխ էր բերել հազար զրկանքներով ու քրտնաջան, անդուլ աշխատանքով:

Եվ 1914 թվին, երբ պատրաստվում էր նոր նյութեր հավաքած կրկին այցելել Վիեննա՝ հրատարակության պայմանագիրը կնքելու, վրա հասավ առաջին համաշխարհային պատերազմը, ճանապարհները փակվեցին, բազմահմուտ ճարտարապետը չկարողացավ գնալ Վիեննա և մնաց իր բեդմնավոր աշխատանքը բախտի քմահաճույքին:

Սակայն մեծ հայը այդ ծանր հարվածից չընկճվեց: Նա արհամարհեց ամեն ինչ և շարունակեց իր սուրբ գործը դարձյալ մեծ զրկանքներով:

Եվ ահա, 1918 թվին հասավ երկրորդ հարվածը... Թուրք բարբարոս բանակը ներխուժեց արևելյան Հայաստան: Թորամանյանը արդեն ծանրաբեռնված ընտանիքով, հազիվ կարողացավ իր ընտանիքը և իր թանկագին վաստակի մի մասը տեղափոխել Ղարաքիլիսա (այժմ Կիրովական): Եվ երբ կատաղի, անհավասար մարտերը գնում էին Ղարաքիլիսայի մատույցներում, նա ստիպված եղավ թողնել ամեն ինչ և իր ընտանիքի անդամներով մազապուրծ փախչել ու շունչը առնել Թիֆլիսում:

Ամեն ինչ խաղաղվեց:

Այս անգամ նա ստացավ երրորդ դաժան հարվածը: Ծառ ծանր է, երբ մարդ կորցնում է իր վաստակը, որը ձեռք է բերված բազում զրկանքներով ու քրտնաջան աշխատանքով մի մեծ գաղափարի համար:

Նեգատիվների մի սուվար ժողովածու պատմական հուշարձանների, որը ինքն էր լուսանկարել, մեծ մասը փշուր-փշուր եղած, գծագրերի ու ձեռագրերի մի մասը հափշտակված: Այդ կորած ձեռագրերի մեջ էր «Տեկորի Տաճարի» տակավին չհրատարակված երկրորդ հատորը:

Հարվածները մեկը մյուսի ետևից անողորք ու դաժան մրճահարում էին հեզ ճարտարապետի հողմածեժ ճակատը: Նրա ջերմ հոգին իր ամբողջ էությանը ձուլվել, խմորվել էր մեր ստեղծագործ նախնիների ճարտարապետական հանճարեղ կտուցվածքների, և շնչում էր նա նրանց վեհ շնչով ու տոկում նրանց գեղեցիկ և ջլապինդ մարմիկների տոկունությամբ...

Անխորտակելի էր խանդավառ ուխտավորի կամքը և անընկճելի նրա բունն եռանդը: Նրան դարձյալ տեսնում ենք թուղթ ու մատիտը ձեռքին, չափագրական գործիքներով:

Բազմավաստակ Թորամանյանը դեռ հույս ուներ Վիեննա հանճած իր աշխատությունների ժողովածուի վերադարձին: Սակայն...

1926 թվին նա ստացավ չորրորդ դաժան հարվածը...

Վիեննայի սովետական դեսպանի ջանքերով Հայաստան վերադարձվեց ճարտարապետի աշխատությունները: Այդ ժողովածուից բացակայում էին չորս հարյուր գծվածքներ...

Բայց ճարտարապետի անհողդողդ կամքն ու անսպառ եռանդը դարձյալ մղեց նրան իր նվիրական սուրբ գործին և կանգ առավ, երբ դադարեց բաբախելուց մեծ հայի սիրտը...



Արամ Վրույրը, հայ բեմի այդ անձնավեր ու չքավոր դերասանը, իր սուղ միջոցներով, առանց որևէ օժանդակության, տարիների ընթացքում լուսանկարել և հավաքել էր մի սովոր ժողովածու Անիի և նրա շրջապատի հուշարձանների: Նրան այդ գործին մղել էր ջերմ ու անկաշառ սերը հանդես մեր պատմական մեծ մշակույթի:

1908 թվի թուրքական սահմանադրությունից հետո, 1909 թվին Արամ Վրույրը հայ թատերական խմբի հետ մեկնում է Կ. Պոլիս և իր հետ տանում լուսանկարչական նեգատիվների իր ամբողջ վաստակը: Գործերն այնպես են դասավորվում, որ նա իր նեգատիվների ժողովածուն թողնելով Պոլսում, կարճ ժամանակից կրկին վերադառնալու պայմանով, գալիս է Թիֆլիս: Սակայն Ա. Վրույրին չի հաջողվում վերադառնալ Պոլիս:

1914 թվականին Պետերբուրգի կայսերական ակադեմիան Արամ Վրույրին ապահովում է ճանապարհածախսով, որպեսզի նա Պոլսից բերի իր նեգատիվների ժողովածուն և հանձնի ակադեմիային: Նա պատրաստվեց մեկնելու, բայց 1914 թվի պատերազմը այս անգամ ևս խափանեց նրա մեկնումը և Անիի նեգատիվների արժեքավոր ու հարուստ այդ ժողովածուն կորավ անվերադարձ:

Նմանապես 1918 թվականին Անիի գիտարշավներից տարիների ընթացքում կուտակված բոլոր նյութերը, որտեղ իրենց մասն են ունեցել շատ-շատերը, իսպառ կորան...

«...Բոլոր ձեռագիր և տպագիր նյութերը, օրագրերը, լուսանկար նեգատիվները, գծագրերը կորան գնացքում Արմավիրի և Բաքվի միջև, մի ամբողջ վագոն՝ ուղեգրված Թիֆլիս պատմահնագիտական ինստիտուտում վերամշակվելու համար,— գրում է Ն. Մառը»*:

Այսպես էր դժբախտ քաղաքի դաժան ճակատագիրը:

* Н. Я. Марр, «Ани», էջ—XI. Огиз Москва—Ленинград, 1934 г.,

ԵՐԿՈՒ

ԱՆԱԽՈՐԺ ՈՒ ՅԱՎԱԼԻ

ՄԻՋԱԴԵՊ

Անիի գեղեցիկ շենքերից թափված քանդակազարդ բեկորները՝ քարեր, սյուներ, խոշակներ, արձանագրված քարեր, կարնիզներ և այլն, որ կարելի էր տեսնել ամեն քաղաքի ու համայնքում, անխնայ վիճակում, մեծ մտահոգություն էին պատճառում պրոֆ. Մառին: Այդ թափթփված բեկորները այնքան շատ էին, որ հնադարանը անկարող էր իր մեջ պատասխարել դրանց գոնե մի չնչին մասը:

Մայրաքաղաքի ամենախոշոր կանգուն շենքը Մայր տաճարն էր և ահա որոշեցին այն վերածել քարեդարանի, որտեղ կարող էր ամփոփվել մի քանի հարյուր բեկոր:

Մի օր Հովսեփ Օրբելին Մառի անունից դիմեց հայր-Միքայելին և պահանջեց Մայր տաճարի բանալին: Այդ անսպասելի հայտարարությունը մի ծանր հարված էր հայր-Միքայելին: Նա գունատվեց, հուզմունքից սկսեցին շորթերը դողդողալ:

— Պահանջեցեք տիրոջից,— վրդովմունքը հազիվ զսպելով ասաց հայր-Միքայելը և ապա շարունակեց,— Մայր տաճարի բանալին պատկանում է հայ ժողովրդին: Ու հենվելով իր գավազանին՝ համրաքայլ հեռացավ դեպի իր խուցը: Հայր-Միքայելը այդ օրը դուրս չեկավ իր բնակարանից... Երբեք այդ աստիճան վշտացած չէի տեսել նրան. բանալին տալ՝ նշանակում է շենքը հանձնել:

Այստեղից էլ սկսվեց մի մեծ անախորժություն... Բորբոքվեցին ազգային կրթերը և Թիֆլիսի հայ պարբերական մամուլում լույս տեսան հարձակողական ու պահարակիչ հոդվածներ մեծարգո գիտնականի հասցեին:

Պրոֆ. Մառը ստիպված եղավ Թիֆլիսի նույն օրաթերթում պատասխան հոդվածով հրապարակ գալ:


Ի վերջո ստացվեց այն, որ Մայր տաճարի բանալին մնաց հայր-Միքայելի ձեռքին, իսկ սովոր քանակությամբ ճարտարապետական արժեքավոր բեկորներ, որոնց մի մասը պատկանում էին հենց իրեն՝ Մայր տաճարին, մնացին բաց երկնքի տակ առանց պատասխարանի:

Սակայն խնամող ձեռքը չդադարեց մտահոգվելուց. հետագայում Մառը կառուցեց մի նոր շենք, որը կոչվեց Քարեդարան և որտեղ զետեղվեցին մեծ


թվով ճարտարապետական բեկորներ, արձանագրություններ և քանդակազարդ քարեր:

Քարեդարանի մուտքի աջ և ձախ կողմերը (արտաքուստ) կանգնեցրին երկու խոշոր արձանագրություն, որոնք իրենց տեղերից խախտված, քարերը թափված վիճակումն էին. ա) վրաց Եփուսյան կաթողիկոսի արձանագրությունը վրացերեն և մի արձանագրություն էլ արաբատառ (Յարլիկ):

1912 թվականին վերանորոգման ենթարկվեց Փրկիչ եկեղեցին: Այդ եկեղեցու մեջ էլ հավաքեցին և ամփոփեցին արժեքավոր շատ բեկորներ, եկեղեցու մուտքը ամրացրին փայտե դռնով և փակակնքով: Այս բոլոր միջոցառումները համարվեց նախաքայլ:



**ԱՍՏՎԱԾԱԾՆԱ
ՕՐԵՐԸ
ԱՆԻՈՒՄ**



Աստվածածնա օրերին Անիի անդորրը խանգարվում էր, շունչ ու հոգի էր ստանում ավերակ քաղաքը ու աշխուժություն: Ցնծում էր Անին, ասես մեռած քաղաքը կենդանացած լիներ:

Անի էին շտապում հեռավոր ու շրջակա գյուղերի շինականները, նույնիսկ Ալեքսանդրապոլից ուխտավորներ էին գալիս: Գալիս էին կառքերով, սալերով, ձիերով ու հետիոտն, Անիի Աստվածամոր տաճարի մեջ կատարելու իրենց սուրբ ուխտի խորհուրդը: Ոմանք էլ գալիս էին ուրախության ու ժամանցի համար:

Քաղաքի հյուսիսային ամրությունների մոտ բացվում էին խանութներ զանազան պտուղներով ու ըմպելիներով: Թնդում էին զոռնաները մեծ թըմբուկների ոխթմիկ հարվածների տակ և սահուն շրջան էին գործում հայկական շորջպարերը պատմական քաղաքի ծանրանհատ կոթողների առջև:

Ահա այնտեղ, Մայր տաճարի մոտ, հրապարակի վրա, բազմերանգ տոնական հագուստներով հարսներ ու աղջիկներ, պատանիների հետ միասին, բռնել էին շորջպար, տղա ու աղջիկ փոխնիփոխ երգելով: Ամենուրեք խիղճ ու ուրախություն: Եվ այդ նվազների, երգի ու ուրախության հնչյուններն ու ձայները արձագանքում էին հինավուրց քաղաքի կիսակործան տաճարների,

գեղեցիկ պալատների, ամրակոտ պարիսպների, ձորերի ու քարանձավների
և ապստամբների հավիտենական խոռոչների մեջ, ստեղծելով ուրախության
և ցնծության գեղեցիկ ներդաշնակություն:

Աստվածամոր տաճարի առջև ուխտավորները զոհում էին զառներ ու ոչ-
խարներ, իրենց իղձերն ու խնդրանքները ընդունելի դարձնելու համար: Խա-
րույկները բորբոքվում էին ու թշնամ էին կաթսաները—տարածվում էր մա-
տաղի հոտը:

Ամենուրեք խումբ-խումբ տղամարդիկ, կանայք ու աղջիկներ շրջում էին
նվիրական քաղաքի ավերակների մեջ:

Նրանք շրջում էին մեկ անգամ ևս տեսնելու իրենց նախնիների փառա-
պանծ կոթողների, հրաշք գործերի մնացորդները:

Ահա այնտեղ, մի բուրգի գլխին նստած մեկը, ողբալի ու լացակուսած
երգում է.

«Անի քաղաք նստե կույա,
Չկա ըսող մի լար—մի լար:
Այ հայ տղա խղճա ինձի,
Տես, թե քո Անին ինչպես է...»:

Որան սրտառուչ ունկնդրում էին ոմանք, սրտերից քամելով կարեկցություն
ու վիշտ...

Ոմանք դառն արտասուքը աչքերին, ջերմեռանդությամբ համբուրում
էին սրբատաշ քարերն ու արձանագրությունները՝ ողբալով իրենց ստեղծա-
գործ նախնիների անկումը:

Ուշադիր դիտողի աչքերից չէր վրիպում, ինչպես ամբոխից հեռու, այս
կամ այն ավերակ տաճարի մեծ հավատքի սուրբ վեմի առջև ծնկի եկած
աղոթում է ալեհեր մի ծերունի, կամ բազմատանջ մի մայր աղերսալի աչքերն
ողդած ամենաբարձրյալին՝ գթություն ու ապաշխարանք աղերսելիս:

Այդ օրերին մատյան հնադարանը լեցուն էր հետաքրքրասեր այցելուներ-
ով: Նրանք հափշտակված դիտում էին պեղումներից գտնված զանազան
առարկաներ, որոնք խնամքով գետեղված էին ապակեպատ ցուցարկղերի
մեջ: Ահա ջրատար երկաթե խողովակները, գտնված միջնաբերդի պալատա-
կան բաղնիքի պեղումներից: Կային զանազան գունավոր ապակյա և մետաղե
ապարանջաններ, հախճապակյա և բրոնզե անոթներ, խոշոր կարասներ,
նետերի սլաքներ, դրամներ, Գագկաշեն բոլորակ եկեղեցուց գտնված փոքրիկ
բրոնզե ջահը, սնդիկի անոթներ և ուրիշ շատ ու շատ իրեր: Մի ցուցարկղի
մեջ պահվում էր Տիգրան Հոնենցի տոհմային դամբարան-այրերից գտնված
փոքրիկ աղջկա զգեստը, նրբաթել, գեղեցիկ և ճաշակով կրծքակալ մանված-

քը, կուսության գոտին: Իսկ այն սյունազարդ սրահի կամարների տակ կանգնած է հայ աշխարհի խաղաղասեր և իմաստուն մեծ արքայի՝ **Գագիկ Ա.**-ի արձանը՝ տուֆ քարից կերտված: Այցելուները երկյուղածությամբ դիտում էին մեծ վեհապետին. ոմանց սրտերից դուրս էին քանվում դառն հառաչանքներ, ոմանք հիացնունքով դիտում էին այդ հրաշակերտը, ոմանք էլ դառնացած սրտերով մի պահ մտքով սլանում էին դարերի խորքերը, պատկերացնում իրենց նախնիների փառավոր անցյալը և հիշում իրենց ներկան:

Եվ ահա ժամը մոտ տասնմեկին, ծանր ու համաչափ զարկերով հնչում էր Անիի Աստվածամոր տաճարի խոշոր զանգը: Նա տարածում էր իր դողանջները քաղաքի տարածության մեջ՝ հրավիրելով բարեպաշտ հավատացյալներին սուրբ պատարագի արարողությանն ու աղոթքի:

Այդ օրը շրջակա գյուղերից Անի էին գալիս քահանաներ ու սարկավագներ: Սկսվում էր եկեղեցական արարողությունը: Ժողովուրդը խուռներամ լցվել էր եկեղեցին: Նրանք բերել էին իրենց սրտերում կուտակված ջերմ փափագների ու գեղեցիկ իղձերի կատարման խնդրանքներն ու աղերսները: Ոմանք կառչել էին կարեկից աստվածամոր փեշերին իրենց վշտերին, տառապանքներին ու ցավերին հաղորդակից դարձնելու և աղերսելու ապաքինումն ու օգնություն: Ծատերը իրենց հանցավոր հոգիներով եկել էին հայցելու գթություն ու թողություն: Բոլորը, բոլորը անկեղծ սրտով ու մեծ հավատքով, երկյուղածությամբ ծնրադրում էին ու աղոթում Անիի Աստվածամոր նվիրական տաճարի մեջ, հարյուրավոր վառվող մոմերի և խնկարկվող բուրվառների ներքո:

Պատարագը վերջացավ:

Հոգևոր թափորը խաչերով, խաչվառներով ու խնկարկվող բուրվառներով, հոժ բազմության հետ միասին շարժվում է տաճարից դուրս: Ծարականների երգեցողության ներքո թափորը հանդիսավոր պտույտ է գործում մեծ տաճարի շուրջը: Նա մի փոքր կանգ է առնում **մայր տաճարի** հարավային պատի վրա փորագրված **Կատրանիդե** հայոց թագուհու արձանագրության առջև և ապա շարժվում դեպ արևելք:

Այնտեղ, Աստվածամոր հինավուրց տաճարի արևելյան պատից ոչ հեռու, հանգչում է **հզոր Գագիկ** կողակցի՝ բարեպաշտ **Կատրանիդե** թագուհու աճյունը: Նրա դասբարանի վրա կանգնած էր մի մատուռ, որն այժմ քարակույտի է վերածված:

Թափորը կանգ է առնում այդ քարակույտի շուրջը և հոգևոր դասը կատարում է հոգեհանգստի արարողությունը:

Նվիրական քարակույտի սրբատաշ քարերի վրա վառվում էին բազմաթիվ մոմեր և ծխում էր խունկը, իր բուրմունքը տարածելով շրս կողմ, ամե-

նորեք հուզված սրտեր, արտասովաթոր աչքեր և ջերմեռանդությամբ աղոթք մրմնջացող շուրթեր, բարեպաշտ թագուհու հիշատակին...

Եվ հուզող պատկերների ցնցող տեսարանները ճգմում էին հոգիս մի անբացատրելի ծանր խորհրդով...

Անթառամ մի շիրիմ, բարակույտերով ու մատուռ-դամբարանի բեկորներով ծածկված... Մի տող միայն պատմության էջերից...

Եվ հազար-հազար հոգիներ ծունկի են գալիս հայոց թագուհու շիրմի առջև...

**ԵՍ ԿԱՏՐԱՆԻԿԵ ՀԱՅՈՑ ԹԱԳՈՒՀԻ ԴՈՒՍՏՐ ՎԱՍԱԿԱ
ՍԻՆԵԱՑ ԹԱԳԱԻՈՐԻ ՅՈՂՈՐՄՈՒԹԻՒՆՆ ԱՅ
ԱՊԱԻՆԵՑԱ ԵՐ,
ՀՐԱՄԱՆԱԻ ԱՌՆ ԻՄՈ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ ՇԻՆԵՑԻ
ՋՍԲ ԿԱԹՈՂԻԿԵՍ ՋՈՐ ԷՐ ՀԻՄՆԱԴՐԵԱԼ ՄԵԾԻՆ ՍՄՊԱՏԱ**

~~~~~  
**ԿԱՏԱԿ  
ՄԻՋԱԴԵՊ**  
~~~~~

1914 թվականին պրոֆ. Մառը մի արշավախումբ ուղարկեց Ծիրակավան հետևյալ կազմով՝ 1. Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթար (գիտարշավի ղեկավար), 2. ճարտարապետ Ն. Բունիայան, 3. Տարագրոս (ճարտարապետի օգնական), 4. Արամ Վրույր և ոռու նկարիչ (ազգանունը չեմ հիշում):

Գիտարշավի առջև խնդիր էր դրված՝ Ծիրակավանի 9-րդ դարու տաճարի շուրջը կատարել ստուգիչ պեղումներ և չափագրել տաճարը:

Գիտարշավի ճաշասեղանի համար Մառը հանձնել էր Աշխարհբեկին 7 շիշ ընտիր գինի, որոնք խնամքով գետեղված էին արշավախմբի պետի ճամպրուկում, փականքի տակ, վասնզի գիտարշավի կազմի բոլոր անդամները, բացի ղեկավարից, անտարբեր սառնասրտություն չէին կարող ցուցաբերել վերոհիշյալ 7 շիշ նկատմամբ:

¹ Կատրանիդե հայոց թագուհու արձանագրությունից մի հատված՝ Անիի Մայր տաճարի հարավային պատի վրա:

— Ո՛վ խնայողության մկրատ, լավ բան ես դու, եթե չես շարագործվում:

Արշավախումբը իր աշխատանքների քսաներորդ օրն էր թևակոխել արդեն, սակայն գիևու շէրը պսոկած էին դեռ Քալանթարի նամպրուկում: Այդ բանը դժգոհությունն ու զայրույթ էր առաջ բերում Բաքուի երկրպագուների մեջ և բողոքների տարափը փոխանակ ղեկավարի գլխին պայթելու, թափվում էր «Մեծ Քրմապետի»՝ Արամ Վրույրի գլխին, որպես ավագագույն քուրմ Բաքույան տանարի: Բունիաթյանը չնայած վշտացած, բայց ըստ իր սովորության լուռ էր: Տարագրուն էր, որ իր դժգոհություններով անհանգստացնում էր Արամի առանց այն էլ վրդովված հոգին և հաճախ ասում.

— «Քրմապետ», սրա վերջը ի՞նչ է լինելու, «հոգեհանգիստ» ե՞րբ եք կատարելու, կոկորդա չորացավ:

Սակայն, Ծիրակավանի գիտարշավի աշխատանքները ավարտելու նախօրեին պատահեց մի կատակ-միջադեպ, որը «Չարչարանաց աղբյուր» դասավ գիտարշավի պետի և «Զվարճանոց դուռ» «Մեծ Քրմապետի», Տարագրուի, Բունիաթյանի և ուսու նկարչի համար: Ալեքսանդրապոլից Ծիրակավան էր եկել չորս հոգուց բաղկացած մի խմբակ՝ մի տիկին և չորս ամուսինը, և մի տարեց բահանա ու իր զավակը: Այդ անձինք Աշխարհբեկի մտերիմ ծանոթներն էին, որոնք հատկապես եկել էին թե Աշխարհբեկին տեսության և թե հնձորյա հուշարձանը դիտելու:

Քալանթարը մեծ գոհունակությամբ ընդունեց իր թանկագին հյուրերին: Միասին շրջեցին պեղման վայրը, դիտեցին հուշարձանը: Այդ շրջագայության ժամանակ գիտարշավի ղեկավարը մանրակրկիտ բացատրություններ էր տալիս թե՛ հուշարձանի և թե՛ պեղման աշխատանքների մասին: Երեկոյան դեմ Աշխարհբեկը իր հյուրերին հրավիրեց ընթրիքի:

Այդ երեկո ընթրիքի սեղանը ճոխ էր ու առանձնահատուկ: Սեղանի շուրջը նստած էին ինը հոգի: Ի դեպ, «Մեծ Քրմապետի» աջ կողմը բազմած էր Տարագրուը, ձախ կողմը Բունիաթյանը, իսկ վերջինիս կողքին՝ ուսու նկարիչը— դա բաքույան ժողովածուն էր:

Դեռ նոր էին սեղան նստել, երբ հարևան սենյակից երևաց Աշխարհբեկը ձեռքին մի շիշ գինի:

— Եվ երևեցան գազաթթ լեռանց Արարատյան,— հանդիսավոր արտասանեց Վրույրը:

— Օրհնյալ է աստված,— ձայնակցեց Տարագրուը:

— Ամեն, — լրացրեց ճարտարապետը:

— Да, вот это я понимаю, — ժպտադեմ ասաց ուսու նկարիչը:

«Մեծ Քրմապետը» լցրեց ինը բաժակ. շիշը դատարկվեց:

— Եվ երևեցան հիմունքն աշխարհի,— կամացուկ մրմնջաց Վրույրը:

— Պրոսիտմէ ասե ասոված,— ձայնակցեց Տարագրոսը:

— Խաղաղություն... — ասաց Բունիայանը:

Որպէս ավագագույնը ըստ տարիքի Արամ Վրույրը, բարձրացնելով բաժակը՝ առաջարկեց խմել թանկագին հյութերի կենացը: Դատարկվեցին բաժակները, դատարկ էր և շիշը:

— Բան չհասկացա «Քրմապետ», — շնչաց Տարագրոսը:

— Համբերե, տղաս,— հանգստացրեց նրան Վրույրը:

Անդրանիկ կենացը խմելուց հետո տակալին չէր անցել հինգ րոպե, երբ Վրույրը վերցրեց գինու շիշը, իբր թե տեղեկություն չունի շի դատարկ լինելու մասին և այսպէս ասաց.

— Պարոնայք, խմենք մեր հարգելի տիկնոջ կենացը, որպէս հասարակական գործչի: Մեր իրականության մեջ հայ կինը միշտ եղել է որպէս առաջապահ և հասարակական ասպարեզի վրա իր օրինակելի և անձնվեր գործունեությամբ խրախուսել ու ոգեշնչել է մեզ...

Նա խոսում էր վերամբարձ տոնով ու բարձր պաթոսով՝ գովերգելով հասարակական ասպարեզ նետոված անձնվեր ու օրինակելի հայ կնոջը: Եվ այդ գունագեղ բաժակաճառի ամբողջ ընթացքում իր ձեռքին բռնած ուներ դատարկ շիշը:

Վերջացնելով իր ճառը «Մեծ Քրմապետը» շիշը մոտեցրեց բաժակին, բայց... ավա՛ղ... շիշը դատարկ էր:

Անհարմար դրություն:

Նա մի հանդիմանական հայացք նետեց Աշխարհբեկին և ապա հայացքով ցույց տվեց ձեռքին բռնած դատարկ շիշը, ասեա ուզում էր ասել. «Ի՞նչ խայտառակություն է սա»: Այդ բոլորը կատարվեց մի ակնթարթում, դերասանական մեծ վարպետությամբ: Տարագրոսն էլ դեսքի դժգոհ արտահայտությամբ լրացնում էր վարպետի խաղարկությունը:

Դրությունը փրկվեց: Աշխարհբեկը հարևան սենյակից բերեց գինու երկրորդ շիշը:

Այստեղ Աշխարհբեկն էլ ճառ արտասանեց տիկնոջ կենացի առթիվ:

Բաժակները դատարկվեցին:

— Գինի ուրախ առնե զմարդ,— ասաց Տարագրոսը, պարպեց իր գավաթը և տապակած վառելիքից մի բուդ դրեց իր պնակի մեջ, որպէս ապագա ընկալելիք բաժակի հարակից անբաժան մի պատառ: Նա այդ հույսը ուներ դեռ:

Սեղանակիցները քաղցր գրուցում և ընթրում էին, երբ «Քրմապետը» դարձյալ վերցնելով գինու դատարկ շիշը իր բամբ ձայնով խզեց սեղանա-

կիցների քաղցր գրույցը: Նա այս անգամ առաջարկում էր խմել մեծ գիտնականի՝ Նիկոլայ Յակովլևիչ Մատի կենացը:

Շիշը դատարկ էր: «Քրմապետի» կշտամբող հայացքը հարկադրեց Աշխարհբեկին կից սենյակից բերել երրորդ շիշը:

Հետևյալ օրը կարելի էր տեսնել գիտարշավի ղեկավարի ճամպրուկում խնամքով պատկած 7 դատարկ շիշ ի ցալս Աշխարհբեկի և հուրախություն բարոսականների:

1915 ԹՎԱԿԱՆ

1914 թվականին Անիի գիտարշավում երևացին երկու նոր դեմքեր՝ ճարտարապետ Ն. Բունիաթյանը և Տարագրոսը, որոնք Անիում գործեցին երկու տարի: Եվ ահա 1915 թվին ինձ ևս վիճակվեց մասնակցելու Անիի գիտարշավին: Ես որպես տեխնիկական բանվոր, պետք է աջակցեի ճարտարապետ Ն. Բունիաթյանին, որի անմիջական օգնականն էր Տարագրոսը: Կյանքիս մեջ դա իմ անդրանիկ քայլն էր. լծվեցի աշխատանքի, որը տևեց 47 օր, օրեկան մեկ ռուբլի աշխատավարձով:

Իմ անելիքն էր չափագրական պիտույքները փոխադրել աշխատավայր, մագլցել պատերի վրա, երբեմն ելարանով բարձրանալ, ճարտարապետի ցուցումներով չափել այս կամ այն քարը, սյունը, խոյակը, խարիսխը և չափումները հաղորդել Ն. Բունիաթյանին, որը գծագրական տախտակը առաջին նշում էր չափումների թվերը: Տարագրոսի հետ միասին չափագրվող հուշարձանի պատերի վրա շենքի արտաքուստ և ներքուստ անց էինք կացնում, որոշ բարձրության վրա, հորիզոնական գիծ և նրա հետ կապում շենքի մասերի չափերը: Չափում էինք պատերի, դռների, լուսամուտների և ուրիշ մասերի լայնությունն ու բարձրությունը:

1915 թվականին մեր աշխատանքները սկսեցինք Ապուղամբենց ա. Գրիգոր եկեղեցուց, որ տևեց 15 օր: Ապա անցանք փլված միևարեի մոտ պեղված տանարի և իր շրջապատի չափագրությանը՝ 10 օր, և հետո մեկնեցինք Երեբունք:

Սայլի վրա բարձելով չափագրական պիտույքները և մեր անկողիները, ես ճամփա ընկա խոշավանքի սալապան Օհանեսի հետ, Անիի սուրհանդակի առաջնորդությամբ, դեպի Ղըզըլղուլա քրդաբնակ (Եզդի) գյուղը, որի

կենտրոնում կանգնած է հայկական պատմական ճարտարապետության 6-րդ դարի հսկաներից մեկը՝ Երեբունի բազիլիկան:

Առավոտյան վաղ մեր սալը, հյուսիսային պարիսպների Դվնո դուռը անցնելով, ուղղություն վերցրեց դեպի Խոշավանք, որովհետև սալով հնարավոր էր միայն այնտեղով գնալ: Խոշավանքի մոտ Ախուրյան գետը անցնելու հնարավորություն կա: Այնտեղ գետի հունը քավակահին լայն է: Չնայած այդ երթուղին եռապատիկ երկար է, սակայն միակ հարմար ճամփան է սալի համար: Ծարտարապետ Ն. Բունիաթյանը և Տարագրուք հետևյալ օրը կարճ ճանապարհով (Անի—Խարկով—Ղրգըղույա) պետք է գային Երեբունի:

Անցնելով Հովվի եկեղեցին, Խոշերը, Հոռոմոսի վանքը, կտրելով Ախուրյանը, մի երկու ժամից հասանք Անի կայսրան ու այնտեղից էլ Ղրգըղույա գյուղը: Մի խոսքով Անիից մինչև Ղրգըղույա օղակաձև մի պտույտ կատարեցին:

Ղրգըղույան շոր ու ցամաք մի փոքրիկ գյուղ էր, մեծ մասամբ գեո-նափոր տներով: Գյուղը ջուր չունեք: Նա օգտվում էր մոտ մի կիլոմետրի վրա երկաթօժի համար կառուցված ջրմուղի շենքից, իսկ գյուղի ցորենի և գարու արտերը թողնված էին երկնքի կամքին:

Անիի սուրհանդակը այնտեղ նախօրոք վարձել էր մի սենյակ, որը ամենալավը պետք էր համարել այդ գյուղում: Սենյակը ուներ երկու լուսամուտ, դա բացառություն էր Ղրգըղույայում: Մեր բնակարանից մոտ 250 քայլի վրա կանգնած էր հինավուրց ծերունին՝ Երեբունքը:

Բունիաթյանն ու Տարագրուք եկան հետևյալ օրը:

Սկսվեց մեր աշխատանքը. նախ ես և Տարագրուք տաճարի շուրջը, պատերից մի փոքր հեռավորության վրա, որոշ բարձրությամբ ցցեր ամրացրինք և մետաղյա լարով քառանկյունի շրջափակեցինք հուշարձանը և ապա սկսեցինք ջրաչափով հորիզոնական գիծ անցկացնել Երեբունի պատերին արտաքուստ և ներքուստ: Ծարտարապետը զբաղված էր տաճարի ճակատների գծագրությամբ:

Սկսվեց չափագրությունը:

Ես և Տարագրուք ուղետով առնում էինք ընդհանուր չափերը և ապա անցնում մանրամասնություններին:

Հուշարձանի յուրաքանչյուր քարը չափագրվեց: Բարձրանում էի Երեբունի պատերի վրա և հաղորդում որսնախոյակների չափերը իրենց մանրամասնություններով: Ծարտարապետը նշում էր այն իր տախտակի վրա, ուր նախօրոք գծել էր հուշարձանի ճակատներն ու մանրամասները:

Ն. Բունիաթյանն ու Տարագրուք բնավորության հակադիր գծեր ունեին. առաջինը՝ լուռ, մտքերի մեջ խորասուզված, ամբողջապես կլանված իր աշ-

խատանքով, իսկ երկրորդը՝ իր ժրաջան աշխատանքի հետ միասին մերթ ընդ մերթ սրախոսելով աննկատելի էր դարձնում օրվա ժամերը: Ծարտարապետը իր մեղմ ժպիտով էր միայն արձագանքում Տարագրոսի սրախոսություններին:

Մեր աշխատանքը ուժեղ թափով առաջ էր գնում, բայց մեզ ներում էր աննդի հոգսը և լեզու չիմանալը, իսկ գյուղի բնակիչները, բացի քրդերենից, ուրիշ լեզու չգիտեին: Մենք մեծ ջանք էին թափում հասկացնելու մեր պահանջը սննդամթերք հայթայթելու համար: Արգրլղուլայում շատ քչերը գիտեին կցկտուր հայերեն:

Հարկադրված եղանք լուր ուղարկել Անի և պրոֆեսորն անմիջապես ուղարկեց Ագոյին՝ այդ պաշկերտցուն, որը քաջ տիրապետում էր քրդական լեզվին: Ագոյի երևալը մեզ ուրախություն պատճառեց, ասես փրկարար հրեշտակ հայտնվեց մեզ:

Բայց ավա՛ղ... Ագոյի ներկայությունը դրությունը չփրկեց, Արգրլղուլայի քրդերը մեզ մարդու տեղ չէին դնում:

Մի օր գյուղն իրար անցավ. այնտեղ արտասովոր ինչ-որ շարժում էր կատարվում: Գյուղացիները՝ մեծ, փոքր, շտապ դիմում էին գյուղից դուրս, դեպի գյուղը մտնող լայն ճանապարհը: Ի՞նչ էր պատահել... Ինչո՞ւ քրդերը իրար էին անցել...

Գյուղից դուրս, բլուրների գլխին, երևում էր կարմիր ձիուն հեծած Անիի սուրհանդակը՝ Եսային, խաչմերուկ փամփշտակալներ, հրացան, թուր, մըտրակ, մորթյա գլխարկ, բարձրավիզ կոշիկներ և, ամենակարևորը՝ կրծքի ձախ կողմը ամրացված բոլորաձև պղնձաձուլ նշանը— «Անիի սուրհանդակ» մակագրությամբ, որի փայլուն մակերեսի վրա խաղում էին արևի ճառագայթները: Եվ այդ նշանը բուրդ գյուղացիների աչքին, նրա տիրոջ՝ Անիի սուրհանդակի «առանձնահատուկ մեհաշնորհների տեր» լինելու հանգամանքն էր արտահայտում:

Եվ թանկագին հյուրը մտավ գյուղ, մեկը ձիու սանձը բռնեց, մյուսը սապանդակը և ձիավորն իջավ հանդիսավորությամբ:

Գյուղացիները բարի գալուստ մաղթեցին թանկագին հյուրին և տարան, հյուրընկալեցին նրան գյուղի օդաներից մեկում:

Քուրդ կանաչք հանեցին նրա բարձրավիզ կոշիկները, քրտինքի մեջ կորած գոպաններն ու ոտները լվացին: Զոհվեց մի աքաղաղ, սառի վրա բուրեցին թարմ լավաշները: Գյուղացիք խմբվել էին պատվելի հյուրի շուրջն ու գրուցում էին:

Ծաշք պատրաստ է... Հյուրասիրությունը տեղի ունեցավ շատ պատշաճ:

Աշխատանքը ավարտելով մենք վերադարձանք մեր օթևանը, ուր Եսա-
յին հանձնեց Բունիաթյանին պրոֆ. Մանի նամակը:

Տարագրուք հեղևակյան ժպիտը դեմքին, կատակելով դիմեց Եսայուն.

— Այ մարդ, պրիստավը դալաթ է արել մուտդ, դու մեր «աղան» ես եղել,
մենք բանից բեխաբար, թոփ, թվանք, ձի, «մեղալ»... Էս մարդկանց հաս-
կացրու, որ մեզ լավ նայեն, քաղցած կոտորվեցինք, չա՛, կերածդ խորոզը
բկիդ մնա, հա՛...

Սուրհանդակը գայրացավ, հոնքերը կիտեց և դառնալով գայրագին
պորթկաց դեպի քրդերը, որոնք ներս էին խուժել մեր սենյակը և լուռ կանգ-
նել:

— Ի՞նչ իրավունքով վատ եք նայում իմ ժողովրդին, ուրիշ անգամ չլսեմ
այդպիսի բողոքներ ու գանգատներ ձեր մասին:

Քրդերը ներողություն էին խնդրում «ամենակարող» սուրհանդակից իրենց
անփույթ վերաբերմունքի համար և հազար ու մի խոստումներով աշխատում
նրա բարկությունը մեղմել: Սուրհանդակի բարկության մեջ մեծ դեր էր խա-
ղում դերասանությունը, որին լրացնում էր Տարագրուք հանախ «աղա» բա-
ռով դիմելով նրան, որ մեծ ազդեցություն էր թողնում քրդերի վրա:

Մի խոսքով, Անիի սուրհանդակի ողորմածությանը ապրում էինք Ղըզըլ-
ղուլայում մի երկու օր, որից հետո քրդերն ամեն խոստում մոռանալով,
դարձյալ անուշադրության էին մատնում մեզ: Եվ մենք սպասում էին սուր-
հանդակի երևալուն. նա հինգ օրը մեկ այցելում էր մեզ, որով վերանորոգ-
վում էր քրդերի բարյացակամ վերաբերմունքը, իհարկե, դարձյալ կար-
ճատե:

Ըսաներկու օրում ավարտելով Երեբունքի մանրակրկիտ չափագրությունը,
Բունիաթյանն ու Տարագրուքը կարճ ճանապարհով վերադարձան Անի, իսկ
ես, Ազոյի ու սուրհանդակի հետ, սալլին բարձած մեր իրերը դարձյալ վե-
րադարձանք Անի՝ Անի կայարան—Խոշավանք—Անի երթուղիով:

Այսպիսով, 1915 թիվը եղավ մի նախադուռ իմ անդրանիկ վաստակի
համար: Երեք ամսվա ընթացքում 47 օր աշխատեցի չափագրությունների
վրա, իսկ մնացած օրերին՝ օգնում էի հորս լուսանկարչական աշխատանք-
ներում: Բացի այդ, հայրս հանձնել էր ինձ երեք տուփ 9×12 չափի լուսապա-
կիներ, որով ես սկսեցի իմ թոթովանքը լուսանկարչական գործում:

Մի շաբաթ օր, պեղումների ավարտումից հետո, վերցնելով լուսանկար-
չական գործիքը՝ մեկնեցի Խոշավանք, խոշավանքցի Օհանեսի հետ, որն իր
եզներով ու սալով աշխատում էր Անիի պեղումների վրա և շաբաթ օրերին
մեկնում էր գյուղ և վերադառնում աշխատանքի երկուշաբթի առավոտ:

Կիրակի օրը առավոտից մինչև երեկո Օհանեսի հետ շրջում էինք Խոշա-

վանքում: Ես լուսանկարում էի Հոռոմոսի վանքի և ձորում գտնվող եկեղեցի-
ների ընդհանուր տեսքն ու մանրամասները՝ ընտրելով լուսավորության հար-
մար դրություններ և հետաքրքիր կետեր, որոնց մասին լսել էի հորս ցու-
ցումները:

Երկուշաբթի վերադառնալով Անի, առանց ժամանակ կորցնելու, շտա-
պեցի մութ սենյակ՝ նկարածներս երևակելու:

Ինձ նոր էի ազարտել նեգատիվների երևակման և լվացման աշ-
խատանքը ու խնամքով դասավորում էի այն փայտյա հենարանի վրա,
երբ ներս մտավ Հ. Օրբելին: Նրա անակնկալ երևալը շփոթեցրեց ինձ: Ես
նեղվեցի ու անհարմար վիճակի մեջ էի, որովհետև գիտարշավի լուսանկար-
չական արվեստանոցում կողմնակի անձնավորություն էի և կատարել էի
կողմնակի աշխատանք: Երիտասարդ գիտնականը, հայացք նետելով նեգա-
տիվներին, հարցրեց, թե ինչեր են սրանք: Ես քաշվելով պատմեցի երկօրյա
ճամփորդությունս Խոշավանք և իմ կատարած լուսանկարումների մասին:
Նա ուշի ուշով նայեց յուրաքանչյուր նեգատիվը և առանց մի բառ արտա-
սանելու շտապ դուրս եկավ արվեստանոցից: Ես զգում էի ինձ հանցավորի
դերում:

Մի փոքր անց Օրբելին վերադարձավ, բերելով իր հետ հարգելի պրո-
ֆեսորին: Նրանք սկսեցին ուշադրությամբ նայել իմ նկարած բոլոր ապակի-
ները: Սիրոսս բարախում էր... Եվ ես սպասում էի կշտամբանքի և նկատո-
րության... բայց ընդհակառակը՝ ես լսեցի քաջալերիչ և խրախուսիչ խոսքեր...

Մի քանի օր անց հարգելի գիտնականն ասաց.

— Արտաշես, եթե կարելի է, լուսանկարեցեք Փրկիչ եկեղեցու մոտա-
կայքում պեղված եկեղեցու դռան ճակատի արձանագրությունը:

Թե ինչու պրոֆեսորը այդ խնդիրը դրեց իմ առաջ, ինձ անհասկանալի
էր: Արդյոք ուզում էր փորձել իմ վարպետությունը... Չգիտեմ...

Ծիշո է, ես տակավին թոթովում էի, դեռ սահմանափակ էր լուսանկար-
չական արվեստն ինձ համար, բայց պետք է խոստովանել, որ ես մեծ ուշա-
դրությամբ հետևում և ուսումնասիրում էի լույսի ու ստվերի, ինչպես և կոմպո-
զիցիայի խնդիրները հորս հանած լուսանկարներում և մանավանդ իր հետ
շրջելիս, երբ նոր նկարահանումների ժամանակ նա ինձ բացատրում էր լու-
սանկարվելիք առարկաների վրա լույսերի դասավորությունը և շատ այլ գի-
տելիքներ լուսանկարչական արվեստի վերաբերյալ:

Ես շրջում էի Անիի ավերակների մեջ լուսանկարչական գործիքը ձեռքիս,
կանգ առնում այս կամ այն քանդակի, արձանագրության կամ որևէ ճարտա-
րապետական մանրամասնի՝ գեղեցիկ խոյակների, ծանրանիստ խարիսխնե-
րի, վեհ կամարների, քանդակազարդ պսակների և մուտքերի առաջ, ընտրում

Էի զանազան հուշարձանների ընդհանուր տեսարաններ և լուսանկարչական գործիքը լարելով, սպասում և ուշադիր հետևում էի լույս ու ստվերի խաղերին, արտահայտելու համար նկարվելիք առարկայի ձևն ու ծավալը:

Հորս տված երեք տոսի լուսապակիները վաղուց սպառվել էին: Հիմա ես լուսանկարում էի առանց ապակիների, իբր թե լուսանկարում եմ, իբր թե իմ գործիքի կասետների մեջ զետեղված են ամենաընտիր լուսապակիները: Եվ այդպես, ստից նկարելով, անընդհատ շրջում էի ավերակների մեջ և պատրաստում գործիքը: Ֆոկուսի կանգնեցնում նկարվելիքը, սպասում լույսերի դասավորությանը, դատարկ կասետը անցկացնում գործիքին, ամենայն զգուշությամբ բացում կասետը, որսալով լուսանկարահանման վայրկյանը:

Հայրս ինձ տվեց 13×18 չափի երկու լուսապակի, որով պիտի կատարեի պրոֆեսորի առաջադրանքը:

Հետևյալ օրը ես կանգնած էի արձանագրության մոտ: Գործիքը հարմարեցրի և լարված ուշադրությամբ սպասում էի լուսավորության: Ամառային վառ արևի ճառագայթները սկսեցին շոյել «Ծերացյալ տանարի» արձանագրությունը, որոնց մեսրոպյան գեղեցիկ տառերը, կերտված երկաթե գրքչով, որ մի փոքր առաջ թաղված էին թանձր ստվերի մեջ, աստիճանաբար սկսեցին կենդանանալ ու արտահայտիչ կերպարանք ընդունել: Ձեռքս մեկնեցի օբյեկտիվի կափարիչին... Բարախում էր իմ սիրտը և ձեռքս դողում... Մի կերպ լուսանկարեցի և անապարեցի դեպի մուօ սենյակ:

Երևակում եմ... Կարմիր լույսի առաջ մեկիկ-մեկիկ ուրվագծվում են «Ծերացած տանարի» արձանագրված տառերը: Նրանք խոսում, փայլում են լուսապակու մակերեսին: Սակայն, ոգևորված հաջողությունից, կորցնելով չափի զգացումը և ապա անփորձությանս հետևանքով նեգատիվը ստացվում է շատ թանձր: Իսկ ինձ թվում է, թե ամեն ինչ լավ է:

Հայտնեցի պրոֆեսորին, որն անմիջապես եկավ, նայեց և ասաց.

— Արտաշես, կարծեմ շատ եք պահել երևակիչի մեջ:

— Ոչ, պրոֆեսոր, լավ է,— ասացի ես:

— Կարծո՞ւմ եք...— Ասաց գիտնականն ու լռեց:

Հայրս ինձ բավականին կշտամբեց. այդպիսի դեպքերում նա անխնա էր: Լուսավորությունը տեղին, էքսպոզիցիան լավ, բայց երևակումը վատ: Այդ գիշեր աչքիս քուն չեկավ. ամբողջ գիշեր պախարակում էի ինձ:

Հետևյալ օրը ես նորից արձանագրության առաջ էի և գործիքը լարած՝ սպասում էի լուսավորության:

Վերջապես նկարեցի: Անցյալի անհաջող փորձը խրատ եղավ ինձ: Այս անգամ մեծ ուշադրությամբ երևակեցի և ժամանակին հանելով նեգատիվը երևակիչից ճիացմունքով նայում էի ապակուն, որի վրա փայլում

Էին «Ծերացյալ տանարի» դռան ճակատին արձանագրված գեղեցիկ տառերը... «...Նորոգեցի ծերացեալ տանարս զայս...»: Սա եղալ իմ անդրանիկ ընկնությունը:

Այդ տարի ճարտարապետ Թորամանյանը զբաղված էր Բագնայրի հուշարձանների ուսումնասիրությամբ և Անի վերադարձալ օգոստոս ամսին: Մենք միասին շրջեցինք Անիում՝ լուսանկարելու համար մի քանի հուշարձաններ: Ես տանում էի ճարտարապետի մեծածավալ լուսանկարչական գործիքը (24×30 չափի) իր ծանրանիստ եռոտանիով, մոտենում էինք զանազան հուշարձանների և լուսանկարում:

Մեր մեջ կար աշխատանքի բաժանում, որը կանխալ չէր որոշված, այլ բնականաբար աչքս էլ պետք է լիներ: Բոլոր տեխնիկական գործերը ծանրացած էին ինձ վրա. գործիքը իր կասեռներով և եռոտանիով տանելը, գործիքն ամրացնելը եռոտանու վրա, ֆոկոսի բերել նկարվելիք հուշարձանը, կասեռը անցկացնել գործիքին և նկարահանել, իսկ հարգելի ճարտարապետի քածինն էր լույսերի և լուսանկարվելիք հուշարձանների կետերի ընտրությունը, իմ կողմից կանգնեցրած ֆոկոսի ստուգումը և դիաֆրագմայի ստիճանի ու էքսպոզիցիայի չափի որոշումը: Այդ բոլորից հետո լուսանկարում էի ես: Զուտ տեխնիկական մի գործ՝ օբյեկտիվի կափարիչի բացովսուփ անելը:

Մի օր գնացինք լուսանկարելու Գագկաշենի ս. Գրիգոր բոլորակ եկեղեցին, և ահա այստեղ սիրելի ճարտարապետը պատմեց, թե ի՞նչը առիթ դարձալ իրեն լուսանկարչություն սովորելու:

— Օր մը հորդ խնդրեցի, որ ինձի համար լուսանկարե Խոշավանքեն քանի մը կտոր, որը հույժ կարևոր էր աշխատանքներուս համար: Չնայած հայրդ հանձն առած էր, ինչպես և միշտ ընդատաջ եկած և կատարած է իմ բոլոր խնդրանքներս զանազան հուշարձաններու լուսանկարման, բայց բոլորեց երկու տարի, Խոշավանքը չլուսանկարվեց: Լեզվիս ծայրը մազ բուսալ հիշեցնելով իրեն: Ի վերջո, օր մը ջղայնացա և որոշեցի ինքս սովորել ու սովորեցի:

Եվ իսկապես, Թորամանյանը սովորեց և լավ տիրապետեց լուսանկարչական արվեստին:

Անիի գիտարշավը աշխատում էր անգլիական «Իլֆորդ» ֆիրմայի լուսապակիների վրա, իսկ Թորամանյանը՝ ֆրանսիական «Լյումիեր» ֆիրմայի լուսապակիների, որոնք հատուկ պատվերով ստանում էր «Լյումիեր» գործարանից:

Մեր այս փոքրիկ շրջագայությունը մեծ գիտնականի Անիի ավերակներում ինձ համար եղալ ևս մի փորձադաշտ հնագիտական—ճարտարապետա-

կան լուսանկարչական գործում: Նա ինձ բացատրում էր ճարտարապետական կառուցվածքների մասերի ընդգրկման սահմանները լուսապակիների վրա՝ մասնագետին լրիվ ընթեռնելի լինելու համար:

1916

ԹՎԱԿԱՆ

1916 թվականի գարնանը մի փոքրիկ թատերական խմբով մեկնել էի Գանձակ և այս Ծուշի: Դրանք իմ անդրանիկ քայլերն էին մայրենի բեմի վրա: Ծուշիում թատերախմբի գործերը վատ էին: Այդ տարի հայրս աշխատում էր Բաքվում, Ռսկանյանի ղեկավարությամբ կազմված թատերախմբում: Եվ ահա մի օր, մայիս ամսին, Ծուշվա թեմի առաջնորդի սպասավորը հանձնեց ինձ մի նամակ. գրում էր հայրս Բաքվից.

«Արտաշես, պրոֆեսոր Մառը առաջարկում է, որ այս ամառ աշխատես Անիում որպես լուսանկարիչ: Ես քո կողմից համաձայնությունն տվի: Գրիր, ինչքան գումար է պետք Թիֆլիս մեկնելու համար». Հայրդ:

Մի բացիկով տվի իմ համաձայնությունը և խնդրեցի 25 ուրբի դրամ, պարտքերս վճարելու և մեկնելու համար:

Գումարը ստացա և անմիջապես մեկնեցի Եվլախ, որտեղ պատահմամբ հանդիպեցի հորս: Նա Բաքու—Թիֆլիս գնացքով գնում էր Թիֆլիս:

Չնայած երկու տարի էր անցել այն օրից, ինչ ես հեռացել էի Ներսիսյան դպրոցից, բայց իմ դասընկեր Միքայել Մազմանյանի հետ չէի խզել կապերս: Նա շատ էր հետաքրքրվում մեր պատմական արվեստով, և ես նրան հանձնել էի լուսանկարչական առաջին գործերս՝ նեգատիվների մի փոքրիկ ժողովածու—Անիի և Խոշավանքի (Հոռոմոս) հուշարձանների՝ լուսանկարած 1915 թվին:

Հասնելով Թիֆլիս՝ հանդիպեցի Միքայելին, պատմեցի իմ թատերական անհաջող շրջագայության մասին և հաղորդեցի, որ այս ամառ պիտի աշխատեմ Անիի գիտարշավում՝ որպես լուսանկարիչ: Այդ լուրը Միքայելին ուրախություն պատճառեց: Նա ցավում էր դպրոցն անավարտ թողնելուս համար և հիմա ուրախ էր, որ գնում եմ աշխատելու, այն էլ Անի, պրոֆեսոր Մառի նման խոշոր գիտնականի մոտ:

1914 թվին, Մ. Մազմանյանը Ներսիսյան դպրոցի մի խումբ աշակերտների հետ եկել էր Անի շրջագայության: Այդ երկօրյա այցը շատ փոքրիկ միջոց էր Անին հանգամանորեն դիտելու ու տեսնելու: Բայց այդ կախարդական աշխարհը, որի մեջ երկու օր շարունակ վերապրեց հիացմունք, հուզմունք և ապշանք, նրա հոգու մեջ գցեց անդրանիկ հատիկը այն վեճ գաղափարների, որի բեղմնավոր արդյունքը քաղում էր նա հետագայում:

Գեղասքանչ Անիի առաջին հմայիչ տպավորությունը, որ դրոշմվել էր պատանու հոգում, իր արտահայտությունը գտավ մի փոքրիկ հողվածով Անիի մասին «Երգ ու ներկ» աշակերտական ձեռագիր ալմանախում, որտեղ գետեղված էր նաև Մայր Տանարի ջրաներկ նկարը, կատարված հեղինակի կողմից Անիում:

Անին, որպես մի կախարդական մագնիս, դեպի իրեն էր ձգում խանդավառ պատանուն և ահա ստեղծվում է հարմար մի առիթ. Արտաշեսը գնում է Անի աշխատանքի ու ինքն էլ հայտնեց իր մտադրությունը և որոշեցինք գնալ միասին:

Միքայելի հայրը վաղուց հրաժեշտ էր տվել այս անցավոր աշխարհին, տան ամբողջ հոգսը թողնելով իր կնոջ՝ Դարոյի վրա: Դարոն բարեհամբույր ու ծրաջան մի մայր էր, որ յուր երեք որբերի՝ Միքայելի, Մարիամի և Լուսիկի ուսման հոգսը ուներին օրնիրուն անտրտունջ աշխատում էր ասելով ու իր շնորհալի մատներով՝ ապահովելով իրենց օրվա կարիքները:

Դարո մայրիկը, թեև անգրագետ, համոզված էր, որ իր խելահաս Միքայելը դպրոցական ամառային արձակուրդը ուզում է օգտագործել լավ բանի համար: Եվ նա իր խնայած սող միջոցներից որդուն ապահովեց ճանապարհածախսով և այնտեղ ապրուստի համար համեստ մի գումարով:


Արդեն երրորդ տարին էր, ինչ բռնկվել էր համաաշխարհային առաջին պատերազմը:

1915 թվին հայ կամավորական բանակները գրավել էին Վանն ու Ծատախը և ազատագրել հայ ժողովրդի մի հատվածը ֆիզիկական բնաջնջումից:

Եվ ահա, 1916 թվին, Անիի գիտարշավը մեկնում էր Վան, թողնելով Անիում, որպես պրոֆ. Մառի տեղակալ, Գ. Չուբինովին, ճարտարապետ Ն. Տոկարսկուն և որպես լուսանկարիչ՝ տողերը գրողիս:

Վանի գիտարշավի կազմը՝ ակադեմիկոս Ն. Մառ, Հ. Օրբելի, Ա. Լոնու-Մելիք Քալանթար, Արամ Վրույր: Նրանք մեկնում էին Վան, որն այդ օրերին ռազմաճակատ էր: Ակադեմիկոս Մառը կրում էր քաղաքացիական գեներալի համազգեստ և ուսադիրներ, իսկ Հ. Օրբելին՝ փոխ-գնդապետի: Աշխարհիբեկը չնայած զինվորական համազգեստ չունեք, սակայն ուներ

Երևի է թողնում: Երբ արեւելքից Գրե: Թարգմանում
 էր գործը ստանում քաղաքացիները: Կա խորհուրդ: Եւ
 պարտաւոր էր



չարտաւոր էր
 շարք: Եւ երբեք
 էր որեւիտ շէնք
 (Նիշք), որից Գրե
 խորհուրդը եւ Գրե
 շարքը եւ Գրե
 չէր կախարհէր:
 Վերջինը պարտ

Չբայ երեւում է որ Գրեի արժեքը Գրեի արժեքը
 պարտաւոր էր:

Ներքոյն պատկերը Գրեի Գրեի
 խորհուրդը Գրեի: Արեւելքի Գրեի Գրեի
 եւ Գրեի Գրեի: Վերջինը Գրեի Գրեի
 եւ ու Գրեի Գրեի եւ Գրեի Գրեի
 ներքին Գրեի Գրեի, թերեւ թերեւ Գրեի:
 որը Գրեի եւ Գրեի ու Գրեի Գրեի
 Գրեի, որը, ըստ Գրեի Գրեի, Գրեի է 1319 թվա
 երկրաշարժից: Ասիայի Գրեի ընդ Գրեի Գրեի
 ըր ընդ Գրեի Գրեի, որ Գրեի է Գրեի Գրեի
 հաւ Գրեի Գրեի Գրեի Գրեի Գրեի է Գրեի
 2-րդ թանգարանում: Գրեի Գրեի Գրեի Գրեի

«Երգ ու Աերկ» աշակերտական տարեգիրք, 1916 թ.:
 «Անիի Մայր եկեղեցին» հոդվածից մի էջ:

բարձրապիզ կոշիկներ, հագին ֆրենչ, գլխին սորթե գլխարկ և կողքից կախված փայտե պատռանով մաուզեր, որ դարձյալ զինվորականի տեսք էր տալիս: Այդ բոլոր «զինվորականների» կողքին Վրույրը իր հնամաշ, բարձրապիզ կոշիկներով և հասարակ զգեստով ու կոմիկական լուրջ դեմքով նմանում էր մի սպասալսի (դենշշիկ):

Մեկնումի երեկոյան ընկերս՝ Մազմանյանը, երևաց Թիֆլիսի կաշարանում՝ փոքրիկ ճամպրուկի մեջ գետեղած իր ներկերն ու վրձինները, մատիտներն ու թղթերը:

Ուժեղ եռուզեռ էր կաշարանում: Բազմաթիվ զինվորականներ այդ գնացքով մեկնելու էին ուսումնական: Գնացքում քաղաքացիների համար շատ քիչ տեղ կար: Ամեն մարդ աշխատում էր ժամ առաջ մտնել վագոն և տեղ գրավել: Վանի գիտարշալի համար, որպես բացառություն, փափուկ վագոնում տրամադրված էր մի կուպե: Միքայելն ու ես մի կերպ մտանք վագոն և մնացինք միջանցքում կանգնած, քանի որ վագոնի այդ կուպեն արդեն զբաղեցրել էին յոթ հոգի՝ պրոֆ. Ն. Մառը, իր կինը, Հ. Օրբելին, Ա. Բալանթարը, Ն. Տոկարսկին, Չուբինովը և Արամ Վրույրը:

Հնչեց երրորդ զանգը, ապա լսվեց օբերկոնդուկտորի զիլ սուլիչը և գնացքը շարժվեց:

Այդ տաղտկալի գիշերը անցկացրինք մերթ գրույցով, մերթ ուռքի վրա նիրհելով:

Առավոտյան ժամը 10-ին հասանք Անի կաշարան:

Բոլորս իջանք գնացքից, բացի Հ. Օրբելուց և Արամ Վրույրից, որոնք շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Վան, որպես գիտարշալի հասցապահներ:

Գնացքից իջնելով ես և Մազմանյանը առաջ ընկանք, ուղղություն վերցնելով դեպի Խարկով հայաբնակ գյուղը: Չորս կիլոմետր քայլելուց հետո, հասանք Խարկով, որ մի փոքր հանգիստ առանք և իջանք Ախուրյանի խոր ձորը: Նավակով անցանք գետի աջ ափը, որտեղից ձգվում է շալիղը դեպի ավերակների քաղաքը:

Քայլում ենք շալիղով, որը Ախուրյանին զուգահեռ իր օձապտույտ գալարումներով ձգվում է դեպի արևմուտք: Բալական քայլելուց հետո, շալիղն աստիճանաբար բարձրանում է Ախուրյանի ձորի աջ ափի փեշերը և ձորի լանջերը քերելով տանում մեզ դեպի վեր:

Քայլում ենք էպիկական ձորի լանջերով: Մեր ոտների տակ Ախուրյանն է: Եվ ահա մեր առաջ բացվում է գեղեցիկը գեղեցիկների... Մի կողմից բնությունն է կերտել իր անձեռագործը, մյուս կողմից մարդու հանճարը: Եվ ահա, այստեղ, ասես բնությունն ու մարդը մրցման են ելել, ու չգի-

տես, որի՞ն տաս առաջնությունը: Մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից դյուրիշ:

Ահա այնտեղ, ուր Գլիճորը որոշ բարձրության վրա հաստիւմ է Ախուր-յանի ձորով, խմբվել են պարիսպներն ու բուրգերը: Ահա քառանկյունի խրոխտ բուրգի փեշերին կուշ է եկել մի փոքրիկ մուտք. դա «Տիգրանի» դռուն է: Իսկ այնտեղ, բուրգերից ու պարիսպներից վեր, մի կանաչազարդ բարձրավանդակի վրա, ձորի շուրթին, թառել է Տիգրան Հոնեցի գեղատեսիլ եկեղեցին, դեպի երկինք ձգվող իր գմբեթով: Իսկ այնտեղ, խոր ձորում, Ախուրյանը, քերելով ուղղաձիգ ապաստածները՝ խլամբմունջ առաջ է ընթանում:

Մենք կանգ առանք ու լուռ նայում ենք այդ գեղանկար պատկերին:

Բնության ու մարդու հանճարի այդ կերտվածքների առաջ ոգեշնչվեց ընկերս. նա իր ձախ ձեռքը դնելով ուսիս և աչքը պարզելով առաջ, արտասանեց մեծ քանաստեղծի խոսքերը՝

«—Էս տախտի վրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպես զարհուրանք,
Բուռ կոհնչն է տարածվում մերթ-մերթ,
Իսկ քարի գլխին, լուռ, մարդու նման,
Նայում է ձորին մի հին խաչարձան...»

Մի պահ քարացած, լուռ դիտում ենք այդ հմայիչ պատկերն իր բազմերանգ գունավորումներով, ուր պատմական հուշարձանները միաձուլվելով բնության հետ, կազմել են մի գեղեցիկ ներդաշնակություն:

Լցվում է հոգիս բերկրանքով, սիրտս թունդ է առնում: Քաղցր, շատ քաղցր, անպատմելի մի զգացմունք համակում է ինձ: Ինչո՞ւ է ձգում դեպի իրեն, ինչո՞ւ է գերել իմ հոգին Ավերակների այդ սրբազան քաղաքը: Ամեն անգամ հեռանում եմ՝ ցավելով և վերադառնում՝ պապակ կարտոր սրտիս... Ինձ թվում է, որ ես մի բեկոր եմ, սրբատաշ մի քար, անբաժանելի մի հյուլե հավիտենական մի վշտի, հատաչանքների, խոշտանգումների, անպատմելի արհավիրքների ու լուռ տառապանքների մեջ հևող այդ սգավոր քաղաքի, որը դեռ պահպանում է իր ծվատված մարմնի մեջ գեղակերտ իրանը:

Շարժվում ենք առաջ. մտնում «Տիգրան»-ի դռնով, որը առաջնորդում է մեզ քառանկյունի բուրգի ներսը: Մեր քայլերը արձագանքում են ամալացած բուրգի տարածության մեջ:

Թողնում ենք մեր թիկունքում քառանկյունի բուրգն ու «Տիգրանի»

դուրը, և փոքրիկ զառիվերը բարձրանալով՝ կանգ ենք առնում Տիգրան Հո-
նենցի գեղաքանդակ տաճարի առաջ:

Եկեղեցու գավիթը փուլ է եկել, մնացել են միայն նրա հյուսիսա-
յին պատը և արևմտյան պատի մի մասը: Իսկ բուն եկեղեցին՝ Անիում
գտնված հուշարձաններից ամենամտրոջականը կարելի է համարել: Ժո-
ղովուրդը նրան անվանում է «Նախշու եկեղեցի», իր առատ քանդակների
և գունագեղ որմնանկարների համար: Որմնանկարները իրենց վրա կրում
են բազմաթիվ սպիներ, բիրտ, վայրագ մարդկանց ձեռքերից:

Արվեստի մի փոքրիկ կանառ կարելի է անվանել այդ հուշարձանը,
որի նազելի իրանի, արտահայտիչ քանդակների ու որմնանկարների, ընդ-
հանուր կառուցվածքի, ձևերի ու ծավալների փոխհարաբերությունների հա-
մաչափ շաղկապումը, որը տալիս է գեղեցիկ մի ամբողջություն՝ ձուլված
բնության հետ, ցույց է տալիս 13-րդ դարի մեր ստեղծագործ նախնիների
մեծ վարպետությունն ու բարձր ճաշակը:

Ընկերս՝ Միքայելը, հափշտակված դիտում է արվեստի այդ գեղեցիկ
կոթողը: Նա ոգևորված ասում է ինձ.

— Արտաշես, տես, ինչքան անսպառ նյութ կա այս գողտրիկ հուշար-
ձանի վրա: Ես պիտի աշխատեմ շատ բան նկարել ու նկարագրել, եթե
միայն ժամանակը թույլ տա:

Որքան արտահայտիչ, բնույսն ու կենդանի են այս քանդակները: Այս-
տեղ մենք տեսնում ենք խաղաղություն, սիրո, գեղեցկության և ուժի ու
աշխատանքի արտահայտություններ զանազան կենդանիների ու թռչուն-
ների միջոցով պատկերված:

Ահա հարավային ճակատի լուսամտի տակ հուշկապարիկները
թռչունի մարմնով ու մարդկային դիմագծերով: Այնտեղ, հարավային ճա-
կատի հարավ-արևմտյան անկյունում, մի խոշոր թռչուն իր գիշատիչ կտու-
ցով իր գլուխը դարձրել է մի կողմ ու անթարթ աչքով նայում է: Ահա և
եղևիկը նրբագեղ մարմնով. նա աջ ոտը բարձրացրել է, նազելի պարանո-
ցը ուժեղ շարժումով թեթել էտ ու նայում է անմեղ հայացքով:

Բոլոր կենդանիները քանդակված են շարժման մեջ, իրենց բնական
տեսքով, ասես ապրում, շնչում ու զգում են:

Արևմտյան ճակատը, բացի քանդակներից, հարուստ է նաև որմնանկար-
ներով:

Ես ցույց տվի Միքայելին իմ սիրած արաղաղը, որն ինձ գրավել
էր մանուկ հասակից: Նա քանդակված է հյուսիսային պատի անկյունում:
Նա կանգնած է հաղթական կեցվածքով, ասես ասում է. «Ես անհաղթ եմ»:

Մանուկ հասակից հաճախ գալիս էի այստեղ հատկապես նայելու իմ սիրած արաղաղին և հիշում խորոզի երգը:

Եկեղեցու դուռը փակ էր:

Մենք մեր ճանապարհը շարունակեցինք:

Անցնելով բաղնիքի փլատակների, Փրկչի, Կատրանիդե թագուհու փրված դամբարանի քարակույտերի մոտով՝ կանգ առանք Մայր տաճարի դիմաց և դիտում ենք:

Ահա դարերի խորքից մեզ է նայում Աստվածամոր տաճարը: Անի քաղաքի ակնապարար կոթողներից մեկն է այն, որ իր վեհապանձ կեցվածքով տիրապետում է մայրաքաղաքի վրա և Անի այցելողի ուշադրությունը գրավում: Նա կառուցված է 10-րդ դարում (ավարտվել է 1001 թվին) Կատրանիդե հայոց թագուհու կողմից: Տաճարի չորս պատերն արտաքուստ ունեն զարդաքանդակներ, նուրբ որմնապուրակներ ու կամար սղեղներ: Լուսամուտները կրում են զարդաքանդակ պսակներ ու շրջափակեր: Երեք մուտք ունի այդ հսկան՝ հյուսիսային, հարավային և արևմտյան: Հարավային պատի վրա փորագրված է Կատրանիդե թագուհու արձանագրությունը՝ դա կառուցման արձանագրությունն է:

Արևելյան ճակատի երկու մեծ խորշերի մեջ, վերին մասում, նուրբ ճաշակով քարե ժապավենների վրա կերտված են նրբին քանդակներ, որոնք իրենց ձևով ու բովանդակությամբ բացառիկ են հայ պատմական արձանագործության մեջ: Այդ քարե ժապավենները իրենց քանդակներով կարելի է նմանեցնել ասեղնագործ-նրբին հյուսվածքների: Թերևս Կատրանիդե թագուհին իր ասեղնագործ վարպետուհիներից մեկի հորինվածքն է իր տաճարի արևելյան մեծ խորշերի վրա դրոշմել:

Մտնում ենք ներս: Բոլորովին այլ է ներքին տեսքը: Այնտեղ ոչ մի քանդակ չկա: Չորս ծանրանիստ ու երկնասլաց մույթերի վրա օղի տարածությունները հանդուգն կերպով սղոցում են սրածայր, վեհ կամարները: Այդ հոյակապ կառուցվածքի մեջ կա և վեհություն ու համաչափություն և գեղեցկություն իր պարզության մեջ:

Այդ հրաշակերտը կառուցված է զանազան երանգների տուֆ քարերից, որոնք ժամանակի, բնության տեղումների և արևի շնորհիվ թրծվել, վեր են ածվել ավելի ջերմ ու ներդաշնակ գույների, ասես տաճարի պատերը ծածկված են թանկարժեք գորգերով: Հանճարեղ Տրդատ ճարտարապետի ստեղծագործ մտքի արգասիքն է այդ հոյակապ կոթողը:

Տրամադրությունն ընկած է:

Անիի պեղումներին գործածվող 18x24 չափի լուսանկարչական գործիքը իր հինգ օբյեկտիվներով, որը Ալեքսանդրա Ալեքսեևնայի նվերն էր Մառին, հայրս հետը տարավ Վան: Իմ տրամադրության տակ թողին 18x24 չափի մի հին գործիք, առանց տեխնիկական հարմարությունների և օբյեկտիվի: Նրան ես հարմարեցրի «Բուշ» № 3 մի օբյեկտիվ և հետևյալ առավոտ, փորձի համար, լուսանկարեցի Մայր տաճարի ընդհանուր տեսարանը հյուսիս-արևելքից՝ ստուգելու համար օբյեկտիվի տեսողության դաշտը, քանի որ այդ օբյեկտիվը 13x18 չափի գործիքի համար է:

Լուսանկարելով Մայր տաճարի ընդհանուր տեսարանը, որի նեգատիվը բարեբախտաբար մինչև օրս պահվում է ինձ մոտ, Միքայելի հետ զրուցելով գնում էինք դեպի էքսպեդիցիայի նորակառույց բնակելի շենքը, որը կանգնած էր Միջնաբերդի մոտակայքում, Ծաղկոցաձորի ձախ շուրթին: Դեռ նոր էինք ոտք դրել «Մառի» փողոցը, որ հնադարանի մոտ մեր դեմ էլավ հարգելի պրոֆեսորը, գեներալի համազգեստով, խոհերի մեջ խորասուզված: Ես ընկերոջս ներկայացրի գիտնականին և պատմեցի նրա Անի գալու նպատակը: Արտոնություն խնդրեցի, որ նրան թույլ տրվի հնադարանի որոշ էքսպոնատներ նկարելու. պրոֆեսորը ուշադիր լսում էր ինձ և հիացմունքով նայում այդ 16-ամյա պատանուն, որ իր տարիքից էլ փոքր էր երևում:

Հարգելի գիտնականը չմերժեց խնդիրս և հրաժեշտ տալով՝ ասաց.

— Արտաշես, ճաշին ընկերոջդ հետ եկ:

Անիի գիտարշավի նորակառույց բնակարանը շինված էր 1908 թ. և այդ թվականից սկսած էքսպեդիցիայի անդամները ճաշում էին նոր շենքի ճաշասենյակում, սակայն այդ օրը արշավախումբը ճաշեց Միքայել վարդապետի բնակարանում. դա հրաժեշտի ճաշկերույթ էր: Այդ օրը, ճաշից հետո, գիտարշավը մեկնելու էր դեպի Վան:

Ահա, ես և Միքայելը լուռ նստած ենք ճաշի սեղանին՝ շրջապատված գիտնականներով: Նրանք ճաշում և մերթ ընդ մերթ խոսքի են բռնվում իրար հետ: Մեր բաժինն էր լուռ նստել և ճաշել: Ես փշերի վրա էի զգում ինձ և անհամբեր վայրկյաններ էի հաշվում, թե ե՞րբ պետք է վերջանա ճաշելու արարողությունը և ինձ ազատի կաշկանդված դրությունից: Կյանքիս մեջ առաջին անգամ ինձ բախտ վիճակվեց սեղան նստել մեծ գիտնականի հետ:

Ճաշի վերջում հարգելի պրոֆեսորը բարձրացնելով գինու գավաթը՝

խնեց իմ և Մազմանյանի կենացը և ընկերոջս դառնալով՝ ցուցումներ տվեց Անիում իր կատարելիք աշխատանքների մասին, խրախուսեց նրան և իր խոսքը ավարտեց հետևյալ բառերով.

— Գովելի է ձեր ձեռնարկությունը, ցանկամ հաջողություն:

Նա խոսում էր հայերեն լեզվով:

Ծաշից հետո պրոֆեսորը հրաժեշտ տվեց անեցիներին:

Արշավախումբը Անիի սուրհանդակի ուղեկցությամբ ճամփա ընկալ դեպի Անի կայարան:

Նրանք գնում էին Վան, նախահայերի կենտրոնը՝ Բիաինա, ուր դարերի փոշիների տակ մեր պատմության լուռ վկաները սպասում էին իրենց լեզուն հասկացող իմաստուն մարդկանց, խոսելու ու պատմելու նրանց, բաց անելու մինչև օրս չընթերցված պատմության էջերը:

Անեցիները արշավախմբին ուղեկցեցին մինչև «Տիգրանի» դուռը (Հոնենցի եկեղեցու մոտ), բարի երթ մատուցելով: Մենք մնացինք քառանկյունի բուրգի մոտ, չհեռացնելով մեր հայացքը արշավախմբից, որ ընթանում էր Ախուրյան ձորի փեշերը քերող շավղով: Մի փոքր հետո արշավախումբը անհետացավ ձորի ոլորապտույտում: Մենք քարացած կանգնած էինք, ասես անբացատրելի մի թախիժ իջավ մեր սրտերին:

Մազմանյանը երեք օր հյուրընկալվելով էքսպեդիցիայի շենքում տեղափոխվեց Իգաձոր, Կարապետի «բնակարանը»:

Իգաձորի պատանի գիշերօթիկը վճարում էր տանտիրոջը օրական 50 կոպեկ, որպես սննդի վարձ, այսինքն՝ այնքան, որքան որ Անիի գիտարշավի յուրաքանչյուր անդամի համար վճարվում էր Միքայել վարդապետին:

Ես չափազանց վրդովված էի իմ ղեկավարի՝ Չուբինովի անտարբերության վրա: Այդ անչափ տարօրինակ մարդը սկզբնական օրերին ոչ մի հանձնարարություն չտվեց ինձ: Ես չգիտեի իմ անելիքը: Հետագայում միայն կարգադրեց, որ լուսանկարեմ մի շարք կարասների բեկորների վրա երիզվող գոտիների այժմանկարները: Այդ հանձնարարությունը 27 նկարահանումներով ավարտվեց, որից հետո դարձյալ պարսպուրդ ց՛նոր կարգադրություն:

Հետագայում, պրոֆ. Մառի վերադարձի նախօրյակին, Գ. Չուբինովը հանձնարարեց ինձ 1911 թվականին՝ Անիի 10-րդ գիտարշավի պեղումներից ի հայտ եկած եկեղեցին լուսանկարել իր մանրամասներով (փլված միևարեի մոտ):

Ն. Մ. Տոկարսկին չափագրում էր, իսկ ես լուսանկարում:

Ի դեպ, 1911 թվականի պեղված այդ հատվածը հետաքրքիր է իր երեք շերտերով: Պեղված եկեղեցու հատակից մոտ 70 սմ վեր պատրաստված

էր երկրորդ հասակը: Եկեղեցուց դուրս, երկրորդ հասակից մտն 1 մ 20 սմ բարձր թոնհրներ, գերեզմաններ ու հասարակ շարվածքներով բնակարաններ: Այդ շէրտերը ընդգրկում են 8—14-րդ դարերը և ցույց են տալիս արտագաղթի ու ներգաղթի քանակն ու ժամանակները:

Ազատ ժամերս անց էի կացնում ընկերոջս՝ Միքայելի հետ և որպէս ուղեցույց առաջնորդում էի դեպի Անիի զանազան հուշարձանները: Այնպէս էի դասավորում այցելության ժամերը, երբ նրանք լուսավորված էին կամ պիտի լուսավորվեին:

Մի առավոտ կանուխ ճամփա ընկանք: Անցանք Դվնո դռնով դեպ հյուսիս, լայնատարած բաց դաշտը ու այնտեղից դիտում էինք մայրաքաղաքի հյուսիսային ամրությունները, որոնց կենտրոնում կանգնած է Անիի հզոր դարպասներից մեկը՝ **Ավագ դուռը**, իսկ նրա ձախ կողին բարձրանում է ծանրանիստ հսկա մի բուրգ:

Ահա և հյուսիսային ամրությունների հյուսիս-արևմտյան կողմը գըտնըվում է խոշոր մուտքերից մեկը՝ դուռն **Կարուց**, սեղմված երկու խրոխտ բուրգերով, որոնք կարծես երկու խիզախ հսկաներ աշալուրջ պահպանում են այն: Իսկ հյուսիս-արևելյան անկյունում, որտեղից սկիզբ է առնում Գլիծորը, կանգնած է քաղաքի երրորդ խոշոր մուտքը՝ **Դվնո դուռը**:

Վաղ առավոտի թարմ ճառագայթների տակ հյուսիսային ամրությունները իրենց բազմաթիվ մեծ ու փոքր բուրգերով շարված են մեր առջև: Նրանց հաղթ մարմինները ծածկված են թշնամիների նետերից ընդունված բազմաթիվ սպիներով, որպէս հետքեր բազմաթիվ գոռ մարտերի:

Մայրաքաղաքի ամենաուժեղ արհեստական ամրությունները հյուսիսային երկշարք պարիսպներն են՝ կառուցված հզոր **Սմբատի**՝ Բագրատունյաց տան զահակալի կողմից:

Սմբատյան պարիսպների երկարությամբ անց է կացված կոփածո քարերով մի մեծ խրամատ, որը ժամանակին լցվում էր ջրով: Դա մի տեսակ պատնէշ էր առաջացնում հարձակվող թշնամու առջև:

Մենք կանգնած բաց դաշտում, դիտում ենք մի ամբողջ հազարամյակ կյանք ունեցող կախարդական քաղաքի կոռ ամրությունները, որոնք իրենց կյանքի ընթացքում տեսել են քաղցր և դառն օրեր:

Ակամայից մարդուս երևակայությունը թերթում է պատմության մագաղաթյա էջերը և երևակայական ուժեղ թոփշքներով մեկը մյուսի ետևից աչքիդ պատկերացնում նրա դրվագները՝ նվիրական քաղաքի կյանքի հետ կապված...


...Ահա հայկական այրուձին հյուսիսային ամրությունների հզոր դար-



Անի.— 1912 թ.:— Չախից աջ, Ա. շարք— Պ. Կնյազնիցկի, Ն. Ադունց, Վ. Բերիձե, Ն. Մառ, Ա. Անդրիանով, Լ. Բալանթար, Յու. Ստրումե, Յու. Սմիռնով: Բ. շարք— Ա. Վրույր, Հ. Օրբելի:



Անի.— Ա. շարք (նստած)— Գ. Ղափանցյան, Ն. Մառ, Հ. Օրբելի: Բ. շարք—
Ա. Վրույր, Ղիբշիճե:



Հին-Զուղա—1915 թ., Արամ Վրույր



Ամբերդ — Լ. Ա. Քալանթար:

Ամբերդ — Հ. Ա. Օրբելի:
Լուսանկարեց Արտաշես Վրույր, 1936 թ.






Աճի.— 1907 թ.— Անեցիներ (թանգարանի շենքի մոտ): Չախից աջ: Ա. շարք (Արտած)— Վահրիճ, Արտաշես, Յուրի, Արա, Բյանդարյան: Բ. շարք (Արտած)— Ալեքսանդրա Ալեքսենյան, Վոլոդյա, Նունե Վրույր, Միքայել վարդապետ, Պալտարացկի, Ն. Մառ: Գ. շարք (Կանգնած)— Օհան, Կարապետ, Արամ, Ա. Բալանթար, Հ. Օրբելի, Թ. Թորամանյան:

Աճի.— 1905 թ. Չախից աջ— Արամ Վրույր, Արտաշես, Նվարդ, Հայկանուշ (Ա. Վ.-ի քույրը), Հայկ, Մարիամ (Ա. Վ.-ի մայրը), Նունե, Վրույր, Արա:





Անի.— 1914 թ. Զախից աջ, Ա. շարք— Ն. Մառ, Ալաքսանդրա Ալեքսեևնա,
Արամ Վրույր, Բ. շարք— Ա. Քալանթար, Ն. Բունիաթյան, Տարագրոս:



Ն. Մ. Տոկարսկի

պասներից դուրս է նետվում ի մարտ, ի մահ: Նրա առջևից սանձակոտոր
ամենի երիվարի վրա սուրում է հայկական զորքերի քաջակորով ու իմաս-
տուն սպարապետը՝ **Վահրամ Պահլավունին...**

Ահա և հերոսության մայրը՝ **Այծեննիկը** պարիսպների վրա կանգնած
մարտնչում է անագորույն թշնամու դեմ...

Ահա և խաղաղ օրերի Անին... Շինարարական մեծ աշխատանք հան-
ճարեղ ճարտարապետների և քարագործների, հմուտ որմնադիրների ու վար-
պետ քարակոփների...

Խինդ, պար, ուրախություն... Տոնական օրեր... Քարավաններ ուղտե-
րի երկար շարաններով, բարձրած ծանր հակերով, ել ու մուտ են անում
Անիի դարպասներով...

Պատկերները մեկը մյուսի ետևից դժնդակ ու երջանիկ պահերի վառ
գույներով գալիս ու անցնում են, փոթորկելով մարդու հոգին մերթ հրճվան-
քի ու հպարտության, մերթ զայրույթի ցավատանջ զգացումներով...

Քայլում ենք...

Դեռ արևը շողում է հյուսիսային ամրությունների վրա:

Կանգնած ենք **Ավագ դռան** առջև: Մուտքի ձախ կողին բարձրանում է
հսկա մի բուրգ, խիստ ու անողոք, ներսի կողմից հավիտենականության
նշանը ճակատին: Մարդ ճնշվում է այդ խորխոր հսկայի ստորոտում: Իսկ
դռան աջ կողմում, կիսավեր բուրգի կողքին, պարսպի վրա, հմուտ վար-
պետը երկաթե գրչով դրոշմել է **Անիի** խորհրդանշանը: Դա մի վագր է, որն
իր ճկուն մարմնով, զգույշ քայլերով ընթանում է առաջ, դեպի նպատակա-
կետը սևեռած հայացքով... Նա շնչում է... Տրոփում են նրա երակները...

Ակամայից մարդ գամվում է իր տեղում, և երկար ժամանակ հայացքը
չի կարողանում հեռացնել այդ գեղեցիկ գործից:

Անիի խորհրդանշանը տեղ-տեղ մամուկալել է: Արևի ճառագայթնե-
րը խաղում են բարձրաքանդակի վրա և կենսատու ցուլքեր արձակում, ավե-
լի վառ ու կենդանի դարձնելով նրան...

Միքայելը, առանց ժամանակ կորցնելու, ձեռքն առավ մատիտն ու թուղ-
թը և թեթև ու ճկուն շարժումներով սկսեց ուրվագծել այն, որից հետո,
վրձնի համարձակ շարժումները աստիճանաբար, թղթի հարթ մակերեսի
վրա դրոշմեցին Անի քաղաքի խորհրդանշանը բազմերանգ գույներով, ձև ու
ծավալ ստացած:

Նստած քարակույտերի վրա հիացմունքով դիտում էի նրա աշխատան-
քը ու հրճվում նրա շնորհքի ու կարողության վրա:

Թողնելով մեր ետևը Ավագ դուռն ու մայրաքաղաքի խորհրդանշանը, պարիսպներին ու բուրգերին զուգահեռ քայլում ենք դեպի արևմուտք, անցնում Կարուց դռան առջևով մինչ պարիսպների վերջավորության անկյունը, ուր չարխափան խոշոր խաչակիր բուրգի մոտ հյուսիսային պարիսպները թեքվում են դեպ արևմուտք: Ահա այստեղ, մի փոքրիկ ձորանման տարածություն կտրելով, որի ձախ կողմը կարմրավուն ժայռերի մեջ փորված է երկու եկեղեցի, մտնում ենք Իգաձոր:

Չնայած Իգաձորը բուսականությունից զուրկ մի չոր ձոր է, գորշ գույնի տուֆի մի ամբողջական զանգված, քայց նա շնչում է, կյանք կա այդ ձորի մեջ: Այնտեղ կարելի է տեսնել աջ ու ձախ մեծ ու փոքր իրենց բերանները լայն բացած բազմաթիվ հնամյա այրեր, երբեմն երկհարկ ու եռահարկ, որոնց մեջ բնակություն են հաստատել նոր անեցիները: Այնտեղ մարդիկ են երևում... Կովերի բառաչ ու ոչխարների մայուն... Ծիացող օջախներ... Եվ բոքր թոնիրներից դուրս եկող հաշկական լավաշի բուրմնալից հոտ...

Ահա, ձորի աջ փեշերի վրա երևում է ընկերոջս՝ Միքայել Մազմանյանի այր-«բնակարանը», որտեղ մոտ երեք ամիս գիշերներն անցկացրեց **Աճի արվեստի ուխտավորը...**

Անցնելով շնչող ձորի միջով, մտնում ենք Ծաղկոցաձոր:

Այստեղ այլ է տեսարանը: Մեր առջև բացվում է մի լայն հովիտ ծաղկազարդ ու կանաչավետ: Երփներանգ ծաղիկներն իրենց արբեցնող բուրմունքը ափռել են չորս կողմը:

Իգաձորի ու Ծաղկոցաձորի անկյունում պենզայի հսկա ժայռերը տընքում են ահռելի ծանրության տակ: Նրանք ուղղաձիգ, սուր հատումով կանգնած են ձորի ձախ ափին՝ ներկայացնելով իրենցից անխորտակելի վիթխարի մի պատնեշ: Իսկ ձորերի աջ հանգույցում կանաչին է տալիս հայր Միքայելի փարթամ բանջարանոցը ծառերով շրջափակված:

Ծաղկոցաձորը սկիզբ է առնում Աճի գյուղից, Աճի քաղաքի հյուսիսային ամրություններից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք: Չորը փոքր գալարումներով ձգվում է հյուսիսից-հարավ: Գնալով նրա կողերը սեղմվում են և որոշ տեղ վերածվում կիրճի և սպա դարձյալ լայնանալով հատվում Ախուրյան ձորում:

Աղբյուրների պարզ ու ջինջ ջրերից կազմված Աճի վտակը, թավալգոր, կենսուրախ շշուկներով, Ծաղկոցաձորի մարգագետինների միջով, ոլորապտույտ գալարումներով գնում, միանում է Ախուրյան գետին:

Ծաղկոցաձորը լեցուն է հարյուրավոր այրերով: Հիմա այնտեղ մարդիկ չեն ապրում: Այրաբնակ անեցիների թոնիրներում ու օջախներում այլևս չի բոցկլտում հայրենի կրակը: Ամեն ինչ թափուր է: Այնտեղ ամայությունն է իր սև կնիքը դրոշմել...

Գեղեցիկ քաղաքի վաղեմի բնակիչները լքել են ամեն ինչ. տուն, տեղ, հայրենի հող... Եվ դառը ճակատագրի անողորմ ձեռքից տխուր քարավանների երկար շարաններով ճամփա էլած, գնացել են անդարձ, դեպի հեռու, դեպի օտար հորիզոններ:

Ծաղկոցաձորի այրերը լոկ բնակարաններ չեն. այնտեղ կան ժայռափոր տաճարներ, կրպակներ ու դամբարաններ:

Քայլում ենք Անի վտակի ընթացքով առաջ: Մի փոքր տարածություն կտրելուց հետո անցնում ենք ձորի աջ փեշը, ուր մի շավիղ մեզ առաջնորդում է դեպի վեր:

Այնտեղ, բարձրության վրա, գտնվում է Տիգրան Հոնեկցի տոհմական երկհարկ այր-դամբարանը: Նա կազմված է մի քանի այրերից:

Լուռ կանգնած ենք դամբարանի ներքնահարկ ժայռափորներից մեկում, մի գողտրիկ, դժբախտ շիրմի առջև: Հազիվ 6—7 գարուն բոլորած մի բողբոջ աղջկա գերեզմանն է այս: Որքան կսկիծ ու վիշտ է թաղված այդ գերեզմանում... Այնտեղ կան և ուրիշ շիրմներ, բոլորն էլ մոռացված:

Գերեզմանային պաղ շունչ... Մի տեսակ ահասարսուռ լռություն...

Ծնշվում է մեր հոգին և մեր ծանր արտաշնչման հևքը խուլ արձագանքում է հնօրյա դամբարան-այրում, որին իրենց ճնշող խուլ շնշով պատասխանում են հարակից փոքրիկ, ժայռափոր սրահները: Ասես հավիտենական հանգստյան խորքից, այս մոռյլ դամբարան-այրերում, դարերի ծանրության տակ ծանր հևքով հնում է Հոնեկցի սերունդը...

Յոթը դար անխող հանգչում էր փոքրիկի անյունը այս մոռյլ դամբարանում, սակայն տգիտությունն իր ավերող ու կործանիչ բիրտ ձեռքը մխրճել է մինչև իսկ այս փոքրիկ գերեզմանի մեջ և խողովել աղջկա հավիտենական հանգիստը: Վայրենի հովիվները սրբապղծում են գերեզմանը և իրենց ենթադրած ոսկե զարդերը չգտնելով, լքում, հեռանում են:

Անիի գիտարշավը ժամանակին կարողանում է հասնել և ավերված գերեզմանի հողերի միջից հանել փոքրիկ աղջկա զգեստի մի մասը, կուսության գոտին և ասեղնագործ կրծքակալը, որը ներկայումս գտնվում է Հայկական ՍՍՀ-ի պատմական թանգարանում:

Ծնշող տպավորության տակ թողնում ենք փոքրիկ անեցու ավերված գերեզմանը և բարձրանում դամբարանի վերնահարկը:

Մեր առջև բացվում է մի սենյակ՝ հավանաբար Տիգրան Հոնեկցի տոհ-

մային դամբարանի մատուռ-աղոթատեղին: Պատերը ծածկված են ծեփով, վրան երևում են որմնանկարներ:

Միքայելը սկսեց նկարել:

Առավոտյան նա գործ ուներ քարի վրա դրոշմված բարձրաքանդակի հետ, իսկ այժմ՝ գունավոր որմնանկարի:

Թողնելով նկարչին մեծակ իր վրձնի, ներկերի ու թղթերի հետ, նըստել էի ժայռափոր պատի մոտ և բարձունքից, մտքերի մեջ խորասուզված, դիտում էի շրջապատս ու հիանում բացված տեսարաններով:

Անցավ բավական ժամանակ և ինձ սթափեցրեց նկարչի ձայնը, որ իր ավարտած աշխատանքը ձեռքին կանգնած էր կողքիս:

Ես հափշտակված նայում էի որմնանկարը թղթի վրա և ապա զննող հայացք նետում ժայռափոր պատին:

Ահա, թղթի վրա գունավոր պատկերված է Տիգրան Հոնեկցի, եթե կարելի է ասել, մատուռ-ժայռափորի որմնանկարը կենդանի, վառ գույներով, առանց աղավաղումի:

Հեռանալով Տիգրան Հոնեկցի տոհմային դամբարանից, ճամփա ընկանք դեպի Իգաձոր՝ դեպի Մազմանյանի այր-«բնակարանը», ուր հրաժեշտ տալով ընկերոջս՝ քայլերս ուղղեցի Իգաձորն ի վեր՝ դեպի տուն:

Մտասույզ քայլում էի ավերակների ու քարակույտների միջով: Գանգիս մեջ անվերջ պտտվում էր ընկերոջս՝ Միքայելի վարպետությունը նկարչական արվեստի և մտքով զնում էի շատ հեռու, դարերի խորքերը ու սկսում էի մտածել հայկական դիցաբանության մասին:

Եվ երևակայական մտքերը չորս կողմից պաշարեցին ինձ: Ինձ թվում էր, թե մեր քարի հարալեզները շունչ ու կենդանություն են տվել մի հին անեցու՝ մի հմուտ նկարչի և, ահա, իմ սոջև կանգնած է վերածնված նոր անեցին, երակների մեջ կրելով հնի թափն ու ավյունը, պատանի կերպարանքով մատիտն ու վրձինը ձեռքին...

Վերստին շրջում ենք Անիի ավերակներում ընկերոջս՝ Միքայել Մազմանյանի հետ: Այդ խանդավառ պատանին, որը մոռացության է մատնել ամեն ինչ և հափշտակված հայ արվեստի ու մշակույթի այդ մեծ կաճառի անապառ նյութերով, առանց վայրկյան կորցնելու, թուղթն ու մատիտը, ներկն ու վրձինը ձեռքին անդույ աշխատում է:

Կրտսեր անեցիս սիրում է Անին ու ապրում Անիով և նրան ուրախություն է պատճառում, երբ շատերն են սիրով ու պատկառանքով մոտենում այդ սուրբ քաղաքին:

Կախարդական քաղաքը, որպես մի նահապետ, ասես աներևույթ ձեռքով կերտում է ապագա Միքայել ճարտարապետի հոգին, նա սաղմնավո-

րում է նրա էությունը իր դարերի փորձով ու աննախընթաց վսեմ արվեստով:

Եվ իսկապես, տարիներ անց՝ պատանու այս հանդիպումը հայ անցյալի նշխարներին տալիս է իր արդյունքները:

Մի օր Միքայելի հետ որոշեցինք այցելել ստորերկրյա Անին: Անիում մինչև օրս հայտնի է երկու ստորերկրյա անցք, որոնք առաջնորդում են այցելուին հավիտյան խավարի մեջ խորասուզված ուղիներով դեպի երկրի ընդերքը:

Այդ անցքերից մեկի երախը բացվում է Միջնաբերդի տակ՝ Ծաղկոցաձորի կողմից, բազալտե կոռ զանգվածների մեջ: Իսկ երկրորդինը՝ Տիգրան Հոնեհի եկեղեցու մոտ, Ախուրյանի ձորի կողմից: Այս երկրորդ ստորերկրյա անցքը, ուր մարդու միտքն ու բրիչը փորել, մխրճվել են պեմզայի զանգվածների մեջ ու մտել երկրի խորքերը՝ իր մոլորուն ուղիներով մարդուն առաջնորդում է դեպի անհայտություն:

Մենք նախընտրեցինք առաջինը, թողնելով երկրորդը հետագային:

Ահա սողալով մտնում ենք ներս: Անցքը գնալով ընդարձակվում է թե բարձրությամբ և թե լայնությամբ, այնպես որ մի փոքր անց արդեն քայլում ենք կանգնած: Ծարժվում ենք խարխալեղով մոմի տատանվող աղոտ լույսի տակ, որը հաճախ մարում է և մենք թաղվում ենք թանձր խավարի մեջ: Օդը նոսր է ու խոնավ, և սարսուղնում է մեր մարմինները, իսկ մոայլ խավարը ճնշում է մեր հոգին:

Բավական քայլելուց հետո տեսանք, որ ճանապարհը ճյուղավորվում է: Պետք է ընտրել երկուսից մեկը: Հարցականները շարվում են սոջոյ և չգիտես, թե ո՞ր ուղին նախընտրես:

Չնայած բազում անգամ առիթ եմ ունեցել այդ մոայլ ու անհյուրընկալ ուղիներով քայլելու, բայց երբեմն պատահել է, որ ես էլ եմ մոլորվել:

Ծարունակում ենք մեր ճանապարհը՝ ուղղություն վերցնելով աջ: Մի փոքր հեռու անցքը դարձյալ ճյուղավորվում է և քանի խորանում ենք ներս, մխրճվում ենք ճյուղավորումների մեջ, որոնք ուստայնի ցանցի նման խճոդում են մեզ: Այստեղ իմ հիշողությունը դավաճանում է ինձ. մենք քայլում ենք անվերջ ու անսկիզբ և միշտ դուրս գալիս միևնույն կետում:

Մոգական ուղիներ, որոնք գալարապտույտ ժապավենների նման ձրգվում են և գերեզմանային խավարի մեջ թաղված, իրենց սեղմված պատկերով ճնշում են մարդուն: Մի պահ սուկում է անցնում մարմնիս միջով և ակամայից դաժան մտքերը պաշարում են մեզ... Արդյոք դատապարտված չե՞նք հավիտյան մնալու այդ անհրապույր մութ անցքում, որպես մեր վերջին հանգրվանում:

Հանկարծ մեր մոնը մարում է, և մենք մնում ենք մթության ու խոնավության մեջ թաղված:

Եվ ծանր մտքերը սև ուրվականների նման պտտվում էին գանգիս մեջ: Ուզեցի շարժել ոտքս... բայց մահասարսուռ մի դող անցավ մարմնովս... ատամներս կափկափեցին տենդով բռնված հիվանդի նման: Մահաբեր պաղ քրտինքը պատեց ճակատս... Ոտքս չէր բարձրանում, ասես գերեզմանից դուրս եկած կմախքացած մի ձեռք ուժգին բռնել էր ոտքս ու քաշում դեպի իրեն... Միքայելի վառած լուցկիները մարում էին մեկը մյուսի ետևից: Ինձ թվում էր, թե կմախքացած ձեռքը քաշում է իմ ոտքը: Վերջապես Միքայելին հաջողվեց վառել մոնը, և աղոտ լույսի տակ տեսա, որ ոտքս բռնրվել է երկու քարի արանքում:

Քայլում ենք: Վերջապես մի անցք մեզ առաջնորդում է և մի փոքր հեռոտ բացվում է մեր առջև ստորերկրյա մի սրահ: Մոմի աղոտ լույսի տակ տեսնում ենք այնտեղ մարդկային ոսկորներ ու գանգեր: Ես Միքայելին ցույց տվի այդ խոնավ ու մուսյլ սրահի անկյունում մարդկային ազդրի մի ոսկոր: Վերցնելով այդ ոսկորը, զգուշությամբ դուրս քաշեցի նրա դատարկ միջուկից մի թուղթ, որի վրա կային բազմաթիվ ստորագրություններ, իրենց թվականներով տարբեր ժամանակների: Այդ հուշաթերթիկի հեղինակը մայրս էր՝ անվախ Նունեն, որը շատ անգամ առիթ էր ունեցել Անի այցելուներին առաջնորդելու այդ մեծ խորհուրդների մեջ թաղված ստորերկրյա լաբիրինթոսը:

Մենք ևս մեր ստորագրությունները իրենց թվականներով դրոշմեցինք այդ հուշաթերթիկի վրա և թուղթը նորից խնամքով գետեղեցինք ազդրի ոսկորի մեջ:

Ահա այդ օրից անցել է բավական ժամանակ, եթե հուշաթերթիկը չի փտել, տակավին կարող ենք մեր ստորագրությունները գտնել այնտեղ: Բայց ո՞վ գիտե, կվիճակվի՞ մեզ բախտ ունենալ և կրկին տեսնել ավերակների այդ սուրբ քաղաքը:

Մենք շարունակեցինք մեր ուղին, որ այժմ ընթանում է դեպի վեր, բայց կանգնեցինք փակուղու առջև: Փլուզման հետևանքով խափանվել էր ճանապարհը՝ իր մեջ թաղելով ելման կետի ատեղծվածը:

Ենթադրություն կա, որ այդ ստորերկրյա անցքը գաղտնի ճանապարհ է դեպի Միջնաբերդ:

Հրաժեշտ տալով փակուղուն՝ ետ դարձանք: Մի փոքր շունչ առանք ստորերկրյա խոնավ ու մութ դահլիճում, ուր մարդկային ոսկորներ ու գանգեր էին հանգչում և հեղձուցիչ ծանր օդի ու տհաճ շրջապատի մեջ խորհում էինք, թե այդ գետնափոր, գաղտնի անցքերով ժամանակին, երբ այն

դեռ ամբողջական էր ու գործոն, որքա՞ն մարդիկ են էլ ու մուտ արել, և որքան կողմնակի մարդիկ էլ անձանոթ այս բարդ այնուպիսի մտայն ուղիներին, եկել և թերևս մոլորվել ու հուսակտուր, խելագարության հասնող տագնապալի օրեր անցկացնելով՝ տանջամահ եղել:

Առանց մոլորվելու անվնաս դուրս ելանք այդ գերեզմանական լուռության մեջ թաղված սարսափելի լաբիրինթոսից:

Դեռ առավուտ է: Ելնելով ստորերկրյա Անիից շարունակում ենք մեր շրջագայությունը: Դանդաղաքայլ բարձրացանք դեպի Միջնաբերդ:

Միջնաբերդում չորս կիսականգուն եկեղեցի կա. դրանցից հնագույնը 7-րդ դարու մի եկեղեցի է, որն իր հարավային պատի վրա կրում է Անիի ամենահին արձանագրությունը (հայերեն): Եկեղեցին կառուցված է այն ժամանակ, երբ Միջնաբերդը սուկ ամրոց էր Կամսարական նախարարական տոհմի: 7-րդ դարի այդ կերտվածքը ներքուստ ունի յուրահատուկ քանդակագարդ որմնախոյակներ: Երկրորդը՝ Միջնաբերդի մատուռը, իր գեղաքանդակ տեսքով ու կանգուն գմբեթով, և երրորդն ու չորրորդը՝ ութանկյունանի եկեղեցին և մի ուրիշը: Այնտեղ մենք մանրամասնորեն դիտեցինք 1907—08 թթ. պեղված վայրերը: Տեսանք արքունական բաղնիքը, ջրատար խողովակները, պալատի մեծ սրահի մնացորդները և ուրիշ ավերակներ:

Այնտեղ, Միջնաբերդում, ծանրանկատ հանգչում է մի դամբարան՝ դա Գայի գերեզմանն է: Նրա տապանաքարի գլխին, կիսականգուն պատվանդանի վրա, կա չորս տող արձանագրություն:

Անցանք Միջնաբերդի ետևի կողմը և մեր առջև բացվեց հիասքանչ մի տեսարան:

Միջնաբերդից դեպի հարավ-արևելք մի պարանոց կազմելով ձգվում է թերակղզի՝ դա Կույսի ամրոցն է: Նա երեք կողմից շրջափակված է անդրնդախոր, անմատչելի ձորերով, որոնց հիմքերից ահռելի ապստամբները ուղղաձիգ մեկը մյուսի ուսին թառելով՝ խոյանում են դեպի վեր և ստեղծում բնական ամրություններ: Ախուրյանը իր սահանքներով բռնել է թերակղզու երկու կողմը, իսկ Ծաղկոցաձորի կողմից, Անի վտակը: Անիի այս հատվածը քաղաքի հարավային ծայրամասն է:

Այստեղ ահռելի բնությունն իր գիրկն է առել Կույսի ամրոցը: Այնտեղ երևում են կիսակործան մի աշտարակ ու պարիսպների մնացորդներ, իսկ թերակղզու կենտրոնում ավերակ մի եկեղեցի և այս բոլորը միաձուլված բնության հետ: Լուռությունը ծանր կապարի նման նստել ու բռնել է ամբողջ շրջապատը ու խորհուրդների մեջ թաղել անախցած թերակղզին:

Կույսի ամրոցի գլխին թևերը լայն տարածած սավառնում էին բազեները ու իրենց խուզարկու աչքերով որս փնտրում:

Հեթիսթային այս գեղակերտը դյուրեց ընկերոջս՝ Միքայելին, և նա ոգեշնչված սկսեց մատիտով թղթի վրա ուրվագծել Կույսի ամրոցը:

Ծարունակում ենք մեր ճանապարհը: Միջնաբերդի հարավ-արևմտյան լանջով իջնում ենք դեպի գառիվայրի շուրթին կանգնած ութանկյունի կիսավեր եկեղեցին, ապա անցնելով պարիսպների փլատակների կողքով, դեմ ենք առնում դժվարին մի անցքի: Պարիսպների տակ, պեմզայի հսկա զանգվածների մեջ, բազմաթիվ ժայռափորեր կան: Ժամանակին, փլուզման հետևանքով, ժայռափորերը կործանվել են, թողնելով որպես հետք ժայռափոր բնակարանների ու մատուռների ետևի մասերը միայն: Ես և ընկերս իրար ձեռք բռնած զգուշությամբ իջնում ենք պեմզայի կույտերի վրայով: Մեր առջև տարածվում է երկնեքանգ վայրի ծաղիկներով ու խոտերով ծածկված մի բարձրավանդակ, որի հարավ-արևելյան ծայրից դժոխային կածանը առաջնորդում է մեզ դեպի Կույսի ամրոցը: Այդ անմատչելի կածանը, որին կարելի է անվանել «սատանայի ճանապարհ», բավականին երկար է. նա քերում է ապառաժներն ու ձգվում նեղ ժապավենով: Կածանի ձախ կողմից մեզ սեղմում են կարծր ժայռերը, իսկ աջից ուղղաձիգ հատումով ապառաժները գահավիժում են դեպի ձորը. մի անզգույշ քայլ ու մարդ կորած է:

Ծունչներս բռնած, հայացքներս գամած ձգվող կածանին, զգուշությամբ առաջ ենք շարժվում «սատանայի ճանապարհով», խուսափելով չնայել դեպի խորխորատը... Վերջապես ավարտում ենք մեր վտանգավոր ուղին և մի փոքր մագլցելուց հետո հասնում ենք թերակղզու կատարին:

Մեր շուրջը փլատակներ ու քարակույտեր են, որոնց մեջ որպես մի մենավոր վկա իր հոշոտված, բայց գեղեցիկ մարմնի մասերով կանգնած է մի հոշակապ կոթող, որի հյուսիսային ու արևելյան պատերն են կանգուն և մասամբ արևմտյան պատից մի անկյունը, որի վրա պահպանվում են դեռևս նրբագեղ քանդակներ, իբրև նշումներ իր գեղակերտ իրանի: Հարավային պատից մնացել է հարավ-արևելյան անկյունը, ամբողջական պահելով եկեղեցու բեմը:

Այս վայրը ժողովուրդը անվանել է Կույսի ամրոց և այդ անունով էլ սերնդե-սերունդ հասել է մեզ: Այստեղ համարչա ամեն ինչ պահպանվել է կուսական դրությամբ՝ ինչպես որ փլվել են վաղեմի շենքերը, այնպես էլ մնացել են անաղարտ. մարդկային ոտքը շատ սակավ է հասնում այստեղ:

Կույսի ամրոցը իր սգավոր ու սիրտ ճմլող տեսքով, լուռ հանգչում է ամայացած թերակղզու գլխին՝ ողբալով իր անփառունակ վիճակը: Նրա ողբին խուլ մրմունջներով ձայնակցում է Ախուրյանը, որը տանում է իր պղծ-

տոր ջրերը դեպի Մայր Արաքսը, խառնելու իր վիշտը նրա մեծ վշտին:

Այստեղ ընկերս վառ տպավորությունների մեջ մխրճված, իր պատանեկան երևակայությամբ իմ առջև նկարագրում, պատկերում ու բացատրում էր, թե ինչպես կարող էր լինել Կույսի ամբողջ դարեր առաջ, երբ կենդանի էր նա ու շնչուն: Պատկերավոր նկարագրություններով ու օդի մեջ ձեռքի լայն շարժումներով նա ուրվագծում էր նախկին կանգուն եկեղեցին, հարակից շենքերն իրեն շրջապատող աշտարակներով ու պարխապներով և այնտեղ ապրող բնակիչներով:

Մենք որոշեցինք հրաժարվել դժոխային կաճանից և վերադառնալ այլ նաճապարհով: Կույսի ամբողջ հարավ-արևելյան կողմով. չնայած ոչ մի կաճան ու արահետ չկա, բայց հազարապատիկ դյուրին է իջնել դեպի Ախուրյանի ձորը: Այդպես էլ արհևր: Այդ կողմը, որ ժամանակին ամրացված է եղել պատնեշներով, այժմ փլատակների կույտի է վերածված: Արջի նաճապարհներով վայր իջանք Ախուրյանի ձորը, որտեղից հնարավոր է վերադառնալ միայն Ծաղկոցաձորով:

Ախուրյանի ձորից մենք թեքվեցինք դեպի աջ և մտանք Ծաղկոցաձոր: Այստեղ մեր առջև բացվեց ծաղկավետ մի լայն հովիտ, որի միջով հոսում է Անի վտակը: Նրա հունի ափերը բռնել է եղեգնուտը: Այդ գեղեցիկ հովիտը գնալով սեղմվում է և ապա դարձյալ աստիճանաբար լայնանալով, ոլորապտույտ ձգվում է դեպի հյուսիս: Ահա այդ ձորի շավիղներով վերադարձանք Անի:

Ստորերկրյա Անին իր մութ ու խորհրդավոր ուղիներով ծանր տպավորություն էր թողել Միքայելի վրա: Եվ այդ հոգեկան վիճակը աստիճանաբար վերացավ, երբ հետևյալ օրերին մենք այցի գնացինք Ապուղամբենց ու Փրկիչ: Այդ երկու գեղակերտ կոթողները 11-րդ դարու հայ հանճարեղ ստեղծագործ մտքի արտահայտություններ են:

Ահա «Փրկիչ» եկեղեցին:

Նա իր նագելի կառուցվածքով, որը խրոխտ վեր է խոյանում ոսկե հատման գեղեցիկ համաչափությամբ, կանգնած է մեր առջև իր սիգապանծ տեսքով, որպես գեղանի մի կույս: Նրբագեղ որմնասյուններն ու աղեղները, երկու շարք, պարուրում են եկեղեցու բազմանկյուն իրանը: Մուտքը չնայած փոքր է, բայց քանրարավոր ճարտարապետը նրան տվել է պատկառելի տեսք և գեղեցիկ ու խիստ արտահայտություն իր պարզության մեջ: Մուտքից վերև, արտաքուստ հարթ տարածության մեջ, հեղինակը գետնեղել է գողտրիկ, բոլորակ մի լուսամուտ, որը եկեղեցուց դուրս եկողի համար ծառայում է նաև որպես ուղեցույց:

Մեր ուշադրությունը գրավեց այն բարձրաբանդակ, գեղեցիկ շղթան,

որը ձգվում ու շրջափակում է եկեղեցին որոշ բարձրության վրա և որը գիտնականներն անվանել են «սելջուկյան շղթա»:

— Ես գարնանում եմ,— ասաց Միքայելը,— եկեղեցին կառուցված է 11-րդ դարում (1035 թ.), ինչո՞ւ այդ տիպի շղթան անվանել են «սելջուկյան»: Պատմությունից գիտենք, որ սելջուկները ներխուժել են Հայաստան 13-րդ դարում, դրանից առաջ նրանց հետքն անգամ չի եղել մեր երկրում:

— Այո, տարօրինակ է,— ասացի ես,— բայց փաստն այն է, որ գիտուն մարդիկ այդպես են բարեհաճել անվանել այդ գեղեցիկ քանդակը, չնայած 11-րդ դարու այդ շղթան ոչ մի առնչություն չունի սելջուկների հետ, ինչպես ասում է մեր մեծ գիտնական-նարտարապետը՝ Թ. Թորամանյանը:

Մեր դատողությունը այդ «սելջուկյան շղթայի» մասին այդքանով սահմանափակվեց: Մենք շատ երիտասարդ էինք, որ կարողանայինք ավելի խոր թափանցել այդ տարօրինակ անվան ծագման մեջ:

Եկեղեցու գմբեթի տանիքի սրբատաշ քարե ծածկը մեծ մասամբ թափված է: Այնտեղ մնացել է կրե շաղախի կոտ զանգվածը միայն: Այդ կրե շաղախը ներկայիս գործածվող ցեմենտից ավելի ամուր է ու երկարակյաց:

Փրկիչը հարավային պատի արևելյան ու արևմտյան կողմից վերի մասերում ժամանակին տուացել է երկու ճեղքվածք: Հետագայում հենց այդ տեղից էլ վերից-վար կործանվեց եկեղեցու պատը: Այդ փլուզումը տեղի ունեցավ 1960 թվականին: Սակայն ի նկատի առնելով, որ այդ հույակապ հուշարձանը 1912 թվականին հիմնական վերանորոգման էր ենթարկված, ապա կասկածի տակ է մնում, որ նրա հարավային պատի փլուզումը կարող էր տեղի ունենալ բնական եղանակով:

Անցյալում Անին ծառայել է շրջակա գյուղերի և ավանների համար որպես քարհանք, նույնիսկ Կարսից եկել և տարել են շինարարության համար քարեր: Եթե Անիից քար կրող հասքակները միայն տանեին թափված քարերը, դա կլիներ նվազագույն շարիքը: Սակայն տանողները անխնա և վայրագ կերպով ծվատել են ծանրանիստ կոթողների իրանները: Այդ են ապացուցում հուշարձանների վիճակը: Ամենուր դուր կարող եք տեսնել պարիսպների և մյուս հույակապ շենքերի ներքին շարքերի սրբատաշ քարերի բացակայությունը, ուր մնացել է միայն շաղախը՝ իր վրա վսեմ համատությանը պահելով հուշարձանների ծանր ու հսկա պատերը:

Միայն Մառի «տիրապետության» ժամանակ խստիվ արգելված էր Անիից մի հասարակ քար անգամ տանել: Խնամքն ու ուշադրությունը այնտեղ էր հասել, որ Անիում նույնիսկ արգելված էր հրազեն արձակել, որպեսզի օդի ուժեղ տատանումները չվնասեն հուշարձաններին:

Միքայելի ուշադրությունը խլել էր եկեղեցու պարզ ու գեղեցիկ մուտքը, նա սկսեց մատիտով գծագրել այն:

Զգիտեմ ինչու, մի ներքին ուժեղ պահանջ ստիպում էր ընկերոջս անպայման գնալ և տեսնել Անիի երկրորդ ստորերկրյա անցքը: Մենք հետևյալ օրը գնացինք:

Տիգրան Հոնենցի եկեղեցուց մի փոքր դեպի արևելք, Ախուրյան ձորի աջ փեշի վերին լանջերին, բաց-մոխրագույն պեմզայի զանգվածների մեջ, բացվում է երակսը երկրորդ ստորերկրյա Անիի:

Անիի երկու ստորերկրյա անցքերն էլ ժողովուրդը անվանում է «գեղան-գյալմազ»՝ «գնացողը չի վերադառնա»:

«Գեղան-գյալմազ»՝ «գնացողը չի վերադառնա»... Այդ զարհուրանք ազդող անունը միայն բավական է, որ մարդու ներաշխարհը բռնկի սարսափի զգացումով, մանավանդ այն պահին, երբ մոմն ու լուցկին ձեռքիդ պատրաստվում ես խորախորհուրդ կախարդական մուտքից ներս մտնել, ուր ուղիները սուկում ազդող խավարի մեջ ձգվում են անորոշ ու անհայտ ընթացքներով:

Այո, «գնացողը չի վերադառնա»՝ «գեղան-գյալմազ»... անա բնորոշ դրոշմ, որ ժողովրդի երևակայությունը կնքել է այդ մռայլ անցքերին:

Մեկական մոմ ու լուցկու տուփը ձեռներիս մտնում ենք ներս: Մի փոքր քայլելուց հետո այստեղ ևս ճանապարհը ճյուղավորվում է: Մենք թողնում ենք աջ կողմի անցքը և քայլում ուղիղ, դեպի հյուսիս, մեր դեմը ձգվող ուղիով: Ստորերկրյա ճանապարհը բարձր և լայն է, այնպես որ կարողանում ենք կանգնած քայլել: Տեղ-տեղ հանդիպում ենք փոքրիկ փոսերի, որոնք արհեստական են և բռնում են ճանապարհի եզրերը միայն: Որոշ տեղեր անցքի պատերի մեջ վերից վար պահարաններ են փորված, թե ի՞նչ նպատակով՝ անհայտ է մեզ: Թերևս թաքստո՞ց է կամ պաշտպանության կետ, ո՞վ գիտե:

Ճանապարհը որոշ տարածություններից հետո ճյուղավորվում է: Զմուլորվելու համար նշաններ ենք թողնում պատերին կամ հատակին ու շարունակում մեզ անհայտ ուղիով: Գնալով օրը ծանրանում է, մոմերը դժվարությամբ են վառվում: Բավական քայլելուց հետո հանդիպում ենք փակուղու: Այդտեղ ոչ թե փուլում է տեղի ունեցել, այլ պարզապես փակուղի է: Հավանական է, որ պատահական կամ նենգ դիտավորությամբ ներս թափանցած մարդկանց մոլորեցնելու համար շինված, որպեսզի անվերջ դեգերեն այդ գաղտնի անցքերում: Մենք որոշեցինք վերադառնալ: Քայլում ենք... ճյուղավորման հանգույցներում ուշադիր խուզարկում ենք պատերն ու հատակը, մեր թողած նշանները գտնելու և վստահ շարունակելու մեր

ճանապարհը: Դիմացը նկատում ենք աղոտ լույս: Բանի առաջ ենք շարժվում, լույսը ուժեղանում է՝ նշանակում է մոտենում ենք ելքին:

Ելքի մոտակայքում՝ առաջին ճյուղավորման հանգույցում, մենք մըտնում ենք դեպի արևելք ձգվող անցքը և այդ հանելուկային ուղին մի փոքր կիսապտույտ գործելով մեզ կանգնեցնում է կախարդական մի վիհի առջև:

Մոմի տատանվող աղոտ լույսով մենք տեսանք այդ խորխորատի հատակը, որը այնքան էլ խորը չէր: Ես ցույց տվի Միքայելին վիհի պատերին աջից և ձախից փոքրիկ խոռոչներ՝ դրանք այդ դաժան ճանապարհի աստիճաններն են, որոնց օգնությամբ միայն կարելի է վայր իջնել:

Վիհը որքան էլ դաժան է ու խիստ, սակայն մագնիսի զորությամբ ձգում է մեզ դեպի իրեն: Հետաքրքրությունը կրծում է մարդու հոգին և մոռացության գիրկն ընկած ուզում է մխրճվել այս սուկում ազդող, պառլոության ու խավարի մեջ կորած, մինչև օրս անտեղծվածների մեջ թաղված այդ նեղ ուղիներում:

Այստեղ արդեն կատակի տեղ չէ, պետք է ծայր աստիճան զգուշություն: Միքայելը մոմով լուսավորեց հորը: Ես մարեցի իմ մոմը, որովհետև իջնելու համար պետք է երկու ձեռները պատին հեճելով և փոսիկ-աստիճանների օգնությամբ զգուշորեն վայր իջնել: Երկու ձեռքս ու ոտներս աշխատանքի դրի: Հորի աջ և ձախ պատերին ձեռներս հեճելով և փոսիկ աստիճանների օգնությամբ հասա վիհի հատակը: Այժմ ես վառեցի մոմը և ընկեքս սկսեց իջնել. բարեհաջող հասավ հատակին: Այդտեղ մի փոքր շունչ առնելուց հետո՝ շարունակեցինք մեր խելագար արշավը: Հորի ստորին մասից մի փոքր թեք շարունակվում է ճանապարհը, որը մի քիչ հետո կանգնեցնում է մեզ մի նոր վիհի առջև: Այստեղ արդեն օդը խոնավ է ու գարշահոտ: Այս անգամ ես լուսավորեցի հորի բերանը: Միքայելը մարեց իր մոմը և դարձյալ փոսիկ-աստիճաններով զգուշությամբ սկսեց վայր իջնել: Տակավին չէր հասել հորի հատակին, երբ ես, չգիտեմ ինչու, մտաբերեցի շարականներից մի դարձվածք ու ասացի բարձրաձայն.

— «Սանդարամետ անդևոնոց» որ ասում են, սա է եղել:

Ընկերս չկարողացավ իր ծիծաղը զսպել, թևերը թուլացան ու վայր ընկավ: Չնայած ես էլ էի ծիծաղում, բայց ընկերոջս վայր ընկնելը դանակի նման կտրեց իմ ծիծաղը:

— Հը, ի՞նչ պատահեց, — մտահոգված ձայն տվի ես:

— Կենդանի եմ, — լավեց հորի հատակից: Այստեղ արդեն անկարող էի ծիծաղս զսպել: Հիշեցի Մսրա Մելիքի հորի միջից բացականչելը. «Կենդանի եմ, մեկ էլ արի...»:

Միքայելը լուսավորեց հորը: Ես մարեցի մոմս և վայր իջա «Սանդարամետ անդնդոցով»:

Այդ «խոր վիրապի» վարի մասից դարձյալ մի փոքր թեք շարունակվում է ուղին, որն անշուշտ մի նոր վիհի առջև պիտի կանգնեցնի մեզ:

Նստած հորի հատակին նայում ենք շարունակվող անցքի ուղղությամբ: Հետաքրքրությունը ձգում է մեզ դեպի անհայտ խորքերը:

Իսկապես որ «Սանդարամետ անդնդոց»... Ասես մթության մեջ, երրորդ հորի շրթունքին, մի քարի կտորի վրա, նստած է եղջյուրավոր ու այծամորուս, փրչոտ մի սատանա: Նա, հոնքերը բարձրացրած, նենգավոր ժպիտը դեմքին, քծնող շարժումներով, ասես հրավիրում է մեզ դեպի «Սանդարամետ անդնդոցը». «եկեք, եկեք, հարգելի բարեկամներ...»

Սակայն այդ երկու վիհերը այցելելուց հետո, հոգնած հրաժարվում ենք այդ նենգավորի սիրալիր հրավերից և որոշում «Սանդարամետից» ետ վերադառնալ դեպի «Ավետյաց երկիր»:

— Հայ մարդու անհողողող կասքի ուժն է կերտել այս ստորերկրյա գաղտնի ճանապարհը, — ասաց ընկերս և մենք հրաժեշտ տալով «Սանդարամետի» խավարի մեջ թաղված «որջերին» վերադարձանք:

Դուրսը արևը ժպտում էր մեզ:

Այդ ստորերկրյա դժնդակ ուղիների մասին շրջակա գյուղերի շինականները շատ բաներ են պատմում և նկարագրում կախարդական անորջների և վառ երևակայությունների ներքո զանազան տարբերակներով: Չնայած այդ պատմիչներից ոչ մեկը հանդգնություն չի ունեցել մտնել այդ կախարդական ուղիների խորքերը կամ մինչև վերջավորությունը, բայց այնուամենայնիվ որոշ չափով ճշմարտություն կա նրանց պատմածների մեջ:

Մեկը պատմում է, որ Տիգրան Հոնենցի մոտակայքում գտնվող ստորերկրյա ուղին կամ, ինչպես իրենք են անվանում, «գեդան-գյալմազ», մըխըրճվելով երկրի խոր ընդերքը, Ախուրյան գետի տակով անցնում է գետի մյուս ափը և աստիճանաբար ձգվելով դեպի վեր, դուրս է գալիս Անիի դիմացը գտնվող փոքրիկ լեռան գագաթը, որը շրջակա բոլոր բլուրներից վեր, տիրապետող դիրք է գրավում:

Այդ սարսափելի ստորերկրյա ուղին մերթ ընդ մերթ ճյուղավորվում է: Այնտեղ, երկրի ներքին շերտերի մեջ, փորված են խորհրդավոր սրահներ տարբեր չափերի: Ախուրյան գետի հունի տակով անցնելիս գետնափոր ճանապարհի առաստաղից կաթկթում են ջրերը:

Մի ուրիշը՝ երևակայական վառ գույներով նկարագրում է ցանցապատ-

ված անցքերով այդ ստորերկրյա մթին ճանապարհը և տանում, դուրս է բերում ելքի ծայրը մինչև Կարս:

Սակայն կասկած չկա, որ այդ ստորերկրյա գաղտնի ուղիները ռազմական նշանակություն ունեցող կառույցներ են եղել Անիի համար:



Տիգրան Հոնենցի քանդակագարդ էկեղեցու արևմտյան դռնից մտնում ենք ներս: Մեր առջև բացվում է որմնանկարների մի ամբողջ պատկերասրահ: Նրանք արտացոլում են հեռավոր անցյալի գիրկն ընկած պատմության գանազան դրվագներ՝ պատկերված վառ գույներով: Նրանց վրա դարեր առաջ մեր հմուտ վարպետներն աշխատել են ներկ ու վրձինով, չխնայելով իրենց շնորհքն ու եռանդը:

Հետքերը ցույց են տալիս, որ Տիգրան Հոնենցի էկեղեցին կառուցելիս նախատեսված չի եղել պատերը (ներքուստ) ծածկել որմնանկարներով: Այդ հիշատակը վերջն է եղած, երբ էկեղեցին արդեն կառուցված էր: Պատերի թափված ծեփերից երևում է, որ էկեղեցու պատերը (ներքուստ) շարված են եղել սրբատաշ քարերով, այնպես, ինչպես մեր բոլոր հուշարձանները: Իսկ հետագայում, երբ որոշում են որմնանկարներով պատել էկեղեցու ներսը և գավիթը, սվաղը պատին պահելու համար ստիպված են եղել սրբատաշ քարերը բրիչով խորդուբորդել, որպեսզի ծեփը նստի: Այդ հետքերը պարզ երևում են պատերի թափված ծեփերից: Նույնը տեսնում ենք Անիի բոլոր այն հուշարձանների վրա, որոնք ունեն որմնանկարներ կամ միայն ծեփ:

Ասես մագնիսական մի գործություն կաշկանդեց Մազմանյանին դարավոր արվեստի այդ գողտրիկ տանարի պատերի մեջ, և նա կլանված նայում էր դարերի միջից մեզ հասած այդ մեծ արժեքներին:

Ես զգում էի ընկերոջս հուզված հոգին և աշխատում էի չխանգարել նրա փոթորկվող ներաշխարհը:

Պատերի վրա պարապ տեղ չկար: Եկեղեցու գմբեթից մինչ վար պատած են որմնանկարներով:

Տիգրան Հոնենցի էկեղեցին կրում է Գրիգոր Լուսավորչի անունը և բնականաբար որմնանկարների զգալի մասը նվիրված է նրա կյանքին ու գործունեությանը: Այնտեղ գույներով պատկերված են Լուսավորչի տասներկու չարչարանքները: Լուսավորիչը Խոր Վիրապում, մի կին հաց է նետում վիրապի մեջ: Լուսավորչին բերում են դատավորի՝ Տրդատ թագավորի առջև

և այլն: Կան նաև բազմաթիվ կրոնական բովանդակությունն ունեցող որսնակարներ:

Մոտ մի ժամ ուշադիր զննելով որսնակարները, ընկերս գամվեց եկեղեցու հյուսիսային պատին պատկերված մի որսնակարի առջև. դա Տրդատ թագավորի շքերթն էր վրաց, արխազաց և աղվանից թագավորների ու թիկնապահների հետ:

Եկեղեցու հնամաշ գրքակալը դարձնելով իրեն սեղան՝ Միքայելը սկսեց իր աշխատանքը այդ որսնակարից: Արվեստի հուրը բորբոքում էր պատանհի նկարչին և ջերմություն տալիս նրա գեղարվեստական շնչին: Իր բազկի բեղուն շարժումներից վրձինը թափ էր առնում վստահ ու համարձակ և թղթի վրա պատկերվում էր Տրդատ թագավորի շքերթը:

«Տրդատի շքերթը» նկարելիս ես դուրս էի ելել եկեղեցուց՝ թողնելով նկարչին առանձին:

Ավարտելով իր առաջին գործը Տիգրան Հոնենցի «Պատկերասրահում»՝ Միքայելը դուրս եկավ եկեղեցուց դադար առնելու: Նա ինձ պատմեց այն սարսափի բույեները, որ ինքը զգացել էր աշխատանքի միջոցին: Կլանված աշխատանքով՝ նա ինքնամոռացության մեջ ուշադրությունը կենտրոնացրել է միայն ու միայն «Տրդատի շքերթի» վրա:

Դեռ նոր ավարտելու մոտ էր աշխատանքը, երբ զգում է ծանր շնչառության հևք: Սարսուռ է անցնում մարմնի միջով: Պաղ քրտիկները պատում է ճակատը... Նա բարացած մնում է տեղում: Ասես հեքիաթների մեջ պատկերվող գերբնական գործությունները բույն են դրել այս մեկուսացված եկեղեցու մոայլ կամարների տակ: Ասես մի ինչ-որ աներևույթ, մութ արարած շնչում է ծանր շնչով և եկեղեցու դատարկ տարածությունը արձագանքում է ճնշող խուլ շնչով ու մահասարսուռ տհաճ զգացողությամբ ծանրանում վրան: Նա սարսափից չի համարձակվում ետ նայել: Արդյոք իրականությունն է, թե՞ երազ...

Ծունչը պահած, լսողությունը լարեց: Ո՛չ, ծանր շնչառության հևքը շարունակվում էր: Այժմ այն ավելի պարզ լսելի էր: Նա նույնիսկ արտաշնչման տաք, բայց անդորրեկան օդի հոսանքը զգում է ծոծրակի վրա: Այո, մոտիկ, շատ մոտիկ, ուղիղ ետևը:

Ո՛վ, ի՞նչ գերբնական գործություն է, որ այս գերեզմանային պաղ լռության մեջ թաղված տանարում, որպես անվախճան մի արարած, արթնացած խոր քնից ահաբեկում է նրա հոգին մահագույժ սարսափով...

Սուկումի վայրկյանները անցնում էին դանդաղ և տենդով բռնված նրա մարմնի բոլոր մասնիկների միջով անդորրեկան պաղ հոսանք էր անցնում...

Ծիգ գործադրելով հավաքեց իր ուժերը և համարձակվեց ետ նայել:

Ահարատե Լուստրա թէ արեւոյնդ եւ, Մարտի 20-ը
 Ահարատե Լուստրա թէ արեւոյնդ:

Երբ զիտեմք իւր պատմութեան, (Եւստի) ^{արեւոյնդ}



արեւոյնդ
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի
 Եւստի Եւստի

Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի
 Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի

Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի Եւստի

«Երգ ու ներկ» աշակերտական տարեգիրք, 1917 թ.: «Հայ
 որմնակարչությունը» հոդվածից մի էջ:

Եվ ի՞նչ... ետևը կանգնած էր արևակեզ դեմքով, լայնաթիկունք, բարձրահասակ մի քուրդ՝ բրդոտ երեսով ու հսկա կերպարանքով: Գլխին ուներ քրքրական ապիտակ քոլոզ, որի տակից խառնիճաղանջ դուրս էին ելել նրա երկար մազերը: Ընկերս ցնցվում է հանկարծակիի եկած անսպասելի այցելուի ներկայությունից և նրա կերպարանքից:

Եվ երբ իր հայացքը հանդիպում է նրա աչքերին, նա այդ սարսափելի կերպարանք ունեցող մարդու աչքերի մեջ տեսնում է ապշանք, հիացմունք ու ժպիտ: Նա հանգստանում է և մի խորը շունչ քաշում:

Ժպտում էին նրա աչքերը. նա զարմացած նայում էր, թե ինչպես պատի վրայի գունավոր մեծ նկարը, նույն գույներով տեղափոխվել է փոքրիկ թղթի վրա և այդ ամենը կատարում է մի պատանի:

Նա մի քանի բառ է արտասանում Միքայելին անձանոթ լեզվով: Սակայն ընկերս կարողանում է հասկանալ: Նրան պատասխանում է ժպիտով՝ ցույց տալով նրան խոշոր որմնանկարը և նույն նկարի փոքրադիրը:

Նա իր ժպտուն աչքերով ու զարմանք արտահայտող դեմքով մի քանի բառ ևս արտասանում ու գլուխը թափահարելով դուրս է ելնում եկեղեցուց:

Դադարից հետո Միքայելը անցնում է ուրիշ որմնանկարների, որից հետո ձեռնամուխ է լինում եկեղեցու արտաքին գեղեցիկ քանդակներին:

Միքայելը մոտ վեց օր աշխատեց Տիգրան Հոնենցի եկեղեցու «Պատկերասրահում»:

Մազմանչանի կողմից վերարտադրված «Տրդատ թագավորի շքերթը» անմիջապես հրատարակվեց Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ»-ի № 6-ում, 1917 թ., իսկ բնագիրը նա նվիրեց Գարեգին վարդապետին (հետագայում կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), նրա խնդրանքով, ինչպես և Տիգրան Հոնենցի դամբարանի կորագիծ առաստաղի վրա նկարված երկու դեհիստուներ: Երանի թե կորած չլինեն այս ունիկալ նկարները գիտնականի արխիվում:



Պարապորդիս օրերը մեկը մյուսի ետևից գլորվում էին աննկատելի: Ես շրջագայում էի անհանգիստ ընկերոջս հետ արվեստի այդ մեծ կանառում, որտեղ ամեն մի կոթող, ամեն մի բեկոր, որոնց ես ստիթ էի ունեցել բազմիցս տեսնելու, յուրաքանչյուր այցիս նրանք կանգնում էին իմ առջև իրենց հմայիչ տեսքով և ներկայանում էին գեղեցկության ու վարպետության նոր խոսքով, նոր ձևով:

Այդ կախարդական քաղաքը իր հմայիչ շնչով խտացնում էր ընկերոջս

հոգու մեջ գեղեցիկ, աննախընթաց վեստ արվեստի հասկացողությունն ու մեծ հաշակը:

Ես նկատում էի, որ Միքայելը տարված իր շրջապատով, ասես կաշկանդված աներևույթ կապանքներով, մոռացության էր մատնել ամեն ինչ: Նա չէր զգում ժամանակի արագ ընթացքը, անոթություն ու հոգնածություն այդ ծանրանիստ, զստանյալ կոթողների, գեղակերտ քանդակների ու բնության ձեռքով կերտված բազմազան գեղեցիկ տեսարանների շրջապատում, որոնք միաձուլվում էին մարդկային հանճարի կերտվածքների հետ ու ստեղծում գեղեցիկ մի ամբողջություն, ահա այդ բոլորը պատանի Միքայելի համար թե սնունդ էր և թե ներքին լիցքի հզոր մի շունչ, որը մղում էր նրան հախտուն կերպով ջանալ ընկալել այդ բարձր արվեստն ու տոգորվել նրա գեղեցիկ շնչով:

Քայլում ենք...

Անցնում ենք Ապոլոամբենց եկեղեցու մոտով: Նրա թմբուկի նեղ ու երկար լուսամուտները նմանում են անթարթ աչքերի, որոնց շուրջը երիզվում են զույգ որմնակամարներ, նման վեր բարձրացած ապշահար հոնքերի, և ասես իրենց զարմանք արտահայտող աչքերով նայում թափուր մայրաքաղաքի ամայացած տարածության մեջ:

Ահա և Գագիկ Ա. թագավորի հոյակերտ, բոլորակ տաճարի փլատակները: Այն 10-րդ դարում վեր է խոյացել իր վիթխարի հասակով, որի սիգապանձ գլուխը հանդուգն կերպով նստած էր իր կառուցվածքի ծայրին և իր տիրոջ նման հպարտ նայում ու տիրապետող հայացք էր նետում մայրաքաղաքի տարածության վրա, որպես կուռ կամքի ու կորովության մի սիմվոլ:

Տաճարի կառուցվածքի այդ ուրույն ձևը, որը դեռ 7-րդ դարում ծնունդ էր ստել մեր մայր հողում, նրա կործանվելուց հետո, նույնանման ձևն ու ծավալը խոչանում էր շնչող մայրաքաղաքի սրտում: Սակայն անցնում է ժամանակ և այդ սիգապանձ հսկան նույնպես կործանվում է՝ թաղելով իր փլատակների մեջ իր հպարտ գլուխը:

Պատմագիր Ասողիկը Գագիկի կառուցած տաճարի մասին համառոտակի հիշատակում է իր ժամանակագրության մեջ, թե Անի քաղաքի որ մասում կառուցվեց Գագկաշենը:

«Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութստնք ամն Ռ. (1000)... Գագիկ արքայ հայոց խորհուրդ բարի ի յանձին կալիս զմեծաշէն եկեղեցին, որ ի քաղաքուդաշտի, անասնք սրբոյն Գրիգորի շինեալ, որ էր փլեալ և կործանեալ, կամեցաւ նոյն-

աձև չափով և հորինվածքով ի քաղաքին Անույ հիմնարկեալ ի կուսէ Ծաղկոցաձոր ձորոյն, ի բարձրավանդակ տեղոջն...»:

Արամ Վրույրը Էջմիածնի մոտ պեղումներից ի հայտ եկած գեղասքանչ Զվարթնոցի ավերակները տեսնելուց հետո՝ 1904 թվականին կարողացավ գտնել այդ տեղը: Նա իր գտած վայրի մասին, որը մի խոշոր բլուր էր, Աստղիկի նկարագրած տեղում (Անիում) իր կարծիքը հայտնեց ճարտարապետ Թորամանյանին, որը քաջ ծանոթ լինելով Զվարթնոցի կառուցվածքի և մանրամասնի հետ, հաստատեց Վրույրի ենթադրությունը և ապա Վրույրը այդ մասին հայտնեց պրոֆ. Մատին, որը և ձեռնամուխ եղավ 1905—1906 թթ. և պեղեց այդ աչքի զարնող բլուրը, որի վրա որպէս համոզեցուցիչ ապացույց ընկած էին Զվարթնոցի խոյակներին նմանող երկու խոյակ:

«...Раскопки архимандрита Хачика близ Вагаршапата дали материал для более верного определения места развалин Гагикова храма. Воспользовавшись им, Вруйр, посвятивший свои досуги снимкам анийских древностей, первым указал на тот холм над Цветниковым ущельем, где должны были находиться остатки Храма, копии Нерсесовой постройки¹».

Գագկաշենի փլատակների միջից պրոֆ. Մառը գտավ Գագիկ Ա. Բագրատունի թագավորի արձանը: Նա կանգնած էր տաճարի ներսը, հյուսիսային մասում: Ծեփի փլուզման ժամանակ արձանը փշուր-փշուր էր եղել՝ վերածվելով քառասունութ կտորի: Բարեբախտաբար արքայի գլուխը մնացել էր անվնաս:

Անիի գիտարշավի անդամ նկարիչ Պոլտարացկու հմուտ ձեռքերը արձանի կտորները ի մի հավաքելով ամբողջացրին նրան, որը իր պատվավոր տեղն էր գրավել Անիի Հնադարանում:

Գագկաշենն ս. Գրիգոր բոլորակ տաճարի ամբողջական տեսքի և մանրամասնի մասին մենք վառ պատկերացում ունենք Թ. Թորամանյանի վերակազմած նախագծից, որը լույս էր տեսել «Հուշարար» թատերական-գրական-գեղարվեստական երկշաբաթաթերթի 1908 թվականի համարներից մեկում:

Հրածեշտ տալով Գագկաշենի ավերակներին, քայլում ենք դեպի Հովվի եկեղեցին: Նա գտնվում է Անի քաղաքի հյուսիսային պարիսպներից դուրս մոտ մեկ կիլոմետր հեռավորության վրա:

Ահա կանգնած ենք այդ գողտրիկ կառուցվածքի առջև: Այդ եռահարկ, փոքրիկ հուշարձանը ոչ մի քանդակ չունի: Նա իր ծավալներով ու ձևերով

¹ Н. Я. Марр—«Ани», стр. 55, Огиз Ленинград—Москва, 1934 г.

բարդվելով մեկը մյուսի վրա, կազմել է գեղակերտ, փոքրիկ մի մարմին պարզության մեջ պարուրված:

Յուրաքանչյուր այցելուին զարմանք է պատճառում հուշարձանի ներքին կառուցվածքը: Վեց որմնասյուներ բարձրանալով աղեղվում են և կենտրոնում միանալով իրար, կազմում են մի խորձ և կանթեղի ձևով կախվում փոքրիկ մատուռի կենտրոնում:

Մեզ ծանոթ լինելով Թորամանյանի հողվածը Հովվի եկեղեցու մասին, տպված «Գեղունի»-ում—«Կարիլ մը հայ գեղարվեստի ծովեն» խորագրով, որտեղ գիտնական ճարտարապետը հանգամանորեն նկարագրում ու բարձր գնահատական է տալիս այդ փոքրիկ եկեղեցուն (կարելի է ասել մատուռ), որպես բացառիկ մի գոհար պատմական հայ ճարտարապետության: Եվ ահա այդ գողտրիկ կոթողը, որպես մի հսկա, իր ամբողջ մեծությանը կանգնում է մեր առջև և համակում մեզ դեպ իրեն երկյուղածություն ու հարգանք:

Ժողովրդական ավանդություն է հյուսվել այս գեղակերտի շուրջը և անվանել նրան Հովվի եկեղեցի, որը սերնդե-սերունդ հասել է մեզ:

Զնայած ժամանակը սուղ էր, բայց մի՞թե Միքայելը կարող էր անտարբեր անցնել մարդու զարմանք ու հիացմունք պատճառող այդ դյուրթիչ կերտվածքի մոտից, որն իր աստղաձև հատակագծով ու նազելի մարմնով, որպես խոշտանգված, թախծոտ մի կույս, կանգնած է բաց դաշտի ամառայության մեջ և կաշկանդում է մեզ իր մասերի հմայիչ ներդաշնակությամբ:

Միքայելը ձեռքն առավ թողթն ու մատիտը և ավարտելով իր գործը, շարունակեցինք մեր ճանապարհը:

Քայլում էինք ոգևորված դեպ Հոռոմոս (Խոշավանք):

Անցնում ենք «Աղվեսի» ձորակը, որը դեպ Հոռոմոս ձգվող ճանապարհի կեսն է: (Անիից Հոռոմոս մոտ 7—8 կիլոմետր է): Մի փոքր էլ քայլելուց հետո հեռվում երևում են Խոշերը: Դա ենթադրյալ հաղթական մի կամար է՝ կառուցված Անի—Հոռոմոս ճանապարհին: Այստեղ էս բարի երթ մաղթելով ընկերոջս՝ վերադառնում են Անի:

Միքայելը Խոշավանքում մնաց երկու-երեք օր, վերադարձավ Անի, բերելով իր հետ անջնջելի մի դրոշմ զարմանքի ու հիացմունքի:

Եվ մեր հանճարեղ նախնիների ստեղծագործ մտքի հրաշք գործերը, որպես աննախընթաց արվեստի ինքնուրույն արտահայտություններ, իրենց ազդու և հմայիչ տաք շնչով դյուրում, կրում էին ապագա Միքայել ճարտարապետի հոգին բարձր ճաշակի ու ազնիվ արվեստի մեծ գաղափարներով:

Եկավ հրաժեշտի ժամը:

Նվիրական քաղաքի յուրաքանչյուր թիզն անգամ սրբագործված է...
Դժվար է, շատ դժվար դուրս գալ այդ կախարդական օղակից... Ոտների
չեն ենթարկվում քեզ, հագիլ են շարժում տեղից: Ասես մի աներևույթ ուժ
կաշկանդում է քեզ. ասես քաղաքի «Չառանյալ ծերունիները» իրենց պատ-
կանելի հասակներով ու ծանրանիստ կեցվածքներով, որոնց մարմինները
ակոսված են խոր կնճիռներով, թաղված մեծ խորհուրդների մեջ, իրենց խո-
րահայաց կերպարանքներով, ուր ամեն ինչ միշտ նոր է ու թարմ, գամում են
քեզ դյուրական հմայքով ու անբացատրելի, աներևույթ կապակներով կաշ-
կանդում հոգիդ:

Տխուր է ընկերս ու թախժոտ:

Ահա վշտակիր հայացքով մեկիկ-մեկիկ հրաժեշտ է տալիս սգավոր
քաղաքի խորհուրդների մեջ ընկղմած պատկանելի «ծերունիներին»:

Մենք անցանք Անիի Անայի¹ սոտով, ապա մեր ետևը թողինք Փրկիչն
ու ավերակները և փոքրիկ գառիվայրը իջնելով, մեր առջև կանգնեց Տիգ-
րան Հոնենցի գեղակերտ եկեղեցին: Անցանք «Տիգրանի» դռնով, կտրեցինք
Գլիճորն ու դուրս եկանք Ախուրյանի ձորի աջ փեշի շտապիղը: Այստեղ ըն-
կերս վերջին մի թախժոտ հայացքով հրաժեշտ տվեց Ավերակների քաղաքին:

Ծարունակում ենք մեր ընթացքը նեղ շտապիղով: Ընկերս լուռ է...
Խոսակցությամբ աշխատում են փարատել նրա տրտմությունը:

Խարկով գյուղի տակ, Ախուրյան գետի ափին, հրաժեշտ ենք տալիս
միմյանց:

Նավավար Տիգրանը անցկացրեց Միքայելին գետի մյուս ափը:

Փոքրիկ ճամպրուկը ձեռին, ուր գետեղված էր Միքայելի եռամսյա վաս-
տակը, ապառաժների միջով ձգվող ճանապարհով նա բարձրանում է դեպի
Խարկով գյուղը: Ես կանգնած գետի աջ ափին, հայացքով ուղեկցում եմ
նրան:

Միքայելը անհետացավ իմ տեսադաշտից:

Ես վերադարձա Անի:



Պետերբուրգի Քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտի 5-րդ
կուրսի ուսանող Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին աշխատեց Անիի 15-րդ
գիտարշավում ճարտարապետի պարտականությամբ (1916 թ.):

¹ Անա — Մայր, խոսքը Մայր տաճարի մասին է:

Նա 1915 թ. ամառը աշխատում էր Անդրկովկասի ռազմաճակատի կարմիր խաչի ստաջապահ ջոկատում: Չոկատը կանգնած էր Ծորոխի ավազանում, Իշխան գյուղի մոտ: Այդ գյուղը ծննդավայրն է հոչակավոր կաթողիկոս Ներսես Ծիկնողի, որը Վաղարշապատի մոտ վեր խոյացրեց հայ պատմական արվեստի խոշորագույն կոթողներից մեկը՝ Չվարթնոցը:

Եվ ահա երիտասարդ ուսանողը, Ծորոխի ավազանում, ստաջին անգամ լինելով, տեսավ հայ ճարտարապետական արվեստի գեղեցիկ գործերից մեկը՝ Իշխանի տաճարը՝ կառուցված Ներսես Ծիկնողի կողմից 7-րդ դարում (հիմնովին վերանորոգված է 10-րդ դարում):

Տոկարսկին կանգնած էր ծանրանիստ կոթողի հաղթ կամարների տակ, որոնք իրենց կառուցվածքների մեջ կրում էին տաղանդավոր հայ ճարտարապետի /ստեղծագործ կնիքը:

Տոկարսկին, օգտվելով ռազմաճակատի ժամանակավոր դադարից, առանց ժամանակ կորցնելու, սկսում է ուսումնասիրել, գծագրել ու չափագրել այն:

Իշխանի տաճարը եղավ այն կոռ շաղկապը, որը անխախտելի կերպով պրկեց երիտասարդ ճարտարապետացուին պատմական հայ ճարտարապետության հետ:

1915 թ. վերջերին Տոկարսկին վերադառնալով Ս. Պետերբուրգ, ծանոթների խորհուրդներով ներկայացավ պրոֆ. Ն. Յա. Մառին և նրա սեղանին դրեց Իշխանի չափագրությունները:

Պրոֆեսորը մեծ գոհունակությամբ ծանոթացավ խանդավառ ուսանողի խնամքով կատարած չափագրություններին: Նա անդրանիկ դուռը բացեց Տոկարսկու առջև, հրավիրելով նրան Անիի 15-րդ գիտարշավին աշխատելու որպես ճարտարապետ: Եվ ահա 1916 թվականին տեսնում ենք նրան Ավերակների քաղաքում, արվեստագետին վայել անկեղծ ու շիտակ բնավորությամբ և ջերմ ավյունով:

Որոշվեց հեռավոր շրջագայություն կատարել դեպի Երեբուք, Մրեն, Բագարան: Երթուղին բավական երկար էր:

— Պետք է ձիեր վարձել, — ասաց Տոկարսկին:

Չուքինովը մերժեց՝ առարկելով, որ ինքը ձի նստել չի կարող:

— Այդ դեպքում սալ վարձենք:

— Ես սալ նստել էլ անկարող եմ, — դարձյալ առարկեց մեր տարօրինակ դեկավարը: Նրա առարկությունները կարծում եմ ժլատ բնավորության հետևանք էին:

Չնայած փոխադրական միջոցների վրա ծախսվելիք գումարը արշավախմբի հաշվին էր լինելու, բայց Չուքինովի տարօրինակ բնավորությունը

այդպէս էր թելադրում, որի մասին հետագայում էլ առիթ պիտի ունենանք խոսելու:

Եվ մենք Անիի սուրհանդակի ուղեկցությամբ ճամփա ելանք Անի կայարանի վրայով Երեբոնք, ուր մնացինք մոտ մի ժամ և այնտեղից վերադառնալով կայարան՝ գնացքով մեկնեցինք Ալագյազ:

Արդեն երեկոյի մոտ էր:

Ստիպված էինք գիշերել կայարանի սենյակներից մեկում, որը մեզ տրամադրեց Ալագյազի կայարանապետը:

— Արտաշես, ասացեք Եսաիյին, որ իրեն համար գիշերելու տեղ գտնի:

Գ. Չուքիևոյլը չէր ցանկանում միևնույն սենյակում գիշերել մի ինչ-որ սուրհանդակի հետ՝ պատճառաբանելով նրա քրտնած ոտքերի «բուրմունքը», առանց նկատի ունենալու, որ մենք բոլորս էլ նույն դրության մեջ էինք:

Ալագյազ կայարանում գիշերել՝ նշանակում է աթոռների վրա նստած լուսացնել:

Գ. Չուքիևոյի կարգադրությունը տգեղ էր, ես անհարմար էի զգում ասել այդ սուրհանդակին: Մի կերպ հայտնեցի: Եսային մնաց անելանելի դրության մեջ. կայարանում մնալու ուրիշ ոչ մի տեղ չկար: Սուրհանդակը մի փոքր մտածելուց հետո, ելքը գտավ:

— Այստեղից մոտ երեք կիլոմետրի վրա, Ախուրյան գետի ափին, գըտնըվում է Բոշի գյուղը: Մեր գնալիք ճանապարհը դեպի Մրեն այդ գյուղի վրայով է: Ես կերթամ Բոշի գյուղ և այնտեղ կգիշերեմ: Առավոտյան կանուխ դուք կգաք և կշարունակեմք մեր ճամփան,— ասաց սուրհանդակը, վերցրեց իր հրացանը և անհետացավ կիսախավարի մեջ:

Արեգակն արդեն մայր էր մտել: Ես ուրախությամբ կնիանայի սուրհանդակին և կերթայի Բոշի գյուղ գիշերելու, եթե հետևյալ առավոտ Չուքիևոյին և Տոկարսկուն ուղեկցելու հոգսը ինձ վրա չլիներ:

Չարչարանքի գիշեր...

Կայարանի աթոռների փայտոջիլները հանգիստ չէին տալիս մեզ... Սակայն հավատացած եմ, որ Անիի սուրհանդակը հայ բոշաների գյուղում փափուկ անկողնում հանգիստ բուն էր վայելում:

Լուսադեմին հոգնած ու ջարդված հրաժեշտ տվինք կայարանի անհրապույր սենյակին և բռնելով սուրհանդակի ցուց տված ուղին՝ ճամփա ընկանք:

Մեր եղյակը շուտով հասավ Բոշի գյուղ, որ գտանք Անիի սուրհանդակին կազմ ու պատրաստ մեզ առաջնորդելու դեպի Մրեն ու Բազարան:

Ժամանակը սուղ էր. քայլել մինչև Մրեն ու Բազարան և ապա վերադառնալ նույն օրը Անի, այդ նշանակում է պետք է ևս քայլել 30—35 կիլոմետր:

Մի կողմ թողնելով սննդի հոգսը, շարունակեցինք մեր ճանապարհը: Բոշի գյուղի մոտ անցանք Ախուրյան գետի աջ ափը և տաղտկալի ու խոպան դաշտերի միջով շարժվեցինք սուաջ: Դաշտերը պատած էին գույնզգույն անթանամ ծաղիկներով:

Վերջապես հասանք Մրեն և մեր սուաջ կանգնեց Մրենի 7-րդ դարի հսկա գմբեթակիր, երեք նավանի բազիլիկ եկեղեցին: Այնտեղ կային նաև ուրիշ հուշարձանների մնացորդներ, որոնց մեջ այցելուից իր ուշադրությունն էր խլում Սահմադիևի ապարանքի գեղեցիկ մուտքը, որի ճակատին դրոշմված է կառուցման արձանագրությունը (հայատառ):

Մեր այս շրջագայությունը անփույթ ու անկազմակերպ էր:

Մրենի բոլոր հուշարձանները մեկ ժամ դիտելուց հետո, մենք դարձյալ անոթի, սուանց հանդիպելու Բագարան, շտապեցինք վերադառնալ և շուտով հասնել գնացքին: Այդպես էլ արինք: Ժամանակին հասանք Ալագյազ կայարան և գնացքով մեկնեցինք մինչև Անի կայարան, ուր մեզ վիճակվեց չորս հոգով մի մեծ ձմերուկ ուտել միայն, և այնտեղից դարձյալ գնացինք Կարսի վանք՝ Սմբատի կառուցած եկեղեցին տեսնելու: Այստեղ էլ գիշերեցինք և հետևյալ սուավոտ ճամփա ընկանք դեպի Անի: Սրանով ավարտվեց մեր շրջագայությունը:

Ամեն տարի, երբ պրոֆ. Մառը իր աշխատանքները ավարտելով մեկնում էր Անիից, հնադարանի և քարեդարանի բանալիները հանձնում էր հայր Միքայելին, իսկ երբ հայր Միքայելն էլ որևէ գործով ստիպված էր լինում բացակայելու, բանալիները թողնում էր Անիի սուրհանդակի մոտ: Մի խոսքով թանգարանների բանալիները միշտ գտնվում էին Անիում, որպեսզի Անի այցելողները հնարավորություն ունենան թանգարանները տեսնելու: Սակայն այս մեր շրջագայության ժամանակ, որ տևեց երեք օր, Գ. Չուբինովը թանգարանի բանալիները վերցրել էր իր հետ, որով տեղի տվեց դժգոհությունների:

Մեր բացակայության ժամանակ Թիֆլիսից Անի էին եկել մի խումբ մարդիկ: Նրանք գտան թանգարանների դռները փակ և վրդովված ու դժգոհ վերադառնալով, պարբերական մամուլի միջոցով աղմկեցին այդ առթիվ:

Մրենից վերադառնալիս Անիի կայարանապետը հանձնեց ինձ մի երկտող. գրում է հայրս.

«Արտաշես, ես շունչս առա Թիֆլիս — հասիր: Հայրդ»:

Ինձ համար անակնկալ էր այդ երկտողը ու մասամբ անհասկանալի: Նշանակում է հայրս Վանից վերադարձել է և սուանց Անի մտնելու, անցել, գնացել է Թիֆլիս: Իսկ ինչո՞ւ... Ի՞նչն էր պատճառը այդպես հապճեպ մեկնելուն: Ահա հարցեր, որոնք շարվեցին իմ առջև...

Հետագայում ամեն ինչ պարզվեց:

Դեռ 1915 թվականին Վանի, Շատախի ու մի շարք շրջակա գյուղերի հայ ազգաբնակչությունը ռուսական բանակի և հայ կամավորական զորքերի կողմից վերը հիշած վայրերի շուտափույթ գրավման հետևանքով ազատվել էր թուրքական վայրագ կառավարության կողմից անխուսափելի բնաջնջումից: Սակայն երկու ամիս չանցած սկսվել էր նահանջը:

Ռուսական զորքերի այդ հապճեպ նահանջը տևեց շատ կարճ: Շուտով նրանք վերագրավեցին իրենց թողած տերիտորիան:

Եվ ահա Հայկական լեռնաշխարհը, որն ամբողջապես բռնկված էր զարհուրելի հրդեհով, ուր խոշտանգվում, տաքազրվում ու հոշոտվում էր տարաբախտ հայը թուրքական յաթաղանի անողորմ հարվածների տակ, և ահա այդ մղձավանջային անպատում **Մեծ եղեռնի** ժամանակ — մի ափ հող՝ Վան, Ալաշկերտ, Շատախ և այլ վայրեր, որոնք ազատագրված էին անագորույն թշնամու արյունոտ ձեռքերից, և հանկարծ 1916 թվականի օգոստոս ամսին արևմտյան Հայաստանի ազատագրված այդ վայրերի գլխին, սկսած սեզ Սիփանա գագաթից, Շատախի լեռներից և մթին անտառներից, Վանից մինչև Ալաշկերտի արգավանդ հովիտները, ահեղադորդ բամբյուններով պայթեց մի նոր աղետ դեռ նոր ազատագրված հայ ժողովրդի գլխին, այս անգամ ավելի սուկայի, ավելի աղետաբեր: Դարձյալ անակնկալ նահանջ ցարական բանակի կողմից:

Ահա, 1916 թվականի այս անպատմելի խուճապային հոսանքն իր մեջ առավ նմանապես Արամ Վրույրին և Հ. Օրբելուն, որոնք մազապործ փախուստով կառքով սլացան դեպի Ռուսաստանի սահմանները:

Այդ հապճեպ գնացքի ժամանակ ճանապարհին մի տեղ կառքը շուռ եկավ և քաղաքացիական փոխ-զնդապետը իր ամբողջ մարմնով ընկավ հեզ «սպասյակի» — (դեկշիկ) վրա: Օրբելու դրությունը ավելի մխիթարական էր. նա ընկած էր իր տակն առնելով Արամ Վրույրին, որը կիսատուշաթափ վայր էր ընկած ճանապարհի եզրին:

Փոխ-զնդապետը առանց վարանելու սկսեց կոնյակ լցնել հեզ «սպասյակի» կոկորդն ի վար: Չնայած այդ անմահական հեղուկը դուրեկան ու կազդուրիչ էր, բայց Վրույրի կողերի ցավերը չէր մեղմացնում:

Մի փոքր սթափվելուց ու կառքը կարգի բերելուց հետո շարունակում են իրենց արագ փախուստը: Բայց նախապաշարմունքը թելադրում է, որ դեռ երկրորդ ու երրորդ փորձանքներն էլ անխուսափելի են: Եվ, իսկապես, հանդիպում են երկրորդ փորձանքին: Ճանապարհին ռուս պահակազորը կասկածում է, որ Վրույրը գերմանացի լրտես է: Օրբելին կարողանում է կանխել և փարատել պահակազորի կասկածները:

Այդ անպատմելի խուճապը, թշվառությունն ու ոչնչացումը տարագիր հայ ժողովրդի, ուժեղ ցնցել էր Արամ Վրույրի զգայուն սիրտը:

Խեղճ հայ ժողովուրդ, տնավեր ու բնավեր, քայլիր, քանի ոտներիդ մեջ ուժ կա դեպի օտար ու անհայտ հորիզոններ: Ահա այս էր հորիցս ստացած այդ հակիրճ երկտողի ամբողջ բովանդակությունը:

Մի քանի օր անց պրոֆ. Մառը Վանից մենակ վերադարձավ Անի: Ստուգելով այդ տարի Անիում կատարված աշխատանքները՝ եկավ իմ արվեստանոցը:

— Արտաշես, ի՞նչ աշխատանք եք կատարել մինչև այժմ:

Ես սեղանի վրա դրի 27 հատ 13×18 չափի նեգատիվ, որոնց բովանդակությունը զանազան կարասների բեկորների վրա եզերված այժանկարներ և այլ զարդանկարներ էին և 7—8 նեգատիվ էլ 1911 թվականին պեղված 8-րդ դարի եկեղեցուց նկարահանումներ:

Պրոֆեսորը լուսապակիները աչքի անցկացնելուց հետո վրդովված ասաց.

— Ա՛յս է ամբողջ լուսանկարչական աշխատանքը:

— Պարոն պրոֆեսոր, պր. Չուրիևովի առաջադրանքը սահմանափակվել է այս կարասի բեկորներով և փլված միևարեի մոտ գտնվող եկեղեցիով:

— Չեմ հասկանում, ինչ տեսակ մարդ է դա: Մի՞թե դուք չէիք կարող ինքնուրույն որևէ բան ձեռնարկել: Մի՞թե լուսանկարելու բան չկար: Կարող էիք այրերը լուսանկարել:

Ես լռեցի, անհարմար դրության մեջ էի:

Պրոֆեսորը ցուցումներ տվեց իմ հետագա աշխատանքների մասին: Հետո գրուցելով միասին մտանք ճաշատեղյակ: Նա բաց արավ պահարանը և այնտեղ տեսավ մի շիշ կոնյակ, որը Վան մեկնելուց առաջ թողել էր պահարանում:

— Մինչև անգամ մի շիշ կոնյակ խմելու շնորհք չեք ունեցել: Նա արտահայտում էր զարմանք ու վրդովմունք:

Այդտեղ ես հագիվ կարողացա ծիծաղս զսպել:

— Ինչ արած, պր. պրոֆեսոր, պր. Չուրիևովը կոնյակի շիշ բերանը չբացեց:— Քաշվելով ասացի ես:

— Տարօրինակ մարդ է պր. Չուրիևովը, ես ողղակի զարմանում եմ:

Հետևյալ օրը լծվեցի աշխատանքի: Ծաղկոցաձորի փեշերը քերելով, ընտրում էի կետեր ու լուսավորություններ և լուսանկարում ժայռափորեր: Ինձ ուրախություն էր պատճառում, որ նախ՝ աշխատում էի, իսկ երկրորդ, որ ես աշխատում էի Անիի կատարելագործված գործիքով, որը Վանից ետ էր բերվել Անի:

Այդ տարի Միջնաբերդի մոտակայքում պեղվեց Շուշան Պահլավունու եկեղեցին:

Պեղումների աշխատանքներն արդեն ավարտվել էին: Մի օր, առավոտյան, նախաճաշից հետո, Ն. Մ. Տոկարսկին, վերցնելով իր սևագիր գծվածքները՝ պատրաստվում էր ճաշատենչակից դուրս գալու, պրոֆեսորը հարցրեց.

— Այդ ո՞ր:

— Դեպի Ծաղկոցաձոր. հարկավոր է շարունակել չափագրումները: Բացի այդ, փլված միևարեի մոտ 8-րդ դարի եկեղեցու սևագրություններն են միայն արված:

Վան մեկնելուց առաջ պրոֆեսորը հանձնարարել էր Տոկարսկուն չափագրել և չափագրությունները մաքրագրել որոշ այրերի և նմանապես 1911 թվականի պեղված եկեղեցու գծագիրները: Սակայն պրոֆ. Մառի մեկնելուց հետո, նրա տեղակալը սրբագրում է գիտնականի հանձնարարությունները և կարգադրում Տոկարսկուն միայն չափագրել (սևագիր), իսկ մաքրագրել Պետերբուրգում. երևի ժամանակ շահելու համար:

Սակայն պրոֆ. Մառի հանձնարարությունը Տոկարսկուն այնքան փոքր էր, որ նա առանց նեղության կարող էր այդ բոլորը դյուրությամբ ավարտել Անիում:

— Գիտարշավի աշխատանքներն ավարտված են: Այժմ անհրաժեշտ է մեկնել տուն և հանգստանալ, իսկ թերի մնացած գործերը — հաշորդ տարի... Այս խոսքերը ասաց պրոֆեսորը զսպված զայրույթը խեղդելով իր մեջ:

Արդյոք Գ. Չուբինովը զգա՞ց այդ նուրբ կշտամբանքը իր հասցեին— չգիտեմ:

Ես նմանապես մանրամասնորեն լուսանկարեցի Միջնաբերդի ութանկյունանի եկեղեցին կիսականգուն գմբեթով:

Այսպիսով ավարտվեց 1916 թվականի Անիի 15-րդ գիտարշավի աշխատանքները:

Պրոֆեսորը առաջարկեց ինձ հետևյալ տարի ևս (1917 թ.) աշխատել Անիում: Ես տվի իմ համաձայնությունը և, հրաժեշտ տալով գիտարշավի աշխատակիցներին՝ մեկնեցի Թիֆլիս:

1917

ԹՎԱԿԱՆ

Փետրվարյան հեղափոխության պիքները 16 օր հետո միայն հասան Կարս, որտեղ այդ ժամանակ գործում էր «Գուրգեն» ընկերակցությունը. հայրս և ես աշխատում էինք այդ թատերախմբում:

Փետրվարյան հեղափոխությունից հետո «Գուրգեն» ընկերակցությունը ավարտեց իր գործունեությունը: Հովհ. Արեւլյան, Իսահակ Ալիխանյան, Արշակ Հարությունյան, Ժասմեն, Օլգա Գուլազյան, Լիզիկ Հարությունյան և ուրիշներ հեռացան Կարսից դեպի իրենց տները:

Մի քանի սկսնակ դերասաններ մնացին Կարսում և Արամ Վրուչիի դեկավարությամբ ու ռեժիսորությամբ սկսեցինք ներկայացումներ տալ, խմբի պակասը լրացնելով Թիֆլիսից հրավիրված դերասան դերասանուհիներով:

Մայիս ամսին մեր փոքրիկ թատերախումբը մեկնեց Կաղզվան: Այնտեղ հունիսի 10-ին ես հրաժեշտ տվի մեր թատերախմբին և շտապեցի ժամ առաջ հասնել Թիֆլիս ու այնտեղից մեկնել Անի:

Հունիսի 12-ին հասա Թիֆլիս: Այնպես գուգադիպեց, որ թե պրոֆ. Մառք և թե ես, երկուսս էլ ուշացումով նույն օրը հասանք Թիֆլիս. Անիի գիտարշավի աշխատակիցները հունիսի 1-ից պետք է սկսված լինեին: Մենք ուշացել էինք արդեն ամբողջ 12 օր և դեռ գտնվում էինք Թիֆլիսում:

Ես տեսա պրոֆեսորին «Սևերնայա» հյուրանոցում, ուր նա սովորաբար իջևանում էր: Պրոֆեսորը զարմացավ հանդիպելով ինձ այդ պահին Թիֆլիսում և կարգադրեց անմիջապես մեկնել Անի:

— Արտաշես, բոլոր աշխատակիցները արդեն Անիում են: Անհապաղ մեկնեցեք Անի, իսկ ես 15 օրով պետք է գնամ Սվանեթ և ապա այնտեղից Անի, — ու ավելացրեց. — Ձեր աշխատավարձը ցածր է, պետք է ավելացնել: Ի՞նչ եք կարծում, որքան նշանակել:

— Դուք գիտեք, պրոֆեսոր, — քաշվելով ասացի ես:

— Եթե 25 ռուբլիով ավելացնենք, ի՞նչ կասեք:

— Շնորհակալ եմ, պրոֆեսոր:

1916 թվականին ես ստանում էի ամսական 50 ռուբլի: Նշանակում է իմ աշխատավարձը 1917 թվականին դառնալու էր 75 ռուբլի: Նմանապես Թիֆլիս—Անի ճանապարհաճախի համար ստանում էի 25 ռուբլի և նույնքան էլ Անիից Թիֆլիս վերադարձին:

Պրոֆեսորը մոռացել էր այդ տարի ինձ համար համապատասխան վկա-

յական բերելու, որը տրվում էր կաշտերական ակադեմիայի կողմից գիտար-
շավի յուրաքանչյուր աշխատակցին: Պրոֆեսորը վերցրեց իմ 1916 թվակա-
նի վկայականը և որոշ ուղղում մտցրեց շտամպում՝ «Պետերբուրգական Ին-
ստիտուտական» բառերը ջնջեց ու գրեց՝ «Ռուսսեյական»։ փետրվարյան հե-
ղաշրջումից հետո ակադեմիան կոչվում էր «Ռուսսեյական ակադեմիա
նամկ»:

Նույն գիշեր ուղևորվեցի և հետևյալ օրը հասա Անի կաշարան ու այն-
տեղից էլ քաջելով՝ Անի:

Գիտարշավի աշխատակիցներից դեռ ոչ ոք չէր եկել:

Անին ամայանում էր:

1917 թվականին նոր անեցիներից արդեն բացակայում էին բավական
մարդիկ:

Իգաձորը զգալիորեն կորցրել էր իր եռուզեռը, մոտ 10 շունչ տեղա-
փոխվել էին Կարս. Օհանը իր ընտանիքով—6 և Կարապետը իր ընտանի-
քով—4 հոգի: Անիում ես այլևս չտեսա ջրկիր Կյասսոյին: Նա 1916 թվականի
ձմռանը ողբերգական մահով վերջ էր տվել իր կյանքին: Չկար և խոհարար
Օհանեսը: Օհանին և Կարապետին ես տեսել էի Կարսում: Օհանի տղան՝
Վահրիճը, փետրվարյան հեղաշրջումից հետո աշխատում էր Կարսի միլի-
ցիայի կազմի մեջ, իսկ Կարապետը աշխատում էր երշիկի մի փոքրիկ գոր-
ծարանում.— նա արդեն մասնագետ երշիկագործ էր:

Չկային Ֆինդոն ու Վելոքսը: Այդ գայլխեղդ գամփոների բացակայու-
թյունը ուրախություն էր պատճառել գայլերին, որոնց հաջողվել էր հոշոտել
և վայելել վանահոր ավանակներից երկուսին: Մնացել էր միայն փոքրիկ
հոջկան իր թավ պոչով:

Այդ բոլորի բացակայությունը զգալի էր, որոնց հետ տարիներ շարու-
նակ, սկսած մանկական օրերից, սերտ կապված էի որպես հարազատներ:

Չէր լսվում այլևս Անիի Աստվածամոր տաճարի խոշոր զանգի ամենօր-
յա դողանջը: Նա տոնական օրերին էր միայն հնչում և իր դողանջներով
աղոթքի հրավիրում արդեն կիսով չափ ամայացած մայրաքաղաքի նոր բնա-
կիչներին և ուխտավորներին:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ

ՍԵՎ

ԳԻՇԵՐ

Զմեռն իր պաղ շնչով նստել էր ամայացած մայրաքաղաքի վրա:

Մուրճն արդեն կոխել էր, երբ վանահոր խոհանոցից դուրս եկավ ծերունի ջրկիրը մոմն ու լուցկին ձեռքին: Նա իր քաղերն ուղղեց դեպի Մայր տաճար: Տաճարի արևմտյան դռնից ներս մտավ և ձեռքի մոմը վառելով, զգույշ քաղերով բարձրացավ տաճարի բեմի վրա:

Անիի Մայր տաճարը բեմի աջ և ձախ կողմերում ունի երկհարկանի խորաններ, սակայն վերնահարկի խորանների մուտքերը անհայտ էին: Եվ ահա, ժամանակին մարդիկ հայտնաբերել են այդ աներևույթ մուտքերը: Տաճարի բեմի ձախ պատից հանված էր մեծ, սրբատաշ քար և ահա այդ տեղից բացվում է մուտքը դեպի վերնահարկ: Պատի միջից քարե աստիճանները տանում են երկրորդ հարկի ավանդատունը:

Զրկիրը մոմը ձեռքին մտավ այդ անցքից ներս և սկսեց քարե աստիճաններով գաղտագողի վեր մագլցել: Նա գնում էր որսի:

Վերին խորանում բույն էին դրել բազմաթիվ աղավնիներ, և ծերունի ջրկիրը հաճախ այնտեղից աղավնիների առատ որսով վերադառնում էր: Սակայն այս անգամ այդպես չպատահեց:

Ծերունին դեռ նոր էր ոտք դրել վերին ավանդատունը, երբ աղետաբեր լույսի ցուլերը նախազգացնել տվին հեզ աղավնիներին մոտալուտ վտանգը: Նրանք սարսափահար դուրս նետվեցին իրենց բներից և թևերի տենդային թափահարումից մոմը մարեց ծերունու ձեռքին:

Զրկիրը մնաց մթության մեջ: Նա սկսեց խարխալելով օդի մեջ որսալ աղավնիներին: Այնքան տարված էր իր գործով, որ բոլորովին մոռացել էր, որ այդ վերին խորանի հատակից հանված էին երկու մեծ սալաքար, առաջացնելով վտանգավոր բացվածք դեպի վար: Եվ ահա այդ բացվածքը եղավ աղետաբեր... Ծերունի ջրկիրը այդ բացվածքից ընկավ ներքև՝ առաջին հարկ, գլուխն ուժգնորեն զարկվեց սալահատակին... Եվ այդպես էլ մնաց...

Հետևյալ օրը Կյասսոյի բացակայությունը անհանգստություն պատճառեց վանահորը և երկար որոնումներից հետո գտան ծերունի ջրկիրի անշնչացած մարմինը Մայր տաճարի հյուսիս-արևելյան խորանում:

Զրկիրի մարմինը ամփոփեցին Մայր տաճարի հյուսիսային պատից ոչ հեռու:

Խեղճ Կյաստ, հանգիստ ոսկորներիդ:

Մայր տաճարի հարավ-արևելյան վերին խորանի մուտքը բացված չէ: Նմանապես պատի միջով կա նեղ ճանապարհ դեպի Մայր տաճարի տանիքը: Նոր անեցիներից միայն Յուրի Մառն է այդ նեղ անցքով տանիք բարձրացել:



Մինչև պրոֆեսորի գալը, որը, ըստ իր հայտարարության, երևաց 15 օր հետո, այդ 15 օրերի գիշերները մղձավանջային ծանր ժամեր էին ինձ համար:

Ժամանակը խառն էր, լեցուն հազար ու մի պատահարներով և այդ ծանր օրերին սգավոր քաղաքի մահաաարտու լույսյան մեջ, այնտեղ, Միջնաբերդի մոտ, Ծաղկոցաձորի ձախ շուրթին, գիտարշավի մենավոր շենքի մեջ, ուր ոչ մի շունչ չկար, տասնհինգ ծանր, անպատմելի գիշերներ անցկացրի ես՝ 19-ամյա պատանիս:

Մնացել էի մենակ:

Օրերը գլորվում էին մեկը մյուսի ետևից, քայց գիտարշավի աշխատակիցները չէին երևում:

1916 թվականի պարապուրդներն ու պրոֆեսորի նկատողությունը ինձ թելադրեցին մի փոքր ինքնուրույն լինել: Ես մշակեցի աշխատանքային ծրագիր ու սկսեցի այդ ծրագրով առաջնորդվել:

Լուսանկարչական նյութն առատ էր: Բացի այդ տարվա ստացած թարմ նյութից, ես ունեի և անցյալ տարվանից մնացած բավականին լուսապակիներ: Ըստ պատվերի մեկը ստանում էինք «Իոսիսիմ և Կամպանիա» ընկերությունից անգլիական «Իլֆորդ» գործարանի որակյալ լուսապակիներ և դեղորայք:

Իմ նկարահանումները սկսեցի գլխավորաբար հուշարձանների դետալներից և ժայռափորերից:

Սնվում էի վանահոր հետ միասին: Այդ տարի շրջագայողներն էլ շատ սակավ էին երևում, ասես ամեն ոք մոռացության էր մատնել Անին:

Անիի սուրհանդակը ցերեկները շրջում էր ինձ հետ, իսկ երեկոյան գնում էր Իգաձոր՝ իր տունը:

Վանահայրը ի նկատի ունենալով իմ դրությունը առաջարկում էր մնալ իր բնակարանում, սակայն պատանեկան իմ հպարտությունը մերժում էր

վանահոր առաջարկը: «Եթե մնամ հայր Միքայելի բնակարանում, նշանակում է ես ցույց եմ տալիս իմ վախկոտությունը», մտածում էի ես:

Ընթրիքից հետո, երբ խավարը բռնում էր չորս կողմը, ես ճամփա էի ընկնում դեպի գիտարշավի մենավոր շենքը: Դա մոտ մեկ կիլոմետր հեռու էր վանահոր տնից: Պետք էր շավղով շարժվել դեպի Միջնաբերդ և մի փոքր տարածություն կտրելուց հետո, հնադարանի մոտ բռնել «Մառի» փողոցը և բավական քայլելուց հետո թեքվել աջ՝ դեպի Ծաղկոցաձոր, որի ձախ շուրթին կանգնած էր գիտարշավի շենքը:

Տարին չար էր: Ամեն քայլափոխին կարող էիր հանդիպել վտանգավոր արկածների. մանավանդ գիշերը, մենակ, ավերակների, քարակույտների ու թմբերի միջով քայլելիս, ուր ամեն մի սոսափյուն, ամեն մի շշուկ սարսուռեցնում են մարմինդ և ավերակներն ու փլատակները խավարի մեջ ընդունում են անորոշ ու ահավոր կերպարանքներ: Քեզ թվում է, որ նրանք շարժվում են և իրենց ձևերն ու կերպարանքները փոխում: Ոմանք երևում են աչքիդ որպես չարախինդ մի վհուկ, ոմանք որպես անդրժիրիմյան աշխարհից դուրս ելած ուրվականներ իրենց կմախքացած, սարսուռ ազդող կերպարանքներով: Պաղ դողը սրտիս 15 ծանր գիշերներ քայլել եմ ամաչության մեջ մեռելային անդորրության ճնշող ծանրությունների ներքո:

Երբ հասնում էի տուն, իմ տասնհինգօրյա «բավարանը» և նրազը մարելով մտնում անկողին, այստեղից նորից սկիզբ էին առնում ծանր ու անհանգիստ գիշերային ժամերը:

Սուրհանդակը իմ տրամադրության տակ թողել էր իր երկար թուրը, որը ես հեռել էի գլխավերևս, մահճակալիս մոտ: Բացի այդ, ես ունեի մի ատրոնճանակ առանց փամփուշտների, դա կարող էր միայն վախեցնել ենթադրյալ չարագործներիս, եթե, իհարկե, այդպիսին հայտնվեր: Այդ բոլորը կարող էին սրտապնդել ինձ, ուրիշ ոչինչ:


Չորս կողմս լռություն ու մթություն, մենակ, ամայի, հեռավոր մի վայրում, այդ ծանր շրջապատը անհանգստացնում էր ինձ: Գանգիս մեջ պտըտվում էին մուսլ պատկերներ:

Այդ օրերին հայերը շարքից հանել էին մի ցարական պաշտոնյայի (թուրք), որը գաղտնի զենք էր մատակարարում այդ շրջանի մութ տարրերին: Նրանք զինվում էին ու նախապատրաստվում գալիք արհավիրքներիս մասնակցելու:


Եվ այսպես, մեկը մյուսի ետևից գալիս գնում էին ահաբեկող պատկերներ:




Անի. — Ն. Մառ — Միջնաբերդում. հեռվում՝ Մանուշե, Մայր տաճար:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1908 թ.




— Անի.— Հյուսիսային ամրություններ. Ավագ դուռը քաղաքի կողմից:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1908 թ.



Անի.— Հյուսիսային ամրությունները Ավագ դռան ստու:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1900 թ.





Մայրաքաղաքի խորհրդանիշը:
Լուսանկարեց Թ. Թորամանյան, 1912 թ.




Աճի.— Հյուսիսային ամրությունները:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1896 թ.

Աճի.— Ավագ դուռը:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1896 թ.






Աճի.— Կարսի դուռը:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1912 թ.



Անի. — Պարիսպներ, Մայր տաճար, Միջնաբերդ, Մանուշէ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1914 թ.



Աճի.— Երկու բուրգ և Փրկիչ եկեղեցին:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1914 թ.




Աճի.— Գլաձորի ամրությունները վիշապակիր բուրգով:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1912 թ.



Անի. — Աշոտ Ողորմածի օրով կառուցված շենք (հետագայում մզկիթ):

Անի. — Փրկիչ եկեղեցի:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1912 թ.






Անի.— Մայր տաճարը հյուսիս արևելքից, հետվում՝ Միջնաբերդ:
Լուսանկարեց Արտաշես Վրույր, 1916 թ.

Անի.— Ապուղամբենց, ս. Գրիգոր:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1903 թ.







Անի. — Գագկաշեն, պեղված 1905—1906 թթ.
Լուսանկարեց Թ. Թորամանյան, 1915 թ.

Անի. — Գագիկ Ա. Բագրատունի թագավորի տուֆակերտ արձանը:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1907 թ.







Անի.— Մանուշե, Մայր տաճար, Փրկիչ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1915 թ.




Անի. — Ամրություններ Տիգրան Հոնեանցի եկեղեցու մոտ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1914 թ.




Անի.— Տիգրան Հոնեցի եկեղեցին հարավ-արևմուտքից:



Անի. — Տիգրան Հոնեցի եկեղեցու մուտքը և գավթի ավերակները:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1902 թ.




Անի. — Տիգրան Հոնեցի եկեղեցի: Տրդատ թագավորի շքերթը արխազաց և վրաց թագավորների հետ:




Անի.—Միջնաբերդի ամրությունները Ծաղկոցաձորի կողմից, Միջնաբերդի փոքր եկեղեցին, Մայր տաճարը, հեռվում՝ Փրկիչ:


Լուսանկարեց Արամ Վրույր, 1929 թ.



Անի.— Ախուրյան գետը, Կուսանաց վանքը, կամուրջի ավերակները, Մանուչե, Միջ-
նաբերդ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1900 թ.




Անի.— Կուսանաց վանքը,
Լուսանկարեց Ք. Թորամանյան, 1912 թ.




Անի.— Առաքելոց եկեղեցու գավթի բանդակազարդ ճակատը:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1900 թ.

Անի.— Միջնաբերդի փոքր եկեղեցին:
Լուսանկարեց Արտաշես Վրույր, 1916 թ.







Անի. — Ախուրյանի ձորը և Կուսանաց վանքը:




Անի. — Կամուրջի մը-
նացորդները, հեռվում՝ Կու-
սանաց վանքը:
Հոսանկարեց Արամ
Վրույր, 1890 թ.




Անի. — Պարոնի պալատը:
Լուսանկարեց Հ. Բյուրքչյան, 1880 թ.



Անի.—Ծաղկոցաձոր—ժայռափոր բնակարաններ Անի գյուղի մոտ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1915 թ.




Աճի. — Իգաձոր ժայռափորեր:
Լուսանկարեց
Արտաշես Վրույր, 1916 թ.




Աճի. — Ծաղկոցաձոր—ժայռախոր:
Լուսանկարեց
Արտաշես Վրույր, 1916 թ.



Անի.— Թանգարան-անկյուն,
Լուսանկարեց Արամ Վրույր, 1915 թ.



Անի.— Թանգարան:




Անի.— Թանգարան:




Անի. — Զարեհարան:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1915 թ.




Աճի.— Քարեդարան, ավերակ վիճակում:
Լուսանկարեց Աշխարհբեկ Քալանթար, 1922 թ.





Անի. — Մեծ մինարտի մնացորդները
Լուսանկարեց Արամ Վրույր, 1900 թ.



Անի. — Միջնաբերդ — Պալատական եկեղեցու
քանդակազարդ որմնախոյակ:


Անի. — Հովվի եկեղեցի:
Լուսանկարեց Թ. Թորամանյան, 1910 թ.



Անի.— Իգաձորի ձախ շուրթին ավերակ եկեղեցու հյուսիսային պատը:
Լուսանկարեց Հ. Քյուրքչյան, 1880 թ.



Աճի.— Դվնո դուռը քաղաքի կողմից:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1912 թ.



Անի. — Բախտադեկի եկեղեցու քանդակազարդ բեկորներ:
Լուսանկարեց Արամ Վրույր, 1916 թ.



Անի. — Կույսի ամրոցը, Ախուրյան գետը և Պերճ Պողոսյան:



Աճի.— Տ. Սիրանույշը Առաքելոց եկեղեցու գավթի առջև
Լուսանկարեց Արամ Վրույր, 1904 թ.

Ես ջանք էի թափում վանել մտքիցս այդ բոլորը և հանկարծ կամ խոր ձորի միջից, որտեղից լայն ճանապարհը տանում է դեպի Մաղաքերդ՝ դեպի թշնամաբար տրամադրված գյուղերը, հրացանի մի պայթյուն կամ երթեմն քամին, որը շենքի որևէ պատահական անցքից անախորժ սուլոցով ներս էր խուժում անմարդաբնակ այդ շենքի մեջ, նորից սկսում էին անհանգրատացնել ինձ:

Երբեմն ուշ գիշերին ինձ թվում էր, թե մարդիկ գաղտագողի, զգույշ քայլերով հավաքվում էին լուսամուտիս տակն ու շշուկով խոսում իրար հետ ու հեռանում: Կամ թվում էր, թե մեկը մետաղե գործիքով խառնում է դռան փակակնքը:

Եվ այսպես, երկար տանջանքներից հետո, երբ հոգնում, ուժասպառ էի լինում, խոր քունը իջնում էր վրաս և աչքերս բացվում էին լուսադեմին ու զգում էի ինձ թույլ և ուժասպառ:

Այս բոլորի մասին ես ոչ ոքի ոչինչ չէի ասում. ես ամաչում էի ինքս ինձնից:

Իր նշանակած ժամկետին եկավ Մառը, նրա հետ Ալեքսանդրա Ալեքսենյան, Վոլոդյան և մի քանի օրից հետո՝ նաև Գ. Չուրիևովը:

Գիտարշավի շենքին ծածանվեց պետական եռագույն դրոշակը:

Այդ եռագույնը Անիի շրջակա գյուղերի շինականները տեսնում էին ամեն տարի, սակայն նրանց զարմանք էր պատճառել, որ կառավարությունը փոխվել էր, բայց դրոշակը՝ ոչ: Նրանք սկսեցին եկեղծադրել, որ այդ դրոշակը ոչ թե պետական է, այլ Մառի անձնական դրոշն է:

Նրանք այնպիսի համարում ունեին Մառի նկատմամբ, որ նա ամենագոր է աշխարհիս երեսին: Այդ համոզմանը եկել էին դեռ վաղ, երբ Յուրին Մաղաքերդի քրդերի կողմից բռնվելուց հետո, Մառը անհապաղ, հեկց նույն գիշեր, ուղարկեց Անիի սուրհանդակին Տեկոր հատուկ գրությամբ և պահանջեց, որ Տեկորի պրիստավը առանց հապաղելու ներկայանա իրեն:

Սուրհանդակը, առանց ժամանակ կորցնելու, հագավ իր «պաշտոնական» համազգեստը, վերցրեց իր թուրն ու հրացանը և ձիով գիշերը կրտրեց, անցավ լեռներ ու ձորեր, և կեսգիշերին անկողնից հանեց Տեկորի պրիստավին ու հանձնեց նրան պրոֆ. Մառի գրությունը:

Տեկորի պրիստավը, կարդալով գրությունը և սուրհանդակից հանգամանորեն ծանոթանալով անհանդուրժելի պատահարի մանրամասնություններին՝ իրար անցավ, անմիջապես հագավ իր զորահանդեսային նոր համազգեստը, ձեռներին անցկացրեց սպիտակ ձեռնոցներ և շտապ, հեկց նույն գիշեր, սուրհանդակի հետ սրարշավ ճամփա ընկավ դեպի Անի: Լուսադեմին նա

արդեն Անիում էր, որպես ստորադրյալ մի գինկորական զգաստ կանգնած պրոֆեսորի առջև:

Մառը հուզված ու գայրացած կշտամբում էր Տեկորի պրիստավին, իսկ նա առանց իսկ ծարուն հանելու, գույնը զցած լսում էր հանդիմանությունը:

Ծինականների կարծիքով թագավորից հետո ամենագոր մարդը դա պրիստավն է, իսկ երբ տեսան Տեկորի պրիստավի ողորմելի վիճակը և Մառի գայրույթն ու բարձրաձայն կշտամբանքը պրիստավին, որը դողում էր և ոչ մի բառ անգամ չէր համարձակվում ասել, այն ժամանակ համոզվեցին, որ իսկապես «աղան» ամենագոր է:

Այդ տարի Անիում կատարվեցին թեթև պեղումներ:

Գիտարշավի շենքը արդեն բնակիչներ ուներ: Ես կարողանում էի գիշերները հանգիստ քնել: Բայց այդ տասնհինգօրյա տանջանքներից ու անքուն գիշերներից հետո բոլորովին հյուծվել էի, ես քնից չէի կշտանում: Ալեքսանդրա Ալեքսենևան երբեմն ստիպված էր լինում արթնացնել ինձ:

Ես շատ անհարմար էի զգում ինձ և ճիգ էի գործադրում առավոտները շուտ արթնանալ:

Մի օր, երբ ես զբաղված էի արվեստանոցում, պեղման վայրից եկավ մի բանվոր՝ երկտողը ձեռքին:

Կարդում եմ.

«Պարոն Արտաշես, եթե կարելի է, խնդրեմ հանդիպել պեղման վայրը՝ շտապ լուսանկարելու բան կա: **Մառ**»:

Ես այլաչլվեցի, ասես դույլերով պաղ ջուր լցրին գլխիս: Գույն էի տալիս ու գույն առնում: Ես թերի եմ գտնվել պարտականություններիս մեջ, չէ որ այդ պահին էլ պարտավոր էի լինել պեղման վայրում: Եվ այդ զուսպ գրված երկտողը որպես մի բարոյական ապտակ նստեց երեսիս, որը երբեք, երբեք մտքիցս չի անցնում և չի էլ անցնի: Այդ երկտողը հիշելիս՝ միշտ մի տեսակ ջղային ցնցում է անցնում մարմնովս: Ինչպե՞ս ես թույլ տվի, որ հարգարժան գիտնականը տասնհինամյա պատանուն գրի՝ «եթե կարելի է», «խնդրեմ»: Ավելի լավ կլիներ ինձ խիստ նկատողության ենթարկելին, քան թե այդպիսի մեղմ, բայց բնավ չմոռացվող երկտողով հիշեցնելին իմ պարտականությունները:

Այդ երկտողը խրատական մի այրող դրոշմ էր, որ ես այլևս չմոռացա իմ կյանքում:

Մի օր պրոֆեսորի հետ գնացինք Մայր տաճար: Նա հանձնարարեց լուսանկարելու Մայր տաճարի խարիւղված հիմքերը, հիմնականում տաճարի հարավային կողմը, նմանապես լուսանկարել տաճարի հյուսիս-արևմտյան

անկյունը, որը գմբեթի փլուզման հետևանքով քանդվել էր: Ինչպես երևում է, Մայր տաճարի գմբեթը քանդվելիս նրա բեկորները թափվել էին շենքի հյուսիս-արևմտյան անկյան վրա և վնասել այն:

Ըստ պրոֆեսորի ծրագրի 1918 թվականին պիտի սկսվեր Աճիի այդ խոշորագույն շենքի վերանորոգման աշխատանքները:

Աճիում աստիճանաբար վերանորոգվում էին հուշարձանները: Վերանորոգվում ասելով չպետք է հասկանալ հիմնովին վերակառուցումը հուշարձանի, այլ մի շարք միջոցառումների կիրառում, որպեսզի հուշարձանը իր ներկա վիճակով մնար կանգուն:

Այսպես, մինչև օրս նորոգման էին ենթարկվել Միջնաբերդի 6-րդ դարի պալատական եկեղեցին, Առաքելոց եկեղեցու գավիթը, Մանուշեի մզկիթը և շենքը (թանգարան), Գլխձորին նայող վիշապակիր բուրգը, Պարոնի պալատի մուտքի մի կողը, Փրկիչ եկեղեցին: 1918 թվականին հիմնական վերանորոգման պիտի ենթարկվեր Մայր տաճարը և Պարոնի պալատի հյուսիսային պատը պիտի ամրացվեր: Դա երկուսուկես հարկ բարձրացող հսկա մի պատ էր, որ իր աջից և ձախից հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան անկյուններից անջատված էր: Ուժեղ փոթորիկների պահին պատը տարուբերվում էր՝ ճոխներ հանելով, պատի վերին ծայրը մոտ 6—7 սանտիմետրով տատանվում էր:

Այդ հսկա պատը ամեն բույե կարող էր փլվել՝ իր փլատակները թափելով Իգաձոր: Ամրացնելու միակ հարմար միջոցը մտածել էին հետևյալ ձեվով. պատի վերի մասում (կենտրոնում) բանալ մի անցք և երկաթե ձողի ծայրը ամրացնել այնտեղ և դրա դիմացի՝ հարավային հաստատուն և ամուր պատի մեջ, ճիշտ դիմացը, նմանապես ամրացնել մի ուրիշ երկաթե ձող և այդ երկու ձողերը, որոնց ծայրերը պետք է ունենային ոլորապտույտ ակոսներ, որոնք իրար պետք է միանային պտուտակով (շալքա):

Երկու օրը մի անգամ մի լրիվ պտույտ ոլորելով, աստիճանաբար այդ հսկա պատին տալիս ուղղահայաց դիրք և այդպես մնար երկաթե ձողով ամրացված: Այն ժամանակ ուժեղ քամիները անգոր կլիներին տարուբերել Պարոնի պալատի հյուսիսային հսկա պատը, որը նայում էր ուղիղ Իգաձոր:

Հուշարձանների վերանորոգումների աշխատանքները կատարում էր գյումրեցի հայտնի կապալառու Ծերմակ Համոն, որը բերում էր Գյումրիի հմուտ քարտաշ-որմնադիր վարպետներ ու Աճիի գիտարշավի ճարտարապետի ցուցումներով կատարվում էին վերանորոգման աշխատանքները:

Մայր տաճարի նկարահանումների աշխատանքները վերջացնելուց հետո, պրոֆեսորը ինձ ուղարկեց Խոշալխանք՝ լուսանկարելու համար տեղի արձանագրությունները:

Անիի սուրհանդակի ուղեկցությամբ անմիջապես ճամփա ընկա դեպի Խոշավանք (Հոռոմոս):

Ինչպես հայտնի է Անի—Խոշավանք ճանապարհին կանգնած է «Խոշեր» կոչվող հուշարձանը: Դա իրենից ներկայացնում է քառանկյունի երկու աշտարակ, որոնց ծայրերին հանգչում են փոքրիկ գմբեթներ, և այդ երկու աշտարակները ժամանակին կամարով միացած են եղել իրար: Հյուսիսային աշտարակի վերին մասը փլած է, նմանապես փուլ է եկած և կամարը:

Այդ առեղծվածային կոթողի մասին տեղի շինականների երևակայությունը հյուսել է մի պատմություն:

Հոռոմոսի (Խոշավանք) տաճարի հարավային կողմում մի քանի սրահների կողքին կանգնած է սյունազարդ, գեղեցիկ, մեծ դահլիճ, որն իր արեվելյան կողմում ունի բոլորածև մի խորան իր պատվանդանով: Ասում են, որ այդ դահլիճը դատարանի սրահ է եղել, իսկ խորանը՝ դատական կազմի տեղը, և որոշ օրերին այնտեղ, թագավորի գլխավորությամբ, տեղի էին ունենում դատավարություններ: Դատավարության օրը, երբ արքան իր շքախմբով Անիից առաջ էր շարժվում դեպի Հոռոմոս, և երբ Խոշերից արդեն նկատելի էր լինում արքայական թափորի շքերթը, Խոշերի աշտարակներից դողանջում էին զանգեր, որոնք ավտոտում էին թագավորի գալուստը և ողջունում նրան:

Սակայն սյունազարդ, մեծ սրահի դռան բարավորի արձանագրությունը շինականների այդ երևակայական պատմությունը հերքում է: Սրահը կառուցված է 13-րդ դարում (1229 թ.), երբ Բագրատունիների թագավորությունը այլևս գոյություն չուներ:

Խոշավանքի պատերը խոսում են իրենց բազմաթիվ արձանագրություններով: Դա մի գեղեցիկ քարե մատյան է, որտեղ կա հարուստ նյութ անցյալ կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող՝ ջրանցքի կառուցման, նվիրատվությունների, այլևայլ տուրքերի ու հարկերի, շենքերի կառուցումների և վերանորոգումների, թագավորների, իշխանների, հոգևորականների անուններ և այլ տեղեկություններ, որոնք հավաստի և կարևոր աղբյուրներ են մեր պատմության համար:

Չորում, Ախուրյանի ափին, կանգնած են երկու եկեղեցի՝ ս. Մինաս և ս. Գևորգ: Գագիկ Ա. Բագրատունի թագավորը կառուցել է ս. Գևորգ եկեղեցին և նրա վրա դրոշմել մի սրտատույ աքանազարություն: Արձանագրություններից մեկը հավաստում է Բագրատունիների արքայական հանգստարանի մասին:

Այդ եկեղեցիների շրջապատը քարակույտեր են: Այնտեղ կարելի է տեսնել փլված մատուռ-դամբարանների հիմքերը միայն, և այդ ավերածության

ու ամայության մեջ երևում է միայն մի դամբարան երթեմնի իր վրա կանգնած մատուռով: Դամբարանի վրա փորագրված է միայն մի բառ — «Աշոտ»: Ասում են, որ դա Աշոտ Ողորմածի գերեզմանն է:

Այդ դամբարանը ավերված է գանձ որոնող բախտախնդիրների կողմից, որի հետևանքով դամբարանի մի կողմը մեծ խոռոչ է բացված:

Ժամանակս խոսացրի և մի քանի օրում ավարտեցի Խոշավանքի արձանագրությունների լուսանկարահանումը:

Պայմանավորված օրը սուրհանդակը եկավ, հետը բերելով ևս մի ձի:

Լուսանկարչական գործիքը իր պարագաներով գետեղեցիներ խորջինի մեջ, ամրացրիներ ձիու թամբին և հրածեշտ տվիներ Խոշավանքին ու մեկնեցիներ դեպի Անի:

Մոտենում էր մայրամուտը...

Անցնում ենք խոշերի մոտով: Մեր ձիերը համրաքայլ առաջ են շարժվում: Ահա և Հովվի եկեղեցին: Արևմուտքը շառագունվել է:

Մեր առջև փոված խոպան դաշտերի ծայրին երևում է Անին, իր երկշարք պարիսպների բազմաթիվ բուրգերով ու դարպասներով:

Ջինջ երկնակամարը բռնկված է բոցերով, իր մեջ կլանելով հորիզոնում կուտակված ամպերի քուլաները ու բոսոր ճառագայթները, որոնք իրենց վերջին ցոլքերի մեջ են առնում ամայացած մայրաքաղաքը, և ավերակները իրենց հրաշեկ տեսքով կանգնում են մեր առջև հրդեհով բռնկված:

Քարքարոտ դաշտերը ծածկված են տատասկներով, որ այնքան բնորոշ են Անիի բուսականության համար:

Արևմուտքի բոսոր ճառագայթները հետզհետե թանձրացնում են իրենց գույները, նրանց հետ միասին աստիճանաբար մթազնում են և՛ ավերակները:

Մեր ձիերը համրաքայլ մտնում էին «Դվնո» դարպասից ներս: Սմբակների դոփյունները խոլ արձագանքում էին մուսյլ բուրգերի ու պարիսպների մեջ, որոնք խավարում առացել էին խոլ ու դաժան կերպարանք:

Մենք մտանք Անի: Լավում էր Ախուրյանի խոլ մրմունջը և ծղրիդների սուր կանչը:

Խավարի մեջ թաղված Ավերակների քաղաքում շունչ ու կյանքի երեք ցուլք էր առկայծում. մեկը Աստվածամոր տաճարի դիմացը՝ հայր-Միքայելի լուսամուտից, մյուսը Ծաղկոցաձորի շուրթին կանգնած մեկավոր շենքից և երրորդը՝ Իգաձորի այրերից:

Խոշավանքի նկարահանումների նեգատիվները Անիում մշակելուց հետո, պրոֆեսորը հանձնարարեց ինձ հյուսիսային ամրությունների Ավագ դուռն անկառի արձանագրության (մասամբ եղծված) Էտամպը հանել: Չնայած

ես էստամայ հանելու ոչ մի փորձ չունեի, բայց ուշադիր դիտելով յուրացրել էի այդ գործը:

Ես հանձն առա: Սուրհանդակը մի քանի բանվորներով Ավագ դռանը կանգնեցրեց մի խոշոր էլարան և ես երեք օր աշխատելուց հետո ավարտեցի էստամայի հանումը: Արձանագրությունը մոտ 3 մետր երկարություն ուներ և կենտրոնում էլ բացված էր մի խոշոր անցք, որով արձանագրության որոշ մասը չկար: Արձանագրությունը նայում էր հյուսիս. արևմտյան կողմից բարձրացող հսկա բուրգն էլ չէր թողնում, որ արձանագրությունը արև տեսնի (օգոստոսի վերջին օրերն էին), հետևաբար բավականին ժամանակ էր պետք, որ պատրաստածս էստամայածը չորանար և հնարավոր լիներ հանել այն:

Ես ավարտեցի իմ աշխատանքները Անիում: Պրոֆեսորի հանձնարարությանը Խոշավանքի արձանագրությունների նեգատիվները Թիֆլիսում հանձնեցի Հ. Ա. Օրբելուն:

Ավարտվեց Անիի 16-րդ գիտարշավը:

Երկիրը վերստին խառնվեց: Թուրքերը խուժեցին մեր երկիրը...

Եվ 1917 թվականը դարձավ Ն. Յա. Մառի գիտարշավների վերջակետը:



Ծան գարուններ բոլորեցին կյանքիս վրայով, բայց ես մնացի կարոտը սրտիս. ես այլևս չտեսա Անին:

Իմ մանկական ու պատանեկան կյանքի ամուսն ամիսները կապված են եղել այդ նվիրական քաղաքի հետ: Ես այնպես ձուլվել էի նրան, որ իմ բացակայությունը Անիից երազանքների ու տառապանքների ծայր էր բաց անում իմ անհանգիստ հոգու մեջ:

Անիից հետո սկսվում է իմ անդաստական կյանքը՝ լի արկածներով ու նեղություններով: Ես էլ չգիտեմ, թե ինչո՞վ բացատրել այն, ինչ կատարվում էր իմ ներաշխարհում: Մի տեղ չէի կարողանում հանգիստ մնալ՝ թափառումներ, թափառումներ, պանդխտություն:

Եվ այդ հոգեմաշ վիճակում ինձ հետ պատահեց սոսկալին. նա ցնցեց իմ ամբողջ էությունը: Ես ներկա եղա ու վշտակից զարհուրելի մի մեծ եղեռնի, որ մարդու երևակայությունն անգամ անգոր է պատկերել: Արյունով հեղեղված Իզմիրի ահաաբստո դեպքերն էին դրանք 1922 թվականի օգոստոսի վերջերին: Մի կողմից մահաշունչ ահռելի հրդեհը՝ բռնկված քաղաքի

ամբողջ երկարությամբ իր կործանիչ շնչով ստաջ էր շարժվում դեպի ծովափ, աննապարհին լսվելով, հուր ու մոխիր դարձնելով ամեն ինչ, մյուս կողմից՝ առևանգում, խոշտանգում ու բնաջնջում հայ տարաբախտ ժողովրդի: Եվ այդ բոլորը կատարվում էր «քաղաքակիրթ» եվրոպացիների աչքերի առջև: Իզմիրի ծովախորշում կանգնած անգլիական, ամերիկյան, ֆրանսիական և այլ պետությունների նազմանավեր սուկ հանդիսատեսի դերում էին:

Այդ օրերին Իզմիրում էր գտնվում «Արեւլան-Սուրաբյան» թատերախումբը, որի անդամներից մեկն էր տողերիս գրողը:

Տասներեք մղձավանջային ծանր օրեր ու անքուն, տանջալից գիշերներ անցկացրի արյունի ու սարսափների աշխարհում: Տնքում էր հոգիս ցավատանջ վշտերի ու տառապանքների մեջ:

Վերջապես մենք ազատվեցինք այդ դժոխային կառափնատնից ու անցանք Հունաստան:

Հունաստանում երկար չմնացի: Հրածեշտ տալով իմ արվեստակից ընկերներին, անցա Բուդաբիա:

Մոտ երեք տարի ես թափառում էի Բուդաբիայի քաղաքներն ու ավանները՝ պոլսահայ դերասան Խաչիկ Պալյանի հետ կազմակերպելով ներկայացումներ:

Մի օր Պոլդիվ քաղաքում՝ Փարիզում հրատարակվող հայկական թերթում կարդում եմ.

«Մոտ օրերս պրոֆ. Մառը Փարիզի հայ ուսանողներու համար պիտի բանախոսեն... նյութի շուրջ»:

Անին ամբողջ հասակով կանգնեց իմ աչքիս առջև:

Ես նամակ գրեցի պրոֆ. Մառին: Հասցեն չգիտեի: Գրեցի այսպես՝ Փարիզ, Հայոց եկեղեցի, պրոֆեսոր Մառին:

Այսպես են գրում հասցեները սիլուոթի բոլոր պանդուխտները իրենց հարազատներին, ծանոթներին և ընկերներին, երբ ստույգ հասցեն չեն իմանում:

Որոշ ժամանակից հետո ես ստացա պրոֆեսորից նամակ սրտառույշ, ջերմ տողերով գրված:

Ստորև բերում եմ պրոֆ. Մառի նամակը:

«Միրելի Արտաշես (վնաս չունի եթե Արա ես):

Ձեր նամակը ստացա: Իմ մեջ արթնացան անցյալի քաղցր հիշողություններ՝ կապված Անիի հետ:

Դուք գրում եք Վոլոդիայի և Յուրիի մասին: Վոլոդյան այլևս չկա, Յուրին պրոֆեսորացու է: Ես այս ամառ պետք է մեկնի Պարսկաստան, երևի միասին կերթանք:

Ես գնացել էի Սպանիա՝ բասկերի լեզուն ուսումնասիրելու: Մոտ օրերս վերադառնալու եմ Լենինգրադ:

Ինձ շատ զարմանք պատճառեց Ձեր ստորագրության նախորդ բառը: Ներեցեք, իհարկե, եթե հարցումովս Ձեր վշտի վրա նոր վիշտ եմ ավելացնում: Ինչո՞ւ ողբացյալ: Դուք չեք գրում Ձեր ծնողների առողջության մասին:

Հարգանք Ն. Մառ:

Որքան անկեղծություն ու ջերմություն զգացի այս թանկագին նամակի սողերի մեջ: Իմ առջև կանգնեց Անին լուռ ու սգավոր...

Պանդիստության օրերին ես իմ ստորագրությանը ավելացրել էի մի բառ՝ «Ողբացյալ Վրույր-կրտսեր», և որոշել էի, որ այդ «ողբացյալ» տիտղոսը չհանել մինչև որ պանդիստության ցուպը վայր չդնեմ: Եվ Մառին գրած նամակում այդպես էլ մեքենայաբար ստորագրել էի՝ ողբացյալ Վրույր-կրտսեր, և հարգելի գիտնականը իր գրած նամակում զարմանքով հարց է տալիս ինձ — «Ինչո՞ւ ողբացյալ»:

— Այո, հարգելի պրոֆեսոր — «ողբացյալ», այդքան դառն տառապանքներից ու վերապրումներից հետո «ողբացյալը» միայն կհարմարի: Նա մի կողմ կշարտվի, երբ ես ոտք կդնեմ հայրենի հողի վրա, փույթ չէ, թե այնտեղ մի փոքրիկ հյուղակում կապրեմ, ահա այն ժամանակ դեմ կշարտեմ պանդիստության ցուպս ընդմիջու:

Եվ ահա 1925 թվականի վերջերին հունական «Խարալամբոս» նավը, որը բերում էր հայրենակարոտ մեր եղբայրներին ու քույրերին իրենց հայրենի հանգրվանը՝ Խորհրդային Հայաստան, ես ևս հայրենադարձվեցի:

1926 թվականի մայիս ամսին ես մի կողմ նետեցի պանդիստության ցուպը և քայքայված ու հյուծված մեկնում եմ հայրենիք: Եվ երբ գնացքը Ադին կայարանից շարժվեց դեպի Անի կայարան, ես գնացքի վագոնի լուսամուտին կառչած անթարթ հայացքով սրտատրոփ սպասում էի իմ սիրելի Անին: Նա պետք է երևար Ադին—Անի երթուղու ընթացքին:

Ծոգեքարը հեալով առաջ էր սլանում, և հանկարծ բացվում է բլուրների արանքը և վաղ առավոտի մեղմ ճառագայթների ներքո հեռվում երևում է **Անին...**

Ես փշաքաղվեցի, գլուխս պտտվեց. մի պահ աչքերս մթագնեցին և ապա մշուշապատ, աղոտ գույներով անպատում անուրջի նման, որպես քաղցր երագ, երևույթացան տեսիլքներ, ականջիս հնչող Անիի Աստվածամոր տաճարի խոշոր զանգի դյուփիչ ղողանջների ներքո որպես զարթոնքի շեփոր...

Եվ շարժանկարի ծապավենի նման արագ, մեկը մյուսի ետևից գալիս անցնում էին տարբեր երևույթներ քաղցր ու դուրեկան, հիշողությանս մեջ արթնացնելով դեռ մոտ անցյալի շնչող նոր **Անին...**

Ահա ալիս ալեցիս, բազմահմուտ գիտնականը, նա համընթաց քայլում է քաղաքի ավերակների ու փլատակների մեջ խորասուզված ծանր խոհերով: Նրա ոտներից բարձրավիզ կոշիկներ կային, գլխին անգլիական ճերմակ գլխարկ, ձեռքին եղեգնյա երկար գավազան...

Իսկ այնտեղ, Մայր տաճարի մոտ քարակույտների վրա նստած է ևս մի ալեցի. նա թավ հոնքերի տակից իր խորաթափանց հայացքը ուղղած տաճարին, խուզարկու աչքերով պրպտում է մի ինչ-որ բան: Նրա կողքին կանգնած է Կարապետը չափագրական երկար ձողերը ձեռքին:

Ահա և նոր Անիի հին ալեցին՝ խանդավառ արվեստագետը. նա կանգնած է խորախորհուրդ վիշապակիր բուրգի կողքին լուսանկարչական գործիքը ձեռին...

Ռեպի Առաքելոց ձգվող շավղով կայտառ քայլերով ընթանում է երիտասարդ գիտնականը՝ Հովսեփ Օրբելին, ձեռքին բռնած ունի մի մատչան՝ դա Անի քաղաքի «Քարե մատչանն» է...

Ահա քայլում է հայր-Միքայելը գավազանը ձեռին դեպի Մայր տաճար...

Այնտեղ, քարակույտների թմբերի միջով, դեպի Իգաձոր տանող շավղով, ձգվում է մի բանի ավանակներից կազմված փոքրիկ քարավանը, ավանակների մեջքերին ամրացված տակառիկներով: Նրանց առջևից պոչը տնկած գվարթ խայտում է փոքրիկ «Բոշկան»: Քարավանի ետևից քայլում է ծերունի ջրկիրը մխացող շիբուխը բերանին, որի ետևից ծանրաքայլ ընթանում է գառամյալ մի գամփո: Այդ «շքախումբը» Իգաձորի վրայով պետք է գնա Ծաղկոցաձոր՝ ջուր կրելու ալեցիների համար:

Հյուսիսային ամրությունների Ալիս գ դռան մոտ աշակերտական համազգեստով կանգնած է մի պատանի՝ վրձինը ձեռքին՝ դա Միքայելն է, Անիի արվեստի ուխտավորը: Նա հայացքը ուղղել է Անի քաղաքի խորհրդանշանին...

Տատասկներով ծածկված ամառի դաշտերի միջից դեպի մայրաքաղաք ձգվող ճանապարհով, փոշու ամպերի մեջ կորած, սուրում է կարմիր երիվարին հեծած մի մարդ: Վաղորդյան արևի ճառագայթների տակ նրա կոնակին փայլում է հրաշունչ գեղքի մետաղյա փողը. ես ճանաչեցի նրան, Անիի սուրհանդակն է նա...

Այնտեղ, միջնաբերդի բարձունքներում, ավերակների մեջ, շարժում կա: Բազմաթիվ բանվորներ, զինված բահերով ու բրիչներով՝ աշխատում են...

Ես տեսա շատ անեցիների. ահա եղբայրս՝ Արան, Վահրիճը, Վոլոդյան, իմ մանկա-պատանեկան օրերի ընկերները Անիում: Տեսա Տարագրոսին, Ն. Բունիաթյանին, Աշխարհբեկ Քալանթարին, Տոկարսկուն, Ագոյին, Օհանին, Արամին, փոքրիկ Այծեմնիկին, Հեղինեին, Արեգնազին, Արաքսիին, Ծաղիկին և շատ ուրիշներին...

Ես կփափագեի, որ հարատևեին այդ քաղցր տեսիլները, կցանկայի լինել նոր անեցիների հետ, ես կբաղձայի շնչել նվիրական ավերակների ստեղծագործ շնչով...

Ծոգեքարը ծանր հնոցով իր ուղին բռնած շարժվում էր առաջ: Արանքը անցավ, գորշ բլուրները թանձր վարագույրների նման եկան, ծածկեցին ամեն ինչ...

Ծոգեքարը սուլեց. ես սթափվեցի: Անին անհետացել էր իմ տեսադաշտից:



1932 թվականին «Բանվորական թատրոնը» հյուրախաղային ներկայացումներով գտնվում էր Անի-Պեմզայում: Մի օր թատրոնի բրիգադան ցերեկային բացօթյա ելույթ ունեցավ Խարկով գյուղում:

Ելույթից հետո սահմանապահների ուղեկցությամբ մտնեցանք Ախուրյանի ձորի շուրթին, Անիի դիմաց:

Ես կարկամել էի ու արձանացած դիտում էի: Իմ դիմաց Ավերակների քաղաքն էր: Երկար տարիներից հետո կրկին տեսնում էի երազանքիս առարկան: Ազավոր քաղաքը, ծանր խորհուրդների մեջ թաղված, իր կանգուն ու կիսականգուն գեղակերտ կառույցներով փոված էր իմ առջև: Գանգիս մեջ պտտվում էին իմ օրերի Անին, իր նոր բնակիչներով, իր նոր շնչով... Մանկական ու պատանեկան կյանքիս քաղցր օրերով...

Հուզմունքը խեղդում էր ինձ:

Վերադարձին ես Խարկովում հանդիպեցի Ագոյին. դա մեծ ուրախություն պատճառեց մեզ երկուսիս: Մեր հանդիպումը ջերմ էր: Ինչպես երկու պանդուխտներ, երկար ու ձիգ տարիներից հետո պատահմամբ հանդիպում են իրար և իրենց երկրի կարոտը առնում միմյանցից, ահա այդպես էր մեր հան-

դիպումը, բայց ավելի քան սրտառուչ էր, երբ ես Ագոյի խրճիթի շենից ներս մտա:

Ագոն, այդ առնակազմ պաշկերոցին ժամանակից շուտ ծերացել էր արդեն, կոտորվել էր և իր կողակիցը՝ Զմոն: Երբ վերջինս իմացավ իմ գալուստը, մի կողմ նետելով հայ գեղջկուհու նահապետական ամոթխածությունը, վազեց և փարվեց վզովս, ասես մայրը գտած լինեք իր կորած զավակին:

— Լաո, Արուաշեա... բացականչեց նա և ուրախության հուզմունքը խեղդեց նրան, նա լռեց: Բայց լուռ արտահայտվեց ավելին, քան կարող էր լեզվով ասել:

Եվ հորդում էին Զմոյի բարի աչքերից բերկրանքի ու դառնության արցունքներ, ասես Անիի անցյալ կյանքի քաղցր օրերի կարտուն էր առնում ինձանից:

Ագոն տեղում քարացած, հեկնված իր գավազակին, լուռ նայում էր մեզ. նրա սիրտը փոթորկում էր նույն ջերմ զգացմունքներով, ինչ համակել էր Զմոյին: Մենք երեքս էլ արտասովում էինք:

Ագո և Զմո, ասես նվիրական անուններ, որոնք վերստին մարմնացնում են հիշողությանն մեզ նվիրական Անին իր շրջապատով ու իր առօրյա քաղցր կյանքով:

Պատմական կյանքի հորձանուտի մեջ ընկած՝ ալիքները բերել, շարտել էին Ալաշկերտի հովիտներից հեռու, ուրիշ տարագիրների հետ և դրանց՝ այդ երկու հայ շինականներին:

Եվ բնավեք ու տնավեք տարագիրներին գորովագույթ մոր նման իր գիրկն էր առել իրենց բախտակից Ավերակների քաղաքը — նրանք ծվարել էին Անիի Իգաձորի ժայռափորերում որպես վերջին հակադրվան: Սակայն դարձյալ իրենց վերջին թվացած բույնն էլ քանդվեց: Եվ նորից պանդխտության ցուպը ձեռներին ահաբեկ ու տրտում լքեցին Իգաձորի այրերը և բույն դրին Խարկով գյուղում: Նրանց դեմքերը ակոսել էին տառապանքն ու վիշտը և անջնջելի հեռքեր թողել Ագոյի ու Զմոյի տանջված դեմքերին: Տարաբախտ շինականների վրա կյանքը դրոշմել էր իր դաժան կնիքը:

Կարոտի, ուրախության ու վշտի արցունքները դառն ու քաղցր ի մի շաղախված հորդում էին մեր փոթորկող սրտերից: Անպատմելի, անկարագրելի վայրկյաններ էին դրանք, կյանքի մեջ հազվադեպ, ուր Ավերակների քաղաքի պապակ կարոտը ու իր գեղեցիկ՝ մեր փոքրիկ կյանքով, իր ջերմ շնչով, մագնիսական հոսանքների նման գալիս, անցնում էին մեր մարմինների միջով ու դուրեկան զգացողությամբ համակում մեր ամբողջ էությունը: Այդ անպատում վերապրումները զգում էինք մենք իր ամբողջ մեծությամբ ու քաղցրությամբ:

Որքան որ անբաժանելի ու դուրեկան վայրկյաններ էին, բայց այնուամենայնիվ ստիպված էի հրաժեշտ տալ անեցի հարազատներին:

Զմոհ, որ զբաղված էր լավաշ թխելով և տեսնելով ինձ՝ ձգել էր իր աշխատանքը, իր պատրաստած լավաշներից տվավ ինձ ճանապարհի համար, ես չմերժեցի:

Որքան որ ջերմ ու քաղցր էր մեր հանդիպումը, այնքան էլ ծանր ու դառն էր մեր բաժանումը:

Իմ արվեստակից ընկերները վաղուց արդեն հեռացել էին, ես պետք է հասնեի նրանց:

Զմոհ ձեռները ծալած կրծքին, դռան շեմին կանգնած, թաց աչքերով ճանապարհ էր դնում ինձ, ասես ես այդ ընտանիքի հարազատ զավակն էի և հարկադրված գնում էի պանդխտության ու մայրը վշտաբեկ սրտով ճանապարհում է նրան:

Ագոն, զրուցելով ինձ հետ՝ քայլեց բավական երկար:

Անիի պեղումներում փորձված խարկոլցի բանվորներին՝ Տիգրանին, Գաբրիելին, Մուքայելին և ուրիշներին չկարողացա տեսնել. ոմանք բացակայում էին, ոմանք էլ արդեն չկային: Լսեցի, որ Տիգրանի տղան Անի-Պեմզա կապի բաժանմունքի պետն է:



Անի — չորս ձորերով պարփակված դյուրական մի աշխարհ՝ արգասիք հայ հանճարեղ մտքի:

Անի — ուսուցիչ ուսուցանելու համար:

Անի — արվեստի վարդապետ՝ վարդապետելու համար:

Եվ Անին պատմական հայ արվեստի զարգացման ուղիներում քարգավաճած իր աննախընթաց արվեստով գալիս է ուսուցանելու, վարդապետելու իր հետագա սերունդներին:

Անիի բեղմնավոր արգանդը ծնում է, եռանդ ու ավյուն է տալիս շատերին:

Հետագա սերունդները սկսեցին ուսումնասիրել նրան, սովորել նրանից, ներշնչվել նրանով, վերցնելով նրանից այն լավն ու օրինակելին, որոնք հետագայում հիմք ծառայեցին հայկական նոր ճարտարապետական ոճին ու կառուցման եղանակներին և տվին ժամանակի շունչը խտացրած ուրույն, գեղեցիկ մի արվեստ:

Եվ սկսում է խոյանալ «Նոր-Անին» երիտասարդ մայրաքաղաքի տարածության վրա, հիացմունք պատճառելով աշխարհի տարբեր ծայրերից մեր երկիրը այցելած ամեն մի մարդու:

Պատմական հայ ճարտարապետական արվեստի ուսումնասիրության հիմնաքարը դրեց գիտնական ճարտարապետ Թորոս Թորամանյանը: Անեցի էր նա, նա շնչում էր կախարդական քաղաքի շնչով, նրան հմայել էր Անից իր դյուրական ներդաշնակությամբ:

Սակայն որքան էլ ջերմությամբ կապված էր Թորամանյանը իր սկսած դժվարին գործին, այնուամենայնիվ շատ լավ գիտեր, որ իր ջանքերն ու տրբանությունները երբեք ու երբեք չեն կարող ամբողջացնել այն սուրբ գործը, որին նվիրաբերել է նա իր կյանքն ու էությունը՝ դա սերունդների գործ է այդ միտքը կրծում էր գիտնականի հոգին:

Ամայի տարածության մեջ, մեկուսացված ձորերով, նստած է կախարդական քաղաքը իր հմայող տեսքով ու իր բեղմնավոր արգանդից ծնունդ է տալիս հայ սերնդի գավակներին, ներարկելով նրանց մեջ շնորհքի, տաղանդի և հանճարի սաղմեր:

Եվ երկնեց նորից դյուրական քաղաքն ու ծնունդ տվեց մի անհանգիստ պատանու՝ դա Միքայել Մազմանյանն էր:

Նա դեռ պատանի հասակից անկաշառ սիրով կապվեց Անի քաղաքի հետ, որը սերմանեց նրա հոգու մեջ անդրանիկ սաղմերը գեղեցկի, վսեմ ճաշակի ու բարձր արվեստի ըմբռնման:

Անցան տարիներ և մենք տեսնում ենք Անիի ծնունդը հասակ առած, զինված ճարտարապետական արվեստի գիտելիքներով՝ Միքայել ճարտարապետին:

Միքայելն ըմբռնեց գիտնական-ճարտարապետի սուրբ գործի մեծությունն ու կարևորությունը: Նա դեռ պատանի հասակից տածելով դեպի մեծ Հայք՝ Թորամանյանը խորին հարգանք, մոտեցավ իր ավագագույն արվեստակցին և ամեն կերպ ջանաց օգտակար լինել նրան:

Միքայել ճարտարապետի հետ հաճախ այցի էինք գնում մեր պատմական հուշարձաններին. նա չափազրում էր և ուսումնասիրում, իսկ ես նկարահանում էի — Երեբունքը, Ավանը, Արամուսը, Պողոսին և այլն շուրջ մի երկու տասնչակ հուշարձան: Ինձ վիճակված էր Անիի կարոտը առնել մեր նորածին Հայաստանի սահմանների մեջ գտնված պատմական հուշարձաններից:


Մի օր, 1932 թվականի ամառը Միքայելի հետ այցի գնացինք Թորամանյանին: Մեզ տեսնելով ուրախացավ: Նա բավականություն էր զգում տեսնելով երիտասարդ Միքայելին՝ սերտ կապված հայ պատմական ճարտարապետությանն ու արվեստին: Թորամանյանի և Մազմանյանի զրույցները միշտ պտտվում էին պատմական հուշարձանների և նրանց վերաբերյալ հարակից խնդիրների շուրջը:

Նախորդը ավանդում է հետևորդին՝ ահա կյանքի օրինաչափությունը:

Ջերմ գրույցի ժամանակ մի պահ պայծառացավ Թորամանյանի դուրեկան դեմքը և արտահայտեց իր սրտում երկար ժամանակ պտտվող ու իրեն անհանգստացնող մի միտք — նա որոնում էր իր սկսած գործը շարունակողին...

— Ի՞նչ գործը շարունակողը դուն պիտի ըլլաս, — ասաց նա Միքայել ճարտարապետին: Ասես մի ծանր բեռ վայր ընկավ ծերունագարդ գիտնականի ուսերից. նա գտել էր իր հետևորդին:

Եվ կրկին ու կրկին բեղմնավորվում է դյուրական քաղաքի արգանդը հայ հանճարեղ ժողովրդի շնչով:





20 օգոստոսի. 1901 թ.

Օգոստոսի 20-ին երեք ընկերներով այցելեցինք հնուության նշանավոր հուշարձան, հիասքանչ Անի քաղաքը և հիացանք նրա գեղատեսիլ և հուշակապ ավերակներով: Ինչպիսի տեսարաններ, ինչպիսի պուեզիա: Մեզ շատ դուր եկան հյուրանոցի մոտի հուշակապ և վեհաշուք Մայր Եկեղեցին և խրոխտ աշտարակը իր մավրիտանական սյունաշարով, որտեղ և գիշերեցինք:

Ա. ՍՏԱԳԼԻՆԻ

(թարգմանություն իտալերենից)



25 հուլիսի 1902 թ.

Ես շատ եմ լսել այս հինավուրց քաղաքի մասին, շատ բանի չէի հավատում: Դիտելով այն, հավատացի այդ հիասքանչ և զարմանալի քաղաքի հարուստ և մեծամոզակ շինարարների անցյալին: Իրոք կարելի է ողբալ նրա ավերակները: Ամեն մի քարը խոսում է և նրան հարկավոր է հասկանալ:

Բ. Ե. ԶԵՂԳԻՆԻԶԵ

(թարգմանություն ռուսերենից)



15 մայիսի 1903 թ.

Տասնչորսերորդ դարից սկսած, թուրքական և մոնղոլական ավերածությունները, ինչպես նաև երկրաշարժերը շատ բան ոչընչացրին, բայց և այնպես տաճարների և շենքերի այնքան շատ

ավերակներ են մնացել, որ ոչ տարերքը, և ոչ էլ մարդիկ, երբեք
չեն կարողանա կործանել հայերի այդքան հոյակապ, պատկառելի
այս սրբարանը:

ԼՈՒԻԶԱ ՄՈՆՇՈՏԻ
(Թարգմանություն ֆրանսերենից)



26 մայիսի 1903 թ.

Եկանք ուխտի Անի և գիտենալով եկեղեցիների սրբազան
անոթներից բոլորովին զուրկ լինելը՝ ընծայաբերինք Մայր Եկեղե-
ցուն մի արծաթյա սկիհ, հույս ունենալով, որ ամեն մի այցելու
իրեն պարտքը կհամարե անշքացած Անիի տաճարները ամեն
կերպ զարդարելու:

Հայ դերասանական խմբի անդամներ՝
ՍԻՐԱՆՈՒՅՇ, Մ. ԱՎԵՏՅԱՆ, ԱԶՆԻՎ, ՓԱՌԱՆԶԵՄ,
Ա. ՎՐՈՒՅՐ, Մ. ԱՂԱՅԱՆ, ԳՐ. ԱՎԵՏՅԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ,
Ա. ԳՈՒԼՅԱՆ, Հ. ԲԵՐՈՅԱՆ, Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Անին մեծ գիրք է, դեռ լավ չկարդացված և չուսումնասիրված
մի գիրք, որ պարունակում է հարուստ նյութ հայոց անցյալ կյան-
քի թե՛ քաղաքական և թե՛ կենցաղավարական, տնտեսական ու
առհասարակ հայերի կուլտուրական և աշխարհաշինական ընտ...:
Անիի ուսումնասիրությունը ընդարձակ ծրագրով... ապագայի գործ
է: Ահա այն տպավորությունը, որ ինձ վրա թողեց Անին երեք ան-
գամ այցելություններիս միջոցին:

Ա. ԲԱԼԱՆԹԱՐ¹

¹ Ալեքսանդր Բալանթար (1855—1913): Ականալոր հասարակական գոր-
ծիչ, «Մշակ» թերթի երկարամյա խմբագիր:

Այո, բայց խոսքից ավելի գործ է հարկավոր մեզ պես ժողովրդին.

Ա. ԲԱԲԱԽԱՆՅԱՆ²

Հունիս 27, 1903 թ.

7 հուլիսի 1903 թ.

Ահա գեթ ավերակներ, որոնք միայն բեկորներ և ավերակներ են, որոնց մնացորդները ցույց են տալիս, թե նախկինում ինչ են եղել: Գուցե Անին իր բարգավաճման ժամանակ երբեք այսքան գեղեցիկ, տպավորիչ չի եղել, քան այժմ և ժամանակը՝ այդ մեծ քանդակագործը, իր գործը կատարել է այնտեղ: Այստեղ պետք է շրջագայել առանձնապես պայծառ լուսնով. պայծառ լուսնի ժամանակ տեսարանը անմոռանալի է:

Մաղթենք, որ հնագետները քարուքանդ չանեն այդ ավերակները:

Ֆրանսիական բանակի ինժեներ, կապիտան
(ստորագրությունն անընթեռնելի է)
(թարգմանություն ֆրանսերենից)

5 սեպտեմբերի 1903 թ.

Անիի ավերակների այցելությունից հետո ես ինձ հետ տանում եմ իմ կյանքի լավագույն հիշատակներից մեկը: Ցավում եմ, որ բացակայում են անհրաժեշտ վերաբերմունք և խնամք լավա-

² Ա. Բարախանյան (Աեռ) (1860—1932) — Հայ ախանավոր հրապարակախոս, պատմաբան և բանասեր:

գոյն ձևով պահպանելու հայկական անտիկ և հզոր քաղաքակրթության մնացորդները:

ՎԻՏՏՈՐԻՈ ԴԻ ՄՍՏՏԵԱ
(Թարգմանությունն իտալերենից)



24 հունիսի 1904 թ.

Ես էլ եկա, տեսի ու ողբացի այս դավթարի վրա:

* * *

Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,
Մենք հույսեր ունենք պահած մեր սրտում.
Մի՞թե հավիտյան կողքանք ավերակ,
Մի՞թե հավիտյան կմնանք տրտում:

Ը. ԹՈՒՄԱՆՅԱՆ¹



12/25 մայիսի 1904 թ.

Գտնվելով Անիում և հիանալով նրա վեհությանը, նրբությանը ու հիասքանչ ճարտարապետության ինքնատիպությանը, ակամայից ես պացա դեպի մի ուրիշ, իտալական քաղաք, նույնպես կործանված՝ քսան դար առաջ: Ես մտքով տեսա Պոմպեյը՝ Վեզուվի զոհը, և հրաբխի կործանիչ ուժը համեմատեցի մարդու կործանարար կատաղության հետ, որի զոհը դարձավ հիասքանչ Անին: Սակայն ո՛չ մեկը և ո՛չ մյուսը չկարողացան ոչնչացնել նորը մշակույթի տեր ժողովուրդներին: Իտալիան արդեն վերակենդանացավ: Կմաղթեմ, որպեսզի շուտով գա այն օրը, երբ Հա-

¹ Բանաստեղծությունից հետո, Հովհաննես Թումանյանի ստորագրության կողքին կա նաև ականավոր պատմաբան Հ. Մանանդյանի ինքնագիրը:

յատուանը կվերածնվի: Այդ ժամանակ նրա ժողովուրդը կհանդի-
սանա նոր և շքեղ մշակույթի ջահակիրը Ասիայի բոլոր ժողո-
վուրդների համար, որոնք այլևս ունենալու են անի իրենց
ազատարարին, զգալով և հասկանալով այլևս ոչ թե ազգային,
այլ համամարդկային մշակույթի օգուտները:

ՄԱՍԻՄՈ ՖՈՇԵ ԴԵ ՄԱՆՏԵՖՖԵԼ
(թարգմանություն իտալերենից)



Սեր դեպի ազգությունը...

ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ

1906 թ. հունիս 19

Ա Ն Ի



1913 թ. հունվարի 13-ին, երբ ես այցելեցի այս հայկական եր-
բեմնի մեծ մայրաքաղաքը և այն, ինչ որ այստեղ տեսա, ինձ վրա
թողեց ճնշող և շշմեցնող տպավորություն: Ես հիացած էի այն ար-
վեստով, որին տիրապետել են հայերը այն ժամանակ, երբ մեզ
մոտ մշակույթը կանգնած էր ամենացածր մակարդակի վրա, և այդ-
բոլորը խորտակված, կործանված պատերազմների ու երկրաշար-
ժերի հետևանքով: Ինչքան ծանր է այդ բոլորը դիտել: Ցավում եմ,
որ ես ընտրեցի անհաջող ժամանակ (ձմեռը), որպեսզի ման-
րագնին ուսումնասիրեի հարգելի պրոֆեսոր Մառի կատարած
պեղումները, որին ի սրտե ցանկանում եմ մեծ հաջողություններ
նոր նյութեր պեղելու գործում, որոնք լինելու են մեզ և մեր ժա-
նանգների համար թանկագին և սրբազան հուշարձաններ: Հու-
սով եմ, որ մի անգամ ևս, բայց արդեն ամռանը, իմ կինեմատո-
գրաֆը հետո վերցրած կայցելեմ ավերակները, որպեսզի նկարա-
հանեմ այն բոլորը, ինչ-որ ձյան տակ էր և հնարավոր չեղավ ոչ
միայն նկարահանելու, այլև նույնիսկ դիտելու: Խորհուրդ եմ տա-

լիս հնութիան սիրահարներին այցելել այս ավերակները, մանավանդ մեզ՝ ուսանելիս: Չէ որ այս պեղումները քիչ են զիջում հրոշակավոր Պոմպեյի պեղումներին:

ՖԻԴԻԻՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՎԻՉ ՎԵՐԻԳՈ ԴԱՐՈՎՍԿԻ
Մոսկվա

(թարգմանությունն ուսերենից)



22—23 հունիսի 1913 թ.

Կարող եմ նկարագրել ինչ որ տեսել եմ, բայց բառեր չկան, շատ թույլ, անգույն դուրս կգան զգացմունքները, ինչ որ վերապրեցի դիտելով Հայաստանի նախկին մայրաքաղաքը և Անիի թանգարանը: Ցավում եմ, որ ծնվել եմք 20-րդ դարում: Ցանկանում եմ, որ Մառը և իր աշխատակիցները պեղեն ավելի հետաքրքիր իրեր ու մասունքներ, որոնք էլ ավելի ցայտուն կերպով կարտացոլեն Հայաստանի բարգավաճման դարաշրջանը:

ՍԱՎԵԼԵՎ

1913 թ. 27—29 կազմակերպվող գյուղատնտեսական ցուցահանդեսի ղեկավար և աշխատակից:
Ալեքսանդրապոլ

(թարգմանությունն ուսերենից)



Անհուն խնդություն եմ վերապրում, որ ինձ էլ, մի անազատ կիսաստրուկի, նակատագիրը պարգևել է մի ազատ ու գեղեցիկ օր, և ցույց է տվել Բագրատունիների հրոշակավոր մայրաքաղաքը: Դժվար է արտահայտել այն բարդ զգացմունքները, որոնք տիրեցին իմ հոգուն, երբեմնի հզոր և փառավոր ժողովրդի կործանված կյանքի մնացորդները դիտելիս:

Դա և թախիծ էր, և հիացմունք ու ուրախություն, որ ինձ վիճակվեց դիտելու այս փառավոր փլատակները:

Դիտելով դարերի ընթացքում զարմանալի կերպով պահպանված ամրությունների հզոր պատերը, ինձ թվում էր, որ անցյալ կյանքի ոգին դեռ մնում է այս այեհեր բեկորների մեջ, որը ապրում, գուցե և ողբում է կործանված թագավորությունը և ժողովրդի կորցրած ազատությունն ու ինքնուրույնությունը:

Մի՞թե այս ժողովուրդը չի վերածնվի, մի՞թե նա չի ունենալու իր նոր Անին:

Ռուսական բանակի զինվոր
ՄԻԽԱՅԻԼ ՌՈՄԱՆՈՎ, Ալեքսանդրապոլից
(թարգմանությունն ուսերենից)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան	8
Դեպի Աճի	7
Աճիի բնակիչները	8
Զրկիր Կյաստն	17
Փոստատար Տիգոն	18
Ալեքսանդրա Ալեքսեննա	20
Մանկության օրեր	22
Սիրանույշը	24
Պեղումներ	24
«Խելառը» քավոր	26
Ծարտարապետը	29
Երկաթե Պատրիարքը Աճիում	30
Երևույթներ	32
Տարիներ անց	35
Ծանր գիշերներ	37
Երկու անախորժ ու ցավալի միջադեպ	41
Աստվածածնա օրերը Աճիում	42
Կատակ միջադեպ	45
1915 թվական	48
1916 թվական	55
1917 թվական	92
Ծակատագրական սև գիշեր	94
Պատառիկներ Աճիի մատյանից	111

ԱՐՏԱՇԵՍ ԱՐԱՄԻ ՎՐՈՒՅՐ

ԱՆՈՒՄ

(Հուշեր)



Арташес Арамович Вруйр

В А Н И

(Воспоминания)

(На армянском языке)

Издательство «Советакан ցрох»

Ереван—1979



Խմբագիր՝ Յ. Ա. Մարկոսյան

Նկարիչ՝ Վ. Ա. Վարդանյան

Գեղ. խմբագիր՝ Յզ. Ա. Ասատրյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Մ. Սիմոնյան

Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Ա. Կարապետյան



ИБ № 2464

Հանձնված է շարվածքի 10. 6. 79: Ստորաօժիտված է տպագրության 6. 8. 79 թ.:
ՎՖ 03678: Ֆորմատ՝ 70×90^{1/10}: Թուղթ՝ տպագրական № 1: Տառատեսակ՝
«Նորք»: Տպագրություն՝ բարձր: 8,77 պայմ. տպ. մամ., հրատ. 6,15 մամ. 27
ներդիր: Տպարանակ 10.000: Պատվեր 10: Գինը՝ 1ռ. 20կ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Советакан грох», Ереван—9, Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան—82,
Էջմիածնի խճուղի, 48:

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам
издательств, полиграфии и книжной торговли, Ереван—82,
Эчмиадзинское шоссе, 48.





